Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

1452

491.99
V-99

2002

2010

491.99
Մ-99

# ՆՈՐ ԸՆԹԱՑՔ

## ԳՐԱԲԱՌ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՄԱՆ

489

ՅՕՐԻՆԵԱՑ

Եփ ՄՈՒՐԱՏԵԱՆ

ՀԱՏՈՐ Ա.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

— 1868 —

Մ-99

## ԱԶԴ

Դաստիարակութեան պաշտօնին կոչուած ըլլալով՝
երկար ժամանակէ ի վեր այսպիսի դասագրքի մը պէտ-
քը կ'ըզգայի · Թէպէտև դաստիարակութեանս ընթաց-
քը արդէն այս ոճին վրայ կը շարունակէի գրաւոր · սա-
կայն մինչև ցարդ առիթ չ'ունեցայ զայն տպագրու-
թեամբ ի լոյս հանելու ։

Հիմա որ պարագայները իմ բաղձանքս լրացուցին ·
կը յուսամ որ փոքրիկ գործոյս դիւրուսոյց ոճը , գնոյն
աժանութիւնը՝ Մեծ. Ուսուցչաց համակրութեանը զիս
կ'արժանացնեն և կարող կ'ընեն արդէն ձեռնարկած
երկրորդ հատորն ալ ի լոյս ընծայել ի պէտս զար-
գացելոց , որուն մէջ խօսքին չափաւորութիւնը , հոմանիշ բա-
ռերու և ճարտասանութեան այլևայլ ձևերու վրայ տեղե-
կութիւններ պիտի տրուին ։

57665 Ա-կ.

38061-67

Առ

Վսեմափայլ Ստեփան Պէյ Ասլանեան

Ազգասէր Տէր

Ազգային մանկտւոյն մայրենի լեզուին մէջ զարգացընելու համար Ձեր Վսեմութեան ունեցած ազնիւ եռանդը գիտնալով, կը համարձակիմ այս գործս աշխատութիւնս Ձեր Վսեմութեան անուանը նուիրել ։

Ընդունեցէք, Վսեմափայլ Պէյ
Իմ խորին յարգանացս հաւաստիքը

ԵՂԻԱԶԱՐ ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԿԱՆՈՆ Ա․ Անորոշ և անցեալ դերբայներուն սեռական տէրբային աշխարհաբարի մէջ ուղղականի կը թարգմանուի․ ինչպէս․ Տեսեալ Յիսուսի․ աշխարհաբար Յիսուս․ տեսնելով։

ԿԱՆՈՆ Բ․ Երբեմն ալ անորոշ և անցեալ տէրբայները աշխարհաբարի մէջ դիմաւոր բայի կը թարգմանուին խօսքին պարզութեանը համար․ ինչպէս․ Ի ժողովել Պօղոսի․ — Երբ Պօղոս կը ժողվէր։ Տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա ասէ․ — Յիսուս երբ տեսաւ անոնց հաւատքը կ'ըսէ։ Այս պարագայիս մէջ դիմաւոր բայինհետ երբ մակբայը կամ չէ՝ աշխարհաբար ու շաղկապը կը գործածուի․ — Ինչպէս․ ակնարկէին որսակցացն գալ օգնել նոցա․ այսինքն՝ աչք կընէին որսի ընկերներուն՝ որ գան իրենց օգնեն։

# ԱՒԵՏԱՐԱՆ

Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս Մկրտիչ քարոզել յանապատին Հրէաստանի եւ ասել. ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւնն երկնից։

Եւ ինքն Յովհաննէս ունէր հանդերձ ի ստեւոյ (մազէ) ուղտու եւ գօտի մաշկեղէն (կաշիէ) ընդ մէջ իւր (զոր. ունէր կամ կը կապէր) եւ կերակուր նորա էր մարախ եւ մեղր վայրենի։ Յայնժամ ելանէին առ նա ամենայն Երուսաղէմացիք եւ ամենայն Հրէաստան՝ եւ ամենայն կողմն Յորդանանու. եւ մկրտէին ՚ի նմանէ ՚ի Յորդանան գետ, եւ խոստովան լինէին զմեղս իւրեանց։ Եւ տեսեալ զբազումս ի Սադուկեցւոց եւ ի Փարիսեցւոց եկեալս (եկող) ՚ի մկրտութիւն նորա, ասէ ցնոսա. ծնունդք իժից, ո՞ եցոյց ձեզ փախչել ի բարկութենէն որ գալոց է։ Արարէք այսուհետեւ պտուղ արժանի ապաշխարութեան։ Եւ մի համարիցիք ասել յանձինս՝ թէ ունիմք մեք հայր զԱբրահամ. ասեմ ձեզ, զի կարող է Աս-



տուած ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու։ Զի ահաւասիկ տապար առ արմին (արմատ) ծառոց դնի. ամենայն ծառ որ ոչ առնիցէ զպտուղ բարի՝ հատանի եւ ի հուր արկանի։ Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն՝ (ապաշխարութեան համար*) բայց որ զկնի իմ գայ՝ հզօրագոյն** (աւելի զօրաւոր) է քան զիս. եւ ես չեմ բաւական (արժանի, կարող) բառնալ զկօշիկս նորա, նա մկրտեսցէ զձեզ ի Հոգին Սուրբ եւ ի հուր։***

Որոյ հեծանոցն ի ձեռին իւրում (զոր. է) եւ սրբեսցէ զկալ իւր եւ ժողովեսցէ զցորեանն ի շտեմարանս իւր եւ զյարդն այրեսցէ անշէջ հրով։ Յայնժամ գայ Յիսուս ի Գալիլեէ ի Յորդանան առ Յովհաննէս մկրտել ի նմանէ։ Եւ Յովհաննէս արգելու զնա եւ ասէ. ինձ պիտոյ է ի քէն մկրտիլ՝ եւ դու առ իս գաս։ Պա-

---

* Նախդիրն տրականը՝ համար ալ կը նշանակէ։

** Ածականները գոյն մասնիկին առնելով իրենց զօրութիւնը կ'աւելցնեն։

*** Նախդիրն տրականը գործիականի կը թարգմանուի երբեմն։

պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա. Թոյլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ լը-նուլ (կատարել) զամենայն արդարութիւն. և ապա թոյլ ետ նմա:

Մատթ. Գլ. Դ:

Յայնժամ վարեցաւ Յիսուս յանա-պատ ի Հոգւոյն՝ փորձել ի սատանայէ: Եւ պահեալ (ծոմ պահել) զքառասուն տիւ և զքառասուն գիշեր* ապա քաղ-ցեաւ (անօթեցաւ): Եւ մատուցեալ փոր-ձիչն ասէ ցնա. եթէ որդի ես Աստու-ծոյ՝ ասա զի քարինքս այսոքիկ հաց լինի-ցին: Նա պատասխանի ետ և ասէ, գրե-ալ է՝ եթէ ոչ հացիւ միայն կեցցէ (կ'ապ-րի) մարդ՝ այլ ամենայն բանիւ որ ելա-նէ ի բերանոյ Աստուծոյ: Յայնժամ առ-եալ ածէ զնա սատանայ ի քաղաքն սուրբ և կացուցանէ ի վերայ աշտարակի տա-ճարին. և ասէ ցնա. եթէ որդի ես Ա-ստուծոյ՝ արկ զքեզ աստի ի վայր. զի գրե-ալ է թէ հրեշտակաց իւրոց պատուիրե-ալ է վասն քո, և ի վերայ ձեռաց բարձ-

* Ժամանակ ցուցնող անունները հայցական են. ինչ. կ'ըլլան:



ցեն (վերցնեն) զքեզ՝ զի մի երբեք հար-ցես զքարի զոտն քո: Ասէ ցնա դարձ-եալ Յիսուս. գրեալ է՝ թէ ոչ փորձես-ցես զտէր Աստուած քո: Դարձեալ առ-նու ածէ (բերէ, տանի) ի լեառն մի բարձր յոյժ, և ցուցանէ նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի, և զփառս նոցա. և ասէ ցնա. զայս ամենայն քեզ տաց՝ եթէ անկեալ երկիր պագանիցես ինձ:

Յայնժամ ասէ ցնա Յիսուս. երթ յետս իմ (կորի՛ր) սատանայ. զի գրեալ է՝ Տեառն Աստուծոյ քում երկիր պագցես և զնա միայն պաշտեսցես: Ապա եթող զնա սատանայ. և ահա հրեշտակք մատ-եան՝ և պաշտէին զնա (անոր կը ծառայէին. սպասաւորութիւն կ'ընէին):

Մինչդեռ գնայր (կը պտըտէր) Յիսուս առ եզր ծովուն Գալիլեացւոց, ետես երկուս եղբարս՝ զՍիմոն զկոչեցեալն Պետ-րոս և զԱնդրէաս եղբայր նորա՝ արկ-եալ ուռկան ի ծով. քանզի ձկնորսք էին: Եւ ասէ ցնոսա. եկայք զկնի իմ, և արա-րից զձեզ որսորդս մարդկան: Եւ նոցա

թողեալ վաղվաղակի զգործիսն՝ գնացին
զհետ (ետեւէն) նորա։ Եւ մատուցեալ
անտի յառաջ (անկէ առաջ երթալով) ե-
տես այլ (ուրիշ) երկուս եղբարս՝ զՅա-
կոբոս Զեբեդեայ և զՅովհաննէս զեղ-
բայր նորա ի նաւի՝ Զեբեդեաւ հան-
դերձ հարբն իւրեանց, մինչդեռ կազմէ-
ին (կը նորոգէին) զուռկանս իւրեանց, և
կոչեաց զնոսա։ Նոքա թողեալ վաղվա-
ղակի զնաւն և զհայրն իւրեանց, գնացին
զհետ նորա։ Եւ շրջէր Յիսուս ընդ ա-
մենայն կողմն Գալիլեացւոց. ուսուցա-
նէր ի ժողովուրդս (ժողովարան) նոցա՝
և քարոզէր զաւետարանն արքայութեան,
և բժշկէր զամենայն հիւանդութիւնս՝ և
զամենայն ախտս ի ժողովրդեանն։ Եւ
ել լուր նորա (անոր անունը տարածուեցաւ)
ընդ ամենայն երկիրն Ասորւոց, և մա-
տուցին առ նա* (անոր բերին) զամենայն
հիւանդս՝ և որ նեղեալ էին ի պէս-

---

* Առ նախդիրը Ի, Յ, նախդրի տեղ կը գործած-
ուի անձանց անուններու վրայ։ Հոս նա Յիսուսի տեղ
գրուած է։



պէս (տեսակ տեսակ) ցաւս և ի տանջանս,
և զդիւահարս, և զլուսնոտս (լուսնոտ, սա-
րալը) և զանդամալոյծս. և բժշկեաց զնո-
սա։ Մատթ. Գլ. Դ։

Յայնժամ խօսեցաւ Յիսուս ընդ ժո-
ղովուրդսն՝ և ընդ աշակերտսն իւր, և ա-
սէ. Յաթոռն Մովսէսի նստան դպիրքն
և փարիսեցիք. զամենայն ինչ զոր ասի-
ցեն ձեզ՝ արարէք և պահեցէք (միտք պա-
հեցէք, բռնեցէք). բայց ըստ գործոյն նո-
ցա մի առնէք. զի ասեն՝ և ոչ առնեն.
կապեն բեռինս ծանունս (ծանր) և դըժ-
ուարակիրս (տանելու դժուար) և դնեն ի
վերայ ուսոց մարդկան. և մատամբ իւ-
րեանց ոչ կամին շարժել զնոսա։ Եւ զա-
մենայն զգործս իւրեանց առնեն ի ցոյց
մարդկան, լայնեն (կը լայնցնեն) զգրապա-
նակս իւրեանց, և երկայնեն զքղանցս
հանդերձից իւրեանց։ Սիրեն զյառաջա-
գահս (վերի կողմ) յընթրիս (ճաշերու ատեն.
սեղանի վրայ)։ Մատթ. Գլ. ԻԳ։

Եւ իբրև կատարեաց Յիսուս զամե-

նայն զբանս զայսոսիկ, ասէ ցաշակերտսն* իւր. գիտէ՞ք, զի յետ երկուց աւուրց զատիկ լինի. և որդի մարդոյ մատնի ի խաչ ելանել։

Յայնժամ ժողովեցան քահանայապետքն և դպիրքն և ծերք ժողովրդեանն ի սրահ քահանայապետին՝ որում անուն էր Կայիափա. և արարին խորհուրդ զի նենգութեամբ կալցին զՅիսուս և սպանցեն։ Բայց ասէին, զի մի ի տօնի աստ (այս տօնին ատենը) զի մի խռովութիւն լիցի ի ժողովրդեանն։ Իբրև եղև Յիսուս ի Բեթանիա, ի տան Սիմոնի բորոտի, մատեաւ առ նա կին մի՝ որ ունէր շիշ իւղոյ մեծագնի (ծանրագին իւղը շիշ), և թափեաց ի գլուխ նորա (գլխուն վրայ) ի բազմականին (նստողներուն տեղը, հրաւիրականը)։ Իբրև տեսին աշակերտքն՝ բարկացան՝ և ասեն, ընդէ՞ր է կորուստ (ինչու այսպէս կորսուէր) այդ իւղոյդ։ Զի մարթ էր (կրնար, կարելի էր) վաճառել զդա մեծագնի, և

* Ըսել, հարցանել, տալ բայերը ց նախդիրը ու-րանց խնդիր կառնեն ։



տալ աղքատաց։ Գիտաց Յիսուս, և ասէ ցնոսա. զի՞ աշխատ առնէք (ինչու կ՚անարգէք) զկինդ, գործ մի բարի գործեաց դա յիս։ Զամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, բայց զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք։

Եւ յաւուր առաջնում բաղարջակերացն մատեան աշակերտքն առ Յիսուս և ասեն. ո՞ւր կամիս զի պատրաստեսցուք քեզ ուտել զզատիկն։ Եւ նա ասէ ցնոսա, երթայք ի քաղաքն առ այս անուն (այս ինչ մարդուն) և ասացէք ցնա. վարդապետ ասէ. ժամանակ իմ մերձեալ է, առ քեզ առնեմ զզատիկս աշակերտօքս հանդերձ։ Եւ արարին աշակերտքն որպէս հրամայեաց նոցա Յիսուս՝ և պատրաստեցին զզատիկն։ Եւ իբրև երեկոյ եղև, կայր բազմեալ ընդ երկոտասան աշակերտսն։ Եւ մինչդեռ ուտէին նոքա, ասէ. ամէն (իրաւ) ասեմ ձեզ, զի մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս։ Եւ տրտմեցան յոյժ. սկսան ասել ցնա իւրաքանչիւր ոք ի նոցանէ, միթէ ես իցեմ տէր։

Մատթ. Գլ. ԻԶ։

Ժողովեցան առաքեալքն առ Յիսուս, և պատմեցին նմա զամենայն ինչ զոր արարին և զոր ուսուցին: Եւ ասէ ցնոսա Յիսուս. եկայք դուք առանձինն (մինակ) յանապատ տեղի և հանգչիք սակաւ մի, զի էին բազումք որ երթային և գային, և հաց անգամ չժամանէին (չէին հասնէր) ուտել: Եւ գնացին նաւու յանապատ տեղի առանձինն: Եւ տեսին զնոսա զի երթային և զգացին (ճանչցան) բազումք. և հետի (ոտքով) յամենայն քաղաքաց խուռն ([illegible]) ընթանային անդր. և մերձենային առ նոսա: Եւ ելեալ ետես ամբոխ բազում (մեծ բազմութիւն), գթացաւ ի նոսա, զի էին իբրև ոչխարք՝ որոց ոչ իցէ հովիւ. և սկսաւ ուսուցանել զնոսա յոյժ: Եւ իբրև բազում ժամ եղև (շատ ժամ անցաւ), մատուցեալ աշակերտքն ասէին. տեղիս անապատ է, մինչդեռ աւուր կայ ([illegible]) արձակեա զժողովուրդդ, զի երթեալ շուրջ ([illegible]) յագարակս և ի գիւղս՝ գնեսցեն իւրեանց զինչ ուտիցեն ([illegible]) զի



սա զինչ ուտել ոչ ունին ([illegible]): Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. դուք տուք դոցա ուտել. ասեն ցնա՝ երթիցուք գնեսցուք երկերիւր դահեկանի հաց, և տացուք դոցա ուտել: Ասէ ցնոսա, քանի՞ նկանակ ունիք՝ երթայք տեսէք, իբրև գիտացին՝ ասեն ցնա՝ հինգ՝ և երկուս ձկունս (զոր. [illegible]): Եւ հրամայեաց նոցա բազմել երախանս երախանս, ([illegible]) ի վերայ դալար խոտոյ, և բազմեցան դասք դասք ըստ հարիւր և ըստ յիսուն ([illegible]): Եւ առեալ զհինգ նկանակսն և զերկուս ձկունսն. հայեցաւ յերկինս, օրհնեաց՝ մանրեաց զնկանակսն՝ և ետ աշակերտացն զի արկցեն ([illegible]) նոցա, և զերկուս ձկունսն բաշխեաց ամենեցուն: Եկերան և յագեցան ([illegible]) և բարձին զնշխարս ([illegible]) երկոտասան սակառի* լի, և ի ձկանց անտի ([illegible]): Եւ էին որ

* [illegible] բառերը [illegible] կրկնել [illegible]:

կերամն՝ իբրև արք հինգ հազար (հէնգ հազարի չաք):

Եւ նոյնժամայն ստիպեաց (զօռլայարաք) զաշակերտսն մտանել ի նաւ և յառաջագոյն քան զնա երթալ յայնկոյս (ան-տէրի կըյը) ի Բեթսայիդա, մինչ ինքն զժողովուրդն արձակիցէ: Եւ հրաժարեալ ի նոցանէ (այրըլըպ) ել ի լեառն կալ յաղօթս: Եւ իբրև երեկոյ եղև կայր նաւն ի մէջ ծովուն, և ինքն ի ցամաքի: Եւ ետես զնոսա հողմակոծեալ (ֆուրթունէ հանտըրլմըշ) ի վարել (նաւալ էյլէմէ-քտէն). զի էր հողմն ընդդէմ նոցա. և զչորրորդ պահու գիշերոյ (ժամը չօրտին) գայ առ նոսա գնալով (եուրիւյէրէկ) ի վերայ ծովուն, և կամէր զանց առնել առ նոքօք (չէքմէկ իստէրտի, անլարին եանընտան):

Նոքա իբրև տեսին զի գնայր ի վերայ ծովուն, համարեցան թէ առ աչօք ինչ լինիցի (աչըքլարըն ալտանմասը), և զաղաղակ բարձին (պօռռայտըլար): Քանզի ամենեքեան տեսին զնա. և խռովեցան (շաշըրտըլար, ղօրխտըլար): Եւ նա անդէն վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա և ասէ.



քաջալերացարուք (մէրթ օլուն), ես եմ՝ մի երկնչիք: Եւ ել ի նաւն առ նոսա և դադարեաց հողմն:

Մարկ. Գլ. Ժ:

Եւ անտի յարուցեալ գայ ի սահմանս Հրէաստանի յայնկոյս Յորդանանու. և երթայր դարձեալ խռնեալ ժողովուրդն առ նա, և որպէս սովոր էր (ինչպէս ա-լըշմըշ իտի) միւսանգամ (նօրէն) ուսուցանէր զնոսա: Իսկ փարիսեցիքն մատուցեալ փորձելով հարցանէին զնա՝ և ասէին. եթէ արժա՞ն իցէ (լայըք է) առն զկին իւր արձակել: Նա պատասխանի ետ նոցա և ասէ. զի՞նչ պատուիրեաց ձեզ Մովսէս: Եւ նոքա ասեն. Մովսէս հրաման ետ գիր մեկնելոյ (պօշամալը) գրել, և արձակել: Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա. վասն խստասրտութեան ձերոյ գրեաց ձեզ զպատուիրանն զայն:

Եւ մատուցանէին առ նա մանկտի (չօճուք) զի ձեռն դիցէ նոցա. իսկ աշակերտքն սաստէին այնոցիկ որ մատուցանէին (գէթիրէնլէրէ): Իբրև ետես Յի.

սուս՝ բարկացեալ սաստեաց նոցա և ասէ. Թոյլ տուք մանկտւոյդ գալ առ իս, և մի՛ արգելուք զդոսա. զի այդպիսեաց է արքայութիւն Աստուծոյ: Ամէն ասեմ ձեզ՝ որ ոչ ընկալցի զարքայութիւն Աստուծոյ իբրև զմանուկ, ոչ մտցէ ի նա: Եւ առեալ զնոսա ի գիրկս, ձեռն եդ ի վերայ և օրհնեաց զնոսա: Եւ ընդ ելանելն նորա անտի ի ճանապարհ, աճապարեալ մի մեծատուն ընթացեալ (վազելով) ի ծունր իջանէր (ծնկան վրայ կուգար) և հարցանէր և ասէր. Վարդապետ բարի՝ զինչ արարից՝ զի զկեանսն յաւիտենականս ժառանգեցից: Եւ Յիսուս ասէ ցնա. զի՞ ասես զիս բարի, չիք ոք բարի՝ բայց մի Աստուած: Զպատուիրանսն գիտես. մի՛ շնար, մի՛ գողանար, մի՛ սպանաներ մի՛ սուտ վկայեր. պատուեա զհայր քո և զմայր: Նա պատասխանի ետ և ասէ ցնա՝ Վարդապետ՝ զայդ ամենայն արարի ի մանկութենէ իմմէ, արդ՝ զինչ* եւս պակաս

* Զինչ՝ ինչ բառը ամէն հոլովի տեղ կը գործածուի հոս գործիականի տեղ դրուած է, այսինքն ինչով պակաս կը գտնուիմ



լիցիմ: Եւ Յիսուս հայեցեալ ի նա՝ սիրեաց զնա, և ասէ ցնա, մի ինչ պակաս է ի քեզ, եթէ կամիս կատարեալ լինել՝ երթ զոր ինչ ունիս՝ վաճառեա՝ և տուր աղքատաց, և ունիցիս գանձս յերկինս, և առ զխաչն՝ և եկ զկնի իմ: Եւ նա խոժոռեալ (տրտմելով. դէմք կախելով) ընդ բանն՝ գնաց տրտում, զի ունէր ինչս բազում: Եւ հայեցեալ յայսկոյս յայնկոյս Յիսուս, ասէ ցաշակերտսն, զիա՞րդ դժուարին է մեծատանն մտանել յարքայութիւն Աստուծոյ: Եւ աշակերտքն զարմացեալ էին ի վերայ բանիցն նորա. իսկ Յիսուս դարձեալ պատասխանի ետ նոցա և ասէ. որդեակք, որչափ դժուարին է յուսացելոց (ապաւինող) յինչս (ունեցած, ստացուածք) մտանել յարքայութիւն Աստուծոյ: Դիւրին է մալխոյ (հաստ չուան) ընդ ծակ* ասղան անցանել քան մեծատան յարքայութիւնն Աստուծոյ մտանել: Եւ նոքա առաւել ևս զարմա-

* Տեղէ մ'անցքին անցնիլ նշանակելու համար ընդ նախդիրն տրական կը գործածուի.

նոցին՝ և ասէին ցմիմեանս, և ո՞ կարասցէ ապրել։ Հայեցեալ ընդ նոսա Յիսուս՝ ասէ, առ ի մարդկանէ (մարդոց համար) այդ անհնարին է, այլ ոչ առ ի յԱստուծոյ։

Եւ առեալ միւսանգամ զերկոտասանսն առանձինն, սկսաւ ասել նոցա զինչ ինչ անցանելոց իցեն ընդ նա (անոր գլխէն ինչեր պիտի անցնէին)։ Եւ ասէ. ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ, և որդի մարդոյ մատնեսցի քահանայապետից և դպրաց, և դատեսցեն զնա ի մահ (մահուան դատապարտեն), և մատնեսցեն զնա հեթանոսաց. և կատակեսցեն զնովաւ (անիկա ծաղրեն) և հարկանիցեն զնա. և թքանիցեն ի նա, և սպանցեն, և յերիր աւուր յարիցէ. (երրորդ օրը կամ երեք օրէն)։ Եւ երթային առ նովաւ (անոր քովէն) Յակոբոս և Յովհաննէս՝ որդիքն Զեբեդեայ, և ասեն ցնա. վարդապետ՝ կամիմք զի զոր ինչ (ինչ որ) խնդրեսցուք ի քէն արասցես (ըրէ) մեզ։ Եւ նա ասէ ցնոսա. զի՞նչ կամիք յինէն՝ զի արարից ձեզ։ Եւ նոքա



ասեն ցնա, տուր մեզ՝ (հրաման ըրէ) զի նստցուք մի յաջմէ (աջ կողմը) քումմէ և մի յահեկէ (ձախ կողմը)։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. ոչ գիտէք զինչ խնդրէք (ուզածնիդ չգիտէք)։

Մարկ. գլ. ժ։

Եւ յելանելն նորա ի տաճարէ անտի, ասէ ցնա մի յաշակերտաց նորա. Վարդապետ, տես որպիսի են քարինքս և որպիսի շինուածք։ Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. տեսանե՞ս զայդ ամենայն շինուած. ամէն ասեմ (իրաւ կ'ըսեմ)՝ եթէ ոչ թողցի այդր քար ի քարի վերայ* որ ոչ քակտեսցի։ Եւ մինչ նստէր նա ի լերինն ձիթենեաց յանդիման տաճարին, հարցանէին ցնա առանձինն՝ Պետրոս և Յակոբոս և Յովհաննէս և Անդրէաս. ասա մեզ՝ երբ լինիցի այդ և զի՞նչ նշան իցէ (ի՞նչ է նշանակը) յորժամ կատարելոց իցէ այդ ամենայն։ Պատասխանի ետ Յիսուս, և ասէ ցնոսա. զգոյշ

* Նախադասութեան խնդիրը եթէ առաջ դրուի՝ անոր նախդիրը ինքը կ'առնէ, փոխանակ ըսելու ի վերայ քարի՝ կ'ըսուի ի քարի վերայ։



38061-67

կայցէք, մի ոք զձեզ խաբեսցէ։ Զի բա-
զումք եկեսցեն յանուն իմ, և ասիցեն՝
թէ ես եմ Քրիստոսն, և զբազումս մո-
լորեցուսցեն։

Այլ յորժամ լսիցէք պատերազ-
մունս և համբաւս պատերազմաց՝ մի
խռովիցիք, զի պարտ է լինել, բայց չև է
կատարած (դեռ ծէրը հասած չէ)։ Զի
յարիցէ ազգ յազգի վերայ և թագա-
ւորութիւն ի թագաւորութեան վերայ.
և եղիցին շարժմունք ի տեղիս տեղիս,
սով և սրածութիւնք պատերազմի, և
խռովութիւնք։ Եւ զձեզ իսկ մատնեսցեն
յատեանս, ի ժողովուրդս տանջիցիք, և
առաջի դատաւորաց և թագաւորաց
կայցէք վասն իմ ի վկայութիւն նոցա,
և ամենայն հեթանոսաց։

Յայնժամ եթէ ոք ասիցէ ձեզ, ե-
լէ (հոս եթէ չթարգմանուէր, սար վըրայ ջէն
մը վէրջ ծանօթութիւն փոխած էնք։) Ահաւա-
սիկ է (հոս է) Քրիստոսն կամ աւանիկ
(հոն) մի հաւատայցէք։

Մարկ. ԳԼ. ԺԳ։

Եւ դարձաւ Յիսուս զօրութեամբ



Հոգւոյն ի Գալիլեա, և ել համբաւ
զնմանէ (անոր անունը տարածուեցաւ) ընդ
ամենայն կողմանս գաւառին։ Եւ նա
ուսուցանէր ի ժողովուրդս նոցա փա-
ռաւորեալ յամենեցունց։ Եւ եկն ի Նա-
զարէթ՝ ուր սնեալն էր (մեծցած էր)
և եմուտ ըստ սովորութեան իւրում
յաւուր շաբաթու ի ժողովուրդն։ Եւ
ետուն նմա զգիրս Եսայեայ մարգա-
րէի. և յարեաւ ընթեռնուլ. և իբրև ե-
բաց զգիրսն՝ եգիտ զայն տեղին յորում
գրեալն էր. Հոգի տեառն ի վերայ իմ
(է). վասն որոյ և օծ իսկ զիս, աւետա-
րանել աղքատաց առաքեաց զիս, բժըշ-
կել զբեկեալս սրտիւք, քարոզել գերեաց
զթողութիւն և կուրաց տեսանել (զօր.
ջոկուել) արձակել զվիրաւորս ի թողութի
(վիրաւորները ազատել). քարոզել զտարեկան
տեառն ընդունելի։ Եւ խփեալ (գոցելով)
զգիրսն՝ ետ ցպաշտօնեայն և նստաւ, և
ամենեցուն որ ի ժողովրդեանն էին աչք՝
ի նա հայէին (ժողովքին մէջ եղողներուն աչ-
քերը)։ Եւ սկսաւ ասել ցնոսա. այսօր լը-
ցան գիրքս այս յականջս ձեր (լեցուի սոր

բռնածները)։ Եւ ամենեքին զարմանային ընդ բանս շնորհացն (շնորհալի խօսք) որ ելանէին ի բերանոյ նորա․ և ասէին․ ո՞չ սա է որդին Յովսեփայ։ Եւ ասէ ցնոսա, ապաքէն (հարկաւ) ասիցէք առ իս զառակս զայս․ բժիշկ բժշկեա զանձն քո։

Եւ էջ ի Կափառնաում ի քաղաքն Գալիլեացւոց, և ուսուցանէր զնոսա ի շաբաթս։ Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի իշխանութեամբ (հրամայելով) էր բան նորա։ Եւ էր (կար) ի ժողովրդեանն այր մի զոր ունէր (կը բռնէր) այս դիւի պղծոյ․ և աղաղակեաց ի ձայն մեծ, և ասէ․ Թուլացո՛ (Թող տուր) զի՞ կայ մեր և քո (ինչ ունիս մեզի հետ) Յիսուս Նազովրեցի, եկի՞ր կորուսանե՞լ զմեզ․ գիտեմք զքեզ, ո՞վ ես սուրբն Աստուծոյ։ Սաստեաց ի նա Յիսուս և ասէ․ պապանձեաց (լռէ) և ել ի նմանէ․ զգետնեաց զնա (գետինը զարկաւ) դեւն ի միջի անդ (հրապարակին մէջ, օրինակ) և ել ի նմանէ, և ինչ ոչ վնասեաց նմա։ Եւ եղեն զարմանալիք ի վերայ ամենեցուն (ամենքը զարմացան) խօսէին ընդ միմեանս և



ասէին․ զի՞նչ է բանս այս (այս ի՞նչ պիտի ըլլայ) զի իշխանութեամբ և զօրութեամբ սաստէ այսոց (ոգի, դեւ) պղծոց և ելանեն։ Եւ երթայր հռչակ զնմանէ (անոր անունը կը տարածուէր) ընդ ամենայն տեղիս* շուրջ զգաւառաւն։

Եւ իբրև տիւ եղև՝ ել գնաց յանապատ տեղի․ և ժողովուրդքն խնդրէին զնա․ եկին մինչև առ նա և արգելուին զնա, զի մի գնասցէ ի նոցանէ։ Եւ նա ասէ ցնոսա, և այլոց քաղաքաց պարտ է ինձ աւետարանել զարքայութիւն Աստուծոյ, զի յայն իսկ առաքեցայ։ Եւ քարոզէր ի ժողովուրդսն Գալիլեացւոց։ Գլուխ. Գլ. Ե։

Եւ եղև ի խռնիլ զնովաւ (գլուխը ժողովիլ) և լսել զբանն Աստուծոյ, և ինքն կայր առ ծովակին Գեննեսարեթայ։ Եւ ետես երկուս նաւս՝ զի կային առ ծովակին, և ձկնորսքն ելեալ ի նոցանէ լուանային զգործիսն։ Եւ նա ի մի նաւուցն՝ որ էր Սիմովնի, և աղաչեաց զնա սակաւիկ մի տանել ի ներքս ի ցամաքէն․ Նըս-

---

* Տարածութիւն նշանակելու համար ընդ նախադր. կը գործածուի։

տաւ և ուսուցանէր ի նաւէ անտի զժողովուրդսն ։ Եւ իբրև լռեաց ի խօսիցն (խօսքը լմնցուց) ասէ ցՍիմովն, խաղացո ի խորն (աւելի խորունկը տար) և արկէք զգործիս ձեր յորս ։ Պատասխանի ետ Սիմովն և ասէ ցնա ․ վարդապետ, զամենայն գիշերս աշխատ եղեաք (յոգնեցանք), և ոչինչ կալաք ․ բայց վասն քո բանիդ արկցուք զգործիսս ։ Զայս իբրև արարին՝ փակեցին ի ներքս բազմութիւն ձկանց յոյժ մինչև (անանկ որ) պատառէին ուռկանք նոցա ։ Եւ ակնարկէին որսակցացն (որսի ընկեր) ի միւս նաւն՝ գալ օգնել նոցա, և եկին և լցին երկոքին նաւքն՝ մինչև մերձ յընկղմել նոցա ։ Իբրև ետես Սիմովն Պետրոս՝ անկաւ առ ծունկս (ոտքը) Յիսուսի և ասէ ․ ի բաց գնա յինէն (հեռացիր) տէր, զի այր մեղաւոր եմ ես ։ Քանզի ահ պատեաց զնա և զամենեսեան որ ընդ նմայն էին՝ վասն որսոյ ձկանցն զոր ըմբռնեցին (բռնած) ։ Նոյնպէս և զՅակոբոս և զՅովհաննէս զորդիսն Զեբեդեայ (զօրան պաշարեց, վախցան) որ էին որսակիցք Սիմովնի ։ Եւ հանեալ զնաւսն ի ցամաք՝



թողին զամենայն՝ և գնացին զհետ նորա ։

Եւ եղև ի հասանելն նորա ի մի ի քաղաքացն ․ ահա (մէյ մ'ալ, յանկարծ) այր մի լի բորոտութեամբ իբրև ետես զՅիսուս՝ անկեալ ի վերայ երեսաց աղաչեաց զնա՝ և ասէ ։ Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել ։ Ձգեաց զձեռն իւր՝ հասոյց ի նա՝ և ասէ ․ կամիմ՝ սրբեաց ․ և վաղվաղակի գնաց ի նմանէ բորոտութիւն ։ Եւ նա պատուիրեաց նմա մի ումեք ասել, այլ թէ երթ ցոյց զանձն քո քահանային, և մատո պատարագ վասն սրբութեան (սրբուելուդ) քո՝ որպէս և հրամայեաց Մովսէս, ի վկայութիւն նոցա ։ Եւ յորդէր առաւել բանն զնմանէ (անոր անունը, համբաւը երթալով կը մեծնար) ․ և ժողովէին ժողովուրդք բազումք լսել՝ և բժշկիլ ի հիւանդութենէ իւրեանց ։ Եւ նա խոյս տայր (կը քաշուէր, կը փախչէր) յանապատ տեղիս, և կայր յաղօթս ։

Եւ եղև ի միում աւուրց՝ և ինքն ուսուցանէր, և փարիսեցիքն և օրէնաց վարդապետքն նստէին ․ որ ժողովեալ էին յամենայն քաղաքաց Գալիլեա-

ցւոյ՝ և Հրէաստանի և Երուսաղէմի . և զօրութիւն Տեառն էր բժշկել զնոսա ։ Եւ ահա արք բերէին մահճօք զայր մի որ էր անդամալոյծ , և խնդրէին զնա մուծանել ի ներքս՝ և դնել առաջի նորա ։ Եւ իբրև ոչ գտանէին թէ ընդ ո՛ր մուծանիցեն (մտցունելու տեղ չգտան) զնա ի ներքս վասն ամբոխին , ելին ի տանիս և ի ցուոցն կախեցին զնա , և իջուցին մահճօքն հանդերձ ի մէջ (մէջ տեղ) առաջի Յիսուսի ։ Եւ տեսեալ զհաւատսն նոցա՝ ասէ ցնա . այր դու* (ով մարդ) թողեալ լիցին քեզ մեղք քո ։ Սկսան խորհել դպպիրքն և փարիսեցիքն , և ասեն . ո՞վ է սա որ խօսի զհայհոյութիւնս , ո՞ կարէ թողուլ զմեղս՝ բայց միայն Աստուած ։ Իբրև գիտաց (իմացաւ) Յիսուս զխորհուրդս նոցա , պատասխանի ետ և ասէ ցնոսա . զի՞ խորհիք ի սիրտս ձեր ։ Զի՞նչ դիւրագոյն է (ո՞րը աւելի դիւրին է) ասել թողեալ լիցին քեզ մեղք քո , եթէ ասել արի և գնա ։ Այլ զի գիտասջիք եթէ իշխա-

* Կոչականին հետ , ով , դու , դ՞, բառերն ալ կը գործածուին երբեմն ։



նութիւն ունի որդի մարդոյ յերկրի* թողուլ զմեղս . ասէ ցանդամալոյծն՝ քեզ ասեմ՝ արի առ զմահիճս քո՝ և երթ ի տուն քո ։ Եւ առ ժամայն (շուտ մը) յարուցեալ առաջի ամենեցուն առ զիւրև (շալակը առաւ) յորոյ վերայ անկեալ դնէր (անկողինը) գնաց ի տուն իւր , և փառաւոր առնէր զԱստուած ։ Զարմանք կալան զամենեսեան , (ամէնքը զարմացան) և փառաւոր առնէին զԱստուած , լի եղեն ահիւ , և ասեն , թէ տեսաք այսօր նոր նշան (հրաշք) ։

Եւ յետ այնորիկ ել անտի՝ և ետես մաքսաւոր մի՝ որում անուն էր Ղևի , զի նստէր ի մաքսաւորութեան , և ասէ ցնա եկ զկնի իմ ։ Եւ թողեալ զամենայն՝ յարեաւ գնաց զկնի նորա ։ Եւ արար ընդունելութիւն մեծ (խնճոյք , ճաշ , զիաֆէթ) նմա Ղևի ի տան իւրում . և էր ժողովուրդ (բազմութիւն) բազում մաքսաւորաց և այլոց՝ որ էին բազմեալ (սեղան նստած) ընդ նոսա ։ Եւ տրտնջէին փարիսեցիքն և դպ-

* Ներգոյականը վրայ ալ կը ցուցնէ ։

պիրքն նոցա զնմանէ առ աշակերտսն նորա և ասէին, ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէք և ըմպէք: Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա, ոչ ինչ են պիտոյ բժիշկք ողջոց* (ողջ մարդոց), այլ հիւանդաց. և ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս յապաշխարութիւն (զոր. եկի կոչել): Եւ նոքա ասեն ցնա. ընդէր աշակերտք Յովհաննու պահեն (ծոմ, պահք կը պահեն) ստէպ (շատ. սըք) և խնդրուածս առնեն՝ նոյնպէս և փարիսեցւոյն** (զոր. աշակերտք) և քո (քու աշակերտները) ուտեն և ըմպեն: Ղուկ. Գլ. Ե.

Եւ կոչեցեալ զերկոտասան առաքեալսն, ետ նոցա զօրութիւն և իշխանութիւն ի վերայ ամենայն դիւաց, և բժշկել զհիւանդութիւնս: Եւ առաքեաց զնոսա քարոզել զարքայութիւնն Աստուծոյ, և բժշկել զախտաժէտս (ցաւագար):

* Ածուխները որք առանց փոյթինի գործածելին՝ գոյանաքար առնուած կ'ըլլային, իսկ միշտ զօրութեամբ գոյութ մ'ունին:

** Յառկացէալը որք յառաջ յիշուած է մէջ մի ու չկրկնուիլ՝ և անոր տեղ գինոյ յօդ մի կը դրուի:



Եւ ասէ ցնոսա մի ինչ բառնայք (հէօթիւրիւր առնէք) ի ճանապարհի. մի՛ գաւազան (զոր. բաստոն) մի մախաղ. մի հաց, և մի արծաթ (բարա) մի երկուս հանդերձս ունիցիք: Եւ յոր տուն մտանիցէք՝ անդ ագանիջիք, և անտի գնայցէք: Եւ որք ոչ ընդունիցին զձեզ՝ յորժամ ելանիցէք ի քաղաքէն յայնմանէ, զփոշի ոտից ձերոց թօթափեսջիք ի վկայութիւն նոցա: Եւ ելեալ շրջէին ընդ քաղաքս և ընդ գեօղս՝ աւետարանէին, և բժշկէին (բժշկութիւն կընէին) ընդ ամենայն տեղիս: Լուաւ Հերովդէս չորրորդապետ զգործսն ամենայն, և զարմանայր վասն ասելոյն յոմանց. թէ Յովհաննէս յարեաւ ի մեռելոց, և յոմանց՝ (զոր. ոմանց) թէ Եղիա յայտնեցաւ. և յայլոց՝ թէ մարգարէ ոմն յառաջնոցն յարեաւ: Եւ ասէ Հերովդէս. զՅովհաննէս ես գլխատեցի, իսկ սա ո՞վ իցէ՝ զորմէ զայսպիսի իրս լսեմ, և խնդրէր (կ'ուզէր) տեսանել զնա: Դարձան առաքեալքն, և պատմեցին նմա զամենայն զոր արարին: Եւ առեալ զնոսա՝ խուսեաց առանձինն ի տեղի անապատ քաղաքի միոյ,

որում անուն էր Բեթսայիդա։ Եւ ժողովուրդքն իբրև գիտացին, գնացին ընդ հետ նորա, և ընկալեալ զնոսա՝ խօսէր ընդ նոսա վասն արքայութեանն Աստուծոյ, և որոց պէտք էին բժշկութեան բժշկէր։ Եւ օրն սկսաւ տարաժամել (ուշանալ), մատեան երկոտասանքն և ասեն ցնա, արձակեա զժողովուրդդ, զի երթիցեն շուրջ ի գիւղն և յագարակս հանգիցեն, և գտցեն կերակուր։ Ղուկ. Թ.

## ԱՌԱԿՔ ՍՈՂՈՄՈՆԻ

Լուարուք մանկունք զխրատ հօր և անսացէք (մտիկ ըրէք) ստանալ զիմաստութիւն։ Զի պարգև բարեաց պարգևեցից ձեզ։ Զօրէնս իմ մի թողուք. զի որդի եղեալ եմ և (ալ) ես հպատակ հօր իմոյ, և սիրեցեալ (սիրելի) յաչս մօր իմոյ։ Որք ուսուցանէին զիս և ասէին. հաստատեսցի բան մեր ի սրտի քում։ Պահեա զպատուիրանս իմ և կեա՛ց։ Ստա-



ցիր զիմաստութիւն. ստացիր զհանճար (խելք) և մի մոռանար։ Մի արհամարհեր զպատգամս բերանոյ իմոյ, և մի խոտորիր ի բանից շրթանց իմոց։ Մի թողուր զնա և (որ) պաշտպանեսցէ (պահպանէ) զքեզ. սիրեա զնա և (որ) պահեսցէ զքեզ. Սկիզբն զգօնութեան (ուսմունք, խելք) ըստացիր զիմաստութիւն. և յամենայն ճանապարհս քո ստացիր զհանճար։ Անծարեա զնա և (որ) գիրկս արկցէ զքեւ (գրկէ) զի տացէ գլխոյ քում պսակ շնորհաց և վերակացու լիցի քեզ։

Լուր որդեակ, և ընկալ զբանս իմ. և բազմասցին ամք կենաց քոց և յաճախեսցին (շատնան) ճանապարհք կենաց քոց։ Զճանապարհս իմաստութեան ուսուցանեմ քեզ. խելամուտ առնեմ (հասկըցունեմ) զքեզ ուղիղ շաւղաց։ Զի եթէ գնասցես՝ ոչ խափանեսցին գնացք քո. և եթէ ընթանայցես (վազել, շուտ քալել) ոչ վաստակեսցիս (յոգնիս)։ Բուռն հար (բռնէ) զխրատու է իմմէ՝ և մի թողուցուս. այլ պահեա զնա անձին քում ի կեանս (կենաց համար)։ Ի ճանապարհս

ամբարշտաց մի՛ երթայցես և մի նախանձիցիս ընդ ճանապարհս (ճամբուն վրայ) անօրինաց. և ի տեղւոջ ուր բնակիցին՝ ընդ այն (անկէ) մի անցանիցես: Խոտորեա (դարձիր) ի նոցանէ և խորշեա (փախիր) անտի. զի ոչ ննջեն եթէ ոչ չար գործիցեն՝ (մինչեւ որ չգործեն):

Բարձեալ է քուն նոցա (քունը փախած է) և ոչ ննջեն: Ճանապարհք արդարոց որպէս լոյս ծագին, առաջնորդեն և լուսաւորեն: Ճանապարհք ամբարշտաց խաւարինք (մութ):

ԿԱՆՈՆ: Շատ անգամ բայը մանաւանդ էական բայը զօրութեամբ կը դրուի և ան ատեն պէտք է խօսքին իմաստին նայելով էական կամ ուրիշ բայ մը յայտնի դնել, ինչպէս:

Որդեակ իմոյ բանից մտօք ունկն դիր. զի մի պակասեսցին աւուրք քո: Պահեա զնոսա ի սրտի քում զի կեանք են՝ որոց գտանենն զնա (այսինքն գտնողներուն) և ամենեցուն բժշկութիւն են:

Սողոմոն. առակք.



Որդեակ՝ իմոյ իմաստութեան անսա. և իմոց բանից մտօք ունկն քո (մտիկ ըրէ): Զի պահեսցես զխորհուրդս բարեաց: Զ իմաստութիւն շրթանց իմոց պատուիրեմ քեզ: Մի հայիր ընդ կին չար (չնոյ). զի մեղր կաթէ ի շրթանց կնոջ պոռնկի, որ առ ժամանակ մի (քիչ մ՚ատեն) պարարէ (համ կուտայ) զքիմս քո. բայց յետոյ դառնագոյն ևս գտանի (լեղիլայ) քան զլեղի. և սրեալ (սուր. կտրուկ) քան զսուր երկսայրի: Զի ոտք անզգամի իջուցանեն զմերձաւորս (բարեկամ) նորա մահու հանդերձ ի դժոխս: Զի ի ճանապարհս կենաց ոչ գնան: Արդ որդեակ լուր ինձ և մի ապախտ առներ (զանց մըներ, մտիկ ըրէ) զբանս իմ: Հեռի արա ի նմանէ զճանապարհս քո. և մի մերձենար ի դրունս տանց նորա: Զի մի մատնեսցես օտարաց զկեանս (ողնեցած) քո և զվաստակս քո անողորմից: Եւ զղջասցիս յետոյ յորժամ մաշեսցին անդամք մարմնոյ և ասիցես՝ թէ զիարդ ատեցի զխրատ:

Ոչ լուէի (մտիկ ընել) ձայնի խրատտուի

իմոյ, և ուսուցչի իմոյ ոչ մատուցանէի զունկն իմ: Սակաւիկ մի ևս (քիչ մնաց) և (որ) եղեալ էի ի մէջ ամենայն չարեաց:

Սողոմոն. առակք.

ԿԱՆՈՆ. Գրաբարի մէջ շատ անգամ անուն մը բայի մը հետ մէկտեղ կը գործածուի՝ աւելի վայելչաբար. զոր բաղադրեալ բայ կըսուի և աշխարհաբարի մէջ մէկ բայով ալ կը թարգմանուի. ինչպէս. Վարել ի ծառայութիւն. ծառայեցնել:

Որդի իմաստուն՝ ուրախ առնէ ըզհայր. որդի անմիտ տրտմութիւն է մօր: Ոչ օգնեսցին (օգուտ չեն ըներ) գանձք անօրինաց: Ոչ սովամահ առնէ (անօթի մեռցնել) տէր զանձն արդարոյ: Տնանկութիւն (աղքատութիւն) զայր խոնարհեցուցանէ. ձեռք ժրաց (աշխատասէր) մեծացուցանեն: Որդի խրատեալ իմաստուն լիցի. և զանմիտն ի ծառայութիւն վարեսցէ: Ապրեցաւ (ազատեցաւ) ի խոր-



շակէ (խիստ տաք) որդի իմաստուն. խորշակահար լինի ամարանի (ամրան մէջ) որդի անօրէն: Օրհնութիւն տեառն ի գլուխ արդարոց (զոր. եղիցի, պիտի ըլլայ): Զբերանս ամբարշտաց ծածկեսցէ սուգ տարաժամ (յանկարծակի): Յիշատակ արդարոց գովութեամբ. (զոր. յիշուի. պիտի յիշուի): Անուն ամբարշտաց շիջցի. (պիտի կորսուի): Միտ իմաստուն ընկալցի զպատուիրանս. և ցոփն (անառակ) շրթամբք գայթակղելով (սխալել, ինկնալ) կործանեսցի: Որ (ով որ) գնայ իմաստութեամբ՝ գնայ յուսով: Իսկ որ թիւրէ (ծռել) զճանապարհս իւր՝ յայտնի լիցի (պիտի յայտնուի): Որ ակնարկէ ակամբ նենգութեամբ՝ ժողովէ (կը բերէ) զտրտմութիւն. որ յանդիմանէ համարձակութեամբ՝ առնէ զխաղաղութիւն: Աղբիւր կենաց Աստուծոյ ի ձեռին արդարոյ (զոր. է): Զբերան ամբարշտաց ծածկեսցէ կորուստ: Զատելութիւն գրգռէ հակառակութիւն, և զամենեսին որ ոչ հակառակին (հակառակութիւն չընողները) ծածկէ սէր: Որ (ով որ) ի շրթանց բղխէ

զիմաստութիւն՝ իբրև զաւազանաւ հարկանէ զայր անմիտ ։ Իմաստունք ծածկեսցեն զիմաստութիւն ։ Բերան յանդգնելոյ (ինքնահաւան, չափազանց անխոհ) մերձ է ի բեկումն ։

Ստացուածք մեծատանց՝ քաղաք ամուր (զօր. են) ։ Բեկումն ամբարշտաց՝ աղքատութիւն (զօր. է) ։ Գործք արդարոց կենաց առնեն, և պտուղք ամբարշտաց՝ մեղս (զօր. առնեն) ։ Խրատ առանց յանդիմանութեան մոլար (սխալ, անօգուտ) է . Ծածկեն (կը պահեն) զթշնամութիւն շրթունք արդարք . իսկ որ ի վեր հանեն (յայտնեն, օրինակ հանել) անզգամք են ։ Սող. առակ.

Որ սիրէ զխրատ՝ սիրէ զիմաստութիւն . իսկ որ* (ով որ) ատեայ (ատէ) զյանդիմանութիւն անմիտ է ։ Լաւ է որ գտանէ շնորհս ի տեառնէ . իսկ այր անօրէն կորիցէ ։ Ոչ յաջողեսցի մարդոյ յանօրէնութենէն, արմատք ար-

* Որ՝ շատ անգամ ով որ (ինչ որ) . կամ ո՛ր ([illegible]) կը նշանակէ և ան ատեն յարաբերական դերանուն չէ այլ անորոշ ածական ։



դարոց ոչ հատցին ։ Կին ժրագլուխ (աշխատասէր) պսակ է առն իւրոյ . որպէս որդն փայտի վնասակար է՝ նոյնպէս կորուսանէ զայր կին չարագործ ։ Բերան ամենայն ամբարշտաց նենգաւորք (զօր. են) ։ Բերան ուղղոց (ճշմարտասէր) փրկեսցէ զնոսա ։ Յոր կոյս և դարձցի ամբարիշտն՝ եղծանի (կը ջնջուի), տունք արդարոց յերկարեսցեն ։ Բերան իմաստնոց գովի ի մարդկանէ . իսկ խօլթասիրտն (նենգաւոր, փճացած) արհամարհեսցի ։ Լաւ է մարդոյ խոնարհութեամբ ծառայել անձին . քան անձին շուք եդեալ (պատիւ ընել) և հաց մուրանայցէ ։

Որ գործէ զերկիր իւր յագեսցի հացիւ . իսկ որ զհետ երթայ զնանրութեան (անպարկեշտութեան, իր վիզը սխալ համարում ունենալ) պակասամիտ է ։ Որ ախորժէ զգինեաց դեգերանս՝ (գինիի ետևէ ըլլալ) թողցէ ի բնակութիւն իւր զանարգանս ։ Ոչ է հաճոյ արդարոյ և ոչ մի ինչ անիրաւ . իսկ ամբարիշտք ցցին չարութեամբ ։ Սող. առակ.

Պատասխանի ողոք՝ (ծեղ. անոյշ)

դարձուցանէ զտրտմութիւն ։ Բան խիստ յարուցանէ ( կը գրգռէ ) զբարկութիւն ։

Անզգամն անգոսնէ ( մերժ կ'ընէ ) զխրատ հօր. որ ( ով որ ) պահէ զյանդիմանութիւն՝ խորագէտ է ։ Ի յաճախել ( շատնալ ) արդարութեան՝ զօրութիւն բազում ( զոր. լինի ), և ամբարիշտք արմատաքի ( արմատէն, ջնջուին ) կորիցեն ։ Պատարագք ( ընծայ ) ամբարշտաց պիղծ են առաջի Տեառն, ուխտք ուղղոց՝ ( աղօթք ) ընդունելի են նմա ։ Պիղծ են առաջի Տեառն ճանապարհք ամբարշտաց. իսկ որ ( ով որ ) երթայ զհետ արդարութեան՝ սիրէ զնա ։ Դժոխք և կորուստ յայտնի են առաջի Տեառն. զիա՞րդ և ոչ սիրտք ( զոր. յայտնի լինին ) մարդկան ։ Լաւ է փոքր բաժին երկիւղիւ Տեառն քան զգանձս մեծամեծս աներկիւղութեամբ ։ Լաւ են կոչունք ( ճաշ ) բանջարեղէնք՝ սիրով և շնորհիւ, քան զուարակ՝ թշնամութեամբ ։ Այր բարկացող՝ նիւթէ ( կը հանէ, կը պատճառէ ) զկռիւս. իսկ երկայնամիտն ցածուցանէ ( կ'իջեցնէ ) ։ Որչափ ի մեծութիւն հասանիցես՝ ի խոնարհու-



թեան կալ զանձն քո, և առաջի Տեառն գտցես շնորհս ( սիրելի կ'ըլլաս ) ։ Որ կատակէ զաղքատաւ՝ ( վրան խնդալ ) բարկացուցանէ զարարիչ նորա. և որ ոտն հարկանէ ( անարգել, ծաղրել ) կորուսելոյն՝ ոչ արդարասցի ։ Պատճառս խնդրէ այր որ կամիցի քակել ի բարեկամաց իւրոց, յամենայն ժամանակի նախատ լիցի ( նախատուի ) ։ Ոչինչ պիտոյ է իմաստութիւն պակասամտի ։ Ակն առնուլ ( աչառութիւն ընել, թարաֆ ընել ) ամբարշտի չէ բարւոք. և ոչ զիրաւունս խոտորել ( զոր. բռնութ է ) արդարոյ ի դատաստանի ։

Աղ. առակ.

Փախուցեալ է ամբարիշտն առանց ուրուք հալածելոյ. իսկ արդարն իբրև զառիւծ յանձն ապաստան է ( քաջասիրտ ) ։ Վասն մեղաց ամբարշտաց դատաստանք յուզին. և այր խորագէտ շիջուցանէ ( խափանել ) զնա ։ Հզօրն առ ամբարշտութեան իւրում զրպարտէ զտնանկս ( աղքատ, պէկար ) ։ Արք չարք ոչ առնուն ի միտ զիրաւունս. իսկ որ խնդրեն զՏէր խելամուտ լիցին ( աղէկ հասկնան ) ամենայնի ։ Լաւ է

աղքատ որ գնայ ճշմարտութեամբ. քան զմեծատուն սուտ ։ Պահէ զօրէնս որդի իմաստուն . իսկ որ արածէ զորկորստութիւն (ով որ որկրամոլներուն ընկեր կ'ըլլայ) անարգէ զհայր իւր ։ Որ մոլորեցուցանէ զուղիղս չար ճանապարհաւ՝ ինքն անկցի յապականութիւն (կ'իյնայ կորուստի, ծուղակի) ։ Իմաստուն թուի անձին իւրում այր մեծատուն, եւ աղքատ հանճարեղ ստգտանէ (կը մերժէ, պախարակելի կը գտնէ զինք) զնա ։ Որ ծածկէ զամպարշտութիւն իւր՝ ոչ յաջողեսցի . իսկ որ ի վեր հանէ (կը յայտնէ) սիրելի լիցի ։ Երանի իցէ այն որ արհամարհիցէ զամենայն վասն երկիւղածութեան . իսկ խիստն սրտիւ (խստասիրտ, չար սիրտ) անկցի ի չարիս ։ Ամբիծք բաժանեսցեն զբարութիւնս, եւ անօրէնք անցցեն առ բարութեամբք (բարութեան քովէն) եւ մի մտցեն ի նոսա ։

Սող. Առակ Գլ. ԻԸ ։

---

# ԳՈՐԾՈՑ

Եւ յաւուրսն յայնոսիկ ի բազմանալ



աշակերտացն, եղեւ տրտունջ Յունաց (Յոյները սկսան տրտնջել) առ Եբրայեցիսն, զի արհամարհեալ լինէին ի պաշտամանն հանապազորդ (ամէն օրուան) այրիք (անտէ- րունք, աղքատ) նոցա ։ Կոչեցին երկոտասանքն զբազմութիւն աշակերտացն՝ եւ ասեն . ոչ է հաճոյ մեզ (մենք չենք ուզեր) թողուլ զբանն Աստուծոյ եւ պաշտել զսեղանս (սեղաններուն հոգ տանիլ, կերակուրի ծառայել) ։ Ընտրեցէք, եղբարք, վկայեալս ի ձէնջ արս եօթն լի հոգւով սրբով եւ իմաստութեամբ, զորս կացուսցուք (դնենք) ի վերայ պիտոյից այսոցիկ, եւ մեք աղօթից եւ պաշտաման եւ բանին (Տիրոջ խօսքին ծառայութեան) հպատակ լիցուք (պարապինք, ետեւէ ըլլանք) ։ Եւ հաճոյ թուեցաւ (աղէկ երեւցաւ, հաւնեցան) բանն առաջի ամենայն բազմութեանն . եւ ընտրեցին զՍտեփաննոս՝ այր լի հաւատով եւ հոգւով սրբով . եւ զՓիլիպպոս եւ զՊրոքորոն եւ զՆիկանովր եւ զՏիմոն եւ զՊարմենաս եւ զՆիկողայոս զեկն (օտարական դարձեր էր հրեայ) Անտիոքացի ։ Զորս կացուցին առաջի առաքելոցն եւ աղօթս արարեալ եդին ի վերայ նոցա

զձեռս։ Եւ բանն Աստուծոյ աճէր (կը տարածուէր) և բազմանայր թիւ աշակերտացն յոյժ յԵրուսաղէմ. և բազում ժողովք ի քահանայից անսային հաւատոյն (հաւատքի կուգային)։

Ստեփաննոս՝ այր լի շնորհօք և զօրութեամբ, առնէր արուեստս և նշանս մեծամեծս ի ժողովրդեանն։ Յարեան ոմանք ի ժողովրդենէն, որ կոչէր Լիբեռտացւոց (զօր. ժողովուրդ) և Կիւրենացւոց և Աղեքսանդրացւոց և որ ի Կիւլիկեցւոց և յԱսիայ, վիճել ընդ Ստեփաննոսի. և ոչ կարէին զդէմ ունել իմաստութեանն և հոգւոյն*, որով խօսէր։ Յայնժամ հրապուրեցին (իրենց կողմը անցուցին, կաշառք տուին) արս ոմանս ասել, թէ լուաք զդորա խօսիլ բանս հայհոյութեան ի Մովսէս և յԱստուած։ Եւ խռովեցին (ոտքի հանեցին) զժողովուրդն և զծերսն և զդպիրսն՝ և հասեալ ի վերայ՝ յափշտակեցին զնա՝ և ածին յատեան։ Եւ կացուցին վկայս սուտս՝ որ ասէին. այրս այս ոչ դադարէ խօսել բանս հայհոյութեան* (հայհոյանք) զտեղւոյն սրբոյ և զօրինաց։ Եւ լուաք ի դմանէ զի ասէր՝ թէ Յիսուս Նազովրեցի նա** քակեսցէ զտեղիս զայս. և փոխեսցէ զօրէնս զոր ետ մեզ Մովսէս։ Եւ հայեցեալ ի նա ամենեցուն որ նստէին յատենին, տեսին զերեսս նորա իբրև զերեսս հրեշտակի։

* Համադրութեան նախդիրը երբեմն կը խնդրոյն վրայ կը կրկնուի։



Գլ. Է.

Ասէ քահանայապետն՝ թէ արդարև այդ այդպէս իցէ։ Եւ նա ասէ. արք եղբարք և հարք, լուարուք ինձ։ Աստուած փառաց երևեցաւ հօր մերում Աբրահամու, մինչդեռ ի Միջագետս էր, մինչչև բնակեցուցեալ էր զնա ի Խառան. և ասէ ցնա։ Ել յերկրէ քումմէ և յազգէ քումմէ, և եկ յերկիր՝ զոր ցուցից քեզ։ Յայնժամ ելեալ յերկրէն Քաղդէացւոց

* Երբեմն սեռականն հոլով գոյականի մը ածականի պաշտօն կը վարէ. ինչպէս Բանս դառնութեան, այսինքն բանս դառն։

** Նա, աւելորդութիւն է։ Աւելորդութիւն կ'ըսուի նոյն խօսքին մէջ պաշտօն չունեցող բառի մը, որ եթէ վերցնենք խօսքին միտքը չփոխուիր, ինչպէս է նա դերանունը։

բնակեցաւ ի Խառան. և անտի յետ մեռանելոյ հօր նորա՝ փոխեաց (հանեց) և պանդխտեցոյց (օտարական պէս բնակեցընել՝ օտար տեղ հաստատել) զնա յերկրիս յայսմիկ, յորում դուք այժմ բնակեալ էք: Եւ ոչ ետ նմա ժառանգութիւն ի սմա, և ոչ քայլ մի ոտին. և խոստացաւ տալ նմա զսա ի բնակութիւն, և զաւակի նորա յետ նորա, մինչ ոչ գոյր նորա որդի: Խօսեցաւ Աստուած այսպէս. թէ եղիցի զաւակ նորա պանդուխտ յօտար երկրի, և ծառայեցուսցեն զնա և չարչարեսցեն ամս չորեքհարիւր: Եւ զազգն որում ծառայեսցեն՝ դատեցայց ես, ասէ Աստուած. և յետ այնորիկ ելցեն և պաշտեսցեն զիս ի տեղւոջս յայսմիկ: Եւ ետ նմա ուխտ թլփատութեան, և ապա ծնաւ զԻսահակ և թլփատեաց զնա յաւուր ութերորդի, և Իսահակ (զօր. ծնաւ) զՅակոբ, և Յակոբ՝ զերկոտասան նահապետսն: Եւ նահապետքն նախանձեալ ընդ Յովսէփայ՝ վաճառեցին յԵգիպտոս. և էր Աստուած ընդ նմա: Եւ փրկեաց զնա յամենայն նեղութեանց նորա. և ետ նմա շնորհս և



իմաստութիւն առաջի Փարաւոնի արքային Եգիպտացւոց, և կացոյց զնա իշխան Եգիպտացւոց և ամենայն տան նորա: Եւ եկն սով յամենայն երկիրն Եգիպտոսի, և ի Քանան նեղութիւն մեծ. և ոչ գտանէին կերակուր հարքն մեր: Եւ լուեալ Յակոբայ թէ գտանի կերակուր յԵգիպտոս՝ առաքեաց զհարսն մեր յառաջագոյն: Եւ յերկրորդումն (Երկրորդ անգամին) ետ ծանօթս (ճանչցուց զինքը) Յովսէփ եղբարց իւրոց, և յայտնի եղև ազգ նորա Փարաւոնի: Առաքեաց Յովսէփ՝ և կոչեաց զՅակոբ զհայր իւր և զամենայն ազգատոհմն՝ (ընտանիք. սերունդ,) արս եօթանասուն և հինգ: Եւ էջ Յակոբ յԵգիպտոս, և վախճանեցաւ ինքն և հարքն մեր: Եւ փոխեցան ի Սիւքէմ և եդան յայրին, զոր առաւ Աբրահամ գնոց արծաթոյ (ծախու առաւ) յորդւոյն Եմովրայ՝ ի Սիւքէմ: Իբրև մերձեցաւ ժամանակ աւետեացն՝ զոր խոստացաւ Աստուած Աբրահամու՝ աճեաց ժողովուրդն և բազմացաւ յԵգիպտոս, մինչև յարեաւ այլ թա-

գաւոր՝ որ ոչ ճանաչէր զՅովսէփ ։ Նա հնարեցաւ ազգին մերում և չարչարեաց զհարսն մեր, առնել ընկեցիկ (դուրս ձգել, նետել) զմանկունս նոցա՝ զի մի՛ ապրեսցին ։ Յորում ժամանակի (այն ատեն) ծնաւ և Մովսէս և էր կայտառ (աղւոր առողջ, կորիճ) առաջի Աստուծոյ ․ որ և սընաւ ի տան հօր իւրոյ ամիսս երիս ։ Եւ յընկեցիկն առնել զնա՝ եբարձ զնա դուստր Փարաւոնի՝ և սնոյց իւր յորդեգիրս ։ Եւ վարժեցաւ Մովսէս ամենայն իմաստութեամբն Եգիպտացւոց՝ և էր զօրաւոր բանիւք եւ գործովք իւրովք (խօսքի տէր և գործունեայ) ․ Իբրև լցաւ նորա քառասնամեայ ժամանակ (երբ քառասուն տարեկան եղաւ) անկաւ ի սիրտ նորա (փափաք մը եկաւ) շրջել զեղբարբքն իւրովք՝ զորդւովքն Իսրայէլի ։ Եւ տեսեալ զմի զրկեալ՝ դժարեցաւ (ցաւեց, չհամբերեց, բարկացաւ) և խնդրեաց զվրէժ զրկելոյն սպանեալ զԵգիպտացին ։ Զմտաւ ածէր (կը յուսար, կը կարծէր) թէ իմասցեն եղբարք նորա՝ զի Աստուած ի ձեռն նորա տալոց էր զփրկութիւն նոցա, և նոքա ոչ



իմացան ։ Եւ ի վաղիւ անդր երևեցաւ նոցա (իւր եղբարց, հայրենակցաց) մինչդեռ մարտնչէին և վարեաց զնոսա ի խաղաղութիւն (հաշտեցընել ուզեց) ասէ, արք եղբարք էք ․ ընդէ՞ր զրկէք զմիմեանս ։ Իսկ որ զրկէր զընկերն, մերժեաց զնա և ասէ ․ ո՞ կացոյց զքեզ իշխան և դատաւոր ի վերայ մեր ․ միթէ սպանանե՞լ կամիցիս զիս՝ զորօրինակ (ինչպէս) սպաներ երէկ զԵգիպտացին ։ Եւ փախեաւ Մովսէս ի բանիցս յայսցանէ և եղև պանդուխտ յերկրին Մադիանու՝ ուր ծնաւ երկուս որդիս ։

Եւ ի կատարել ամացն քառասնից (քառասուն տարին եղաւ) երևեցաւ նմա յանապատի լերինն Սինայ հրեշտակ տեառն ի բոց հրոյ մորենւոյն ։ Եւ Մովսէսի տեսեալ զարմացաւ ընդ տեսիլն, և ի մատչելն նորա նշմարել (մօտէն աղէկ մը տեսնել) եղև ձայն տեառն ։ Ես եմ Աստուած հարցքոյ ․ Աստուած Աբրահամու՝ և Սահակայ՝ և Յակոբայ, և զահի հարեալ Մովսէս՝ ոչ իշխէր (չէր համարձակեր) հայել ։ Եւ ասէ ցնա տէր ․ Լոյծ (քակէ,

հանէ) զկօշիկս ոտից քոց. զի տեղիդ յորում դուդ կայցես՝ երկիր սուրբ է: Տեսանելով տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ՝ որ յԵգիպտոս, և լուայ հեծութեան նոցա, և եկի փրկել զնոսա. արդ եկ և առաքեցից զքեզ յԵգիպտոս: Զայն Մովսէս զոր ուրացանն և ասեն. ո՞ կացոյց զքեզ իշխան և դատաւոր ի վերայ մեր. զնա Աստուած իշխան և փրկիչ առաքեաց ի ձեռն հրեշտակին, որ երևեցաւ նմա ի մորենւոջն: Նա եհան զնոսա՝ արարեալ նշանս և արուեստս յերկրին Եգիպտացւոց և ի կարմիր ծովուն և յանապատին՝ ամս քառասուն: Այս Մովսէս է՝ որ ասաց ցորդիսն Իսրայէլի՝ մարգարէ յարուսցէ ձեզ տէր Աստուած ձեր յեղբարց ձերոց իբրև զիս՝ նմա լուիջիք: Սա է որ եղև յեկեղեցւոջ յանապատին ընդ հրեշտակին, որ խօսեցաւ ընդ նմա ի լերինն Սինայ՝ և ընդ հարսն մեր, որ ընկալաւ զպատգամս կենդանիս՝ տալ մեզ: Որում ոչ կամեցան հնազանդ լինել հարքն մեր. այլ մերժեցին և դարձան սրտիւք իւրեանց յԵգ-



իպտոս: Եւ ասեն ցԱհարոն. արա մեզ աստուածս՝ որ երթիցեն առաջի մեր. զի Մովսէսն այն՝ որ եհան զմեզ յերկրէն Եգիպտացւոց՝ ոչ գիտեմք զի՞ եղև նմա*: Եւ արարին (շինեցին) յաւուրսն յայնոսիկ հորթ, և մատուցին զոհս կռոց, և ուրախ լինէին ի գործս ձեռաց իւրեանց: Դարձոյց զնոսա Աստուած՝ և մատնեաց զնոսա ի պաշտօն զօրութեան երկնից (Երկնից զօրութեան, բնական ծառայելու), որպէս և գրեալ է ի գիրս մարգարէից: Միթէ զոհս և պատարագս մատուցէ՞ք ինձ զամս քառասուն յանապատին՝ տունդ Իսրայէլի. և առէք զխորանն Մողոքայ, և զաստղն Աստուծոյն Հռեմփայ, զպատկերսն զոր արարէք երկրպագանել նոցա. և փոխեցից զձեզ յայն կողմն Բաբելոնացւոց:

Խորանն վկայութեան էր ընդ հարսն

* Երբեմն յարաբերականը փոխանակ հոլովելու՝ ուղղական կը մնայ և անոր տեղ ուրիշ դերանուն մը կը դրուի իբրև աւելադրութիւն. փոխանակ ըսելու՝ ոչ գիտեմք զի՞ եղև Մովսէսին որ եհան զմեզ: Այսպես աւելի ձևաւոր շարադրութեան մէջ կըլլայ՝ երբ խնդիրը բային շատ հեռու դրուի:

մեր յանապատի. որպէս հրաման ետ՝ որ խօսէրն ընդ Մովսիսի, առնել զայն ըստ օրինակին զոր ետես ([illegible]): Զոր և ընկալեալ բերին հարքն մեր հանդերձ Յեսուաւ ի վիճակ ([illegible]) ազգացն, զորս մերժեաց Աստուած յերեսաց հարցն մերոց մինչև յաւուրս Դաւթի, որ եգիտ շնորհս առաջի Աստուծոյ ([illegible]), և խնդրեաց գտանել զյարկն Աստուծոյ Յակոբայ: Նաև Սողոմոն շինեաց նմա տուն: Այլ ոչ եթէ բարձրեալն ի ձեռագործ տաճարս բնակէ. այլ որպէս մարգարէն ասէ. երկինք աթոռ իմ են. և երկիր պատուանդան ([illegible]) ոտից իմոց. ո՞րպիսի տուն շինեցէք ինձ ասէ Տէր, կամ զի՞նչ տեղի հանգստեան իմոյ. ո՞չ ձեռն իմ արար զայս ամենայն: Խստապարանոցք ([illegible]) և անթլփատք սրտիւք և ականջօք, դուք հանապազ հոգւոյն սրբոյ հակառակ կայք որպէս հարքն ձեր և դուք: Զո՞ ի մարգարէիցն ոչ հալածեցին հարքն ձեր, և սպանին զայնոսիկ՝ որ յառաջագոյն պատմեցին ([illegible]) վասն գալստեան ար-



դարոյն, որոյ դուք այժմ մատնիչք և սպանողք եղէք. Որք առիք զօրէնս ի հրամանս հրեշտակաց՝ և ոչ պահեցէք:

Եւ լուեալ զայս՝ զայրանային ի սիրտս իւրեանց, և կրճտէին զատամունս ի վերայ նորա: Եւ նա էր լի Հոգւով սրբով: Հայեցաւ յերկինս՝ և ետես զփառս Աստուծոյ և զՅիսուս, զի կայր ընդ աջմէ Աստուծոյ, և ասէ. Ահա տեսանեմ զերկինս բացեալ՝ և զորդի մարդոյ զի կայ ընդ աջմէ Աստուծոյ: Աղաղակեալ ի ձայն մեծ՝ խցին ([illegible]) զականջս իւրեանց, և դիմեցին ([illegible]) առ հասարակ ([illegible]) ի վերայ նորա: Եւ հանեալ արտաքոյ քաղաքին՝ քարկոծէին, և վկայքն դնէին զձորձս իւրեանց առ ոտս երիտասարդի միոյ՝ որ կոչէր Սաւուղ: Եւ քարկոծ առնէին զՍտեփաննոս, որ կարդայր ([illegible]) և ասէր. Տէր Յիսուս ընկալ զոգի իմ: Եդ ծունր՝ աղաղակեաց ի ձայն բարձր. Տէր մի համարիր դոցա զայս ([illegible]) մեղս. և զայս իբրև ասաց՝ ննջեաց ([illegible]). և Սօղոս էր կամա-

կից (պատճառ, հաճութեան փառող) սպան-
ման նորա :

Գլ. Է .

Եւ եղեւ յաւուր յայնմիկ հալածումն մեծ ի վերայ եկեղեցւոյն Երուսաղեմի, և ամենեքեան ցրուեցան ի գեօղս Հրէաստանի և ի Սամարիա բաց յառաքելոցն : Եւ բարձին զՍտեփաննոս արք երկիւղածք՝ և արարին կոծ մեծ ի վերայ նորա (սուգ բռնեցին, լացին) : Բայց Սաւղոս վնասակար էր եկեղեցւոյն, և ի տունս տունս* (ամէն տուն) մտանէր. քարշէր զարս և զկանայս մատնէր ի բանտ : Եւ սփռեալքն (ցրուած) շրջէին աւետարանէին զբանն : Իսկ Փիլիպպոս իջեալ ի քաղաքն Սամարացւոյ՝ քարոզէր նոցա զՔրիստոս : Ունկն դնէին ժողովուրդքն բանիցն Փիլիպպոսի միաբան՝ ի լսել նոցա և ի տեսանել զնշանսն, զոր առնէր : Քանզի բազումք որ ունէին զայսս պիղծս՝ աղաղակէին ի ձայն մեծ, և ելանէին : Եւ բազում անդամալոյծք և կաղք բժշկէին : Եւ ե-

* Գոյականները կրկնուելով շատութիւն կը ցուցնեն :



ղև ուրախութիւն մեծ ի քաղաքին յայնմիկ : Այր ոմն անուն Սիմովն՝ յառաջագոյն էր ի քաղաքին, մոգ էր (կախարդէր)] և ապշեցուցանէր (զարմացընէր) զազգն Սամարացւոց. ասել զանձնէ՝ թէ իցէ մեծ ոմն (ինքզինք մեծ մարդու մը տեղ դրած էր) : Յոր հայէին ամենեքեան (ամենուն աչքը անոր վրայ էր) ի փոքուէ մինչև ի մեծամեծս. և ասէին, սա է զօրութիւն Աստուծոյ՝ որ կոչի մեծ : Հայէին ի նա վասն բազում ժամանակաց մոգութեամբքն ապշեցուցանելոյ զնոսա. բայց յորժամ հաւատացին Փիլիպպոսի, որ աւետարանէր վասն արքայութեանն Աստուծոյ, և անուանն Յիսուսի Քրիստոսի, մկրտէին ամենեքեան արք և կանայք : Այլ և ինքն Սիմովն հաւատաց, և մկրտեալ կանխէր (առտուն կանուխ կ'երթար) առ Փիլիպպոս, տեսեալ զնշանսն և զմեծամեծ զօրութիւնսն որք լինէին, զարմանայր : Իբրև լուան՝ որ* Երուսաղէմ առաքեալքն էին, թէ և ի Սամարիա ընկալան զբանն Ա-

* Յարաբերականը երբեմն յարաբերեալէն յառաջ կը դրուի :

տուծոյ, առաքեցին առ նոսա զՊետրոս և զՅովհաննէս ։ Որք իջեալ կացին յաղօթս ի վերայ նոցա, որպէս զի առցեն զՀոգին սուրբ. զի ցայնժամ չև ևս էր և ոչ ի վերայ միոյ նոցա հասեալ. բայց միայն մկրտեալք էին յանուն տեառն Յիսուսի ։ Յայնժամ եդին ձեռս ի վերայ նոցա՝ և առնուին զՀոգի սուրբ ։ Տեսեալ Սիմոնին՝ թէ ձեռն ի վերայ դնելով առաքելոցն՝ տուեալ լինի Հոգին սուրբ, մատոյց նոցա ինչս և ասէ. տուք և ինձ զիշխանութիւնս զայս, զի յոր վերայ դնիցեմ զձեռս՝ առցէ Հոգի սուրբ ։ Եւ Պետրոս ասէ ցնա, արծաթ քո ընդ քեզ լիցի ի կորուստ, զի զպարգևսն Աստուծոյ համարեցար ընչիւք ստանալ ։ Ոչ գոյ քեզ մասն և վիճակ ի բանիդ յայդմիկ. քանզի սիրտ քո ոչ է ուղիղ առաջի Աստուծոյ ։ Ապաշխարեա դու ի չարեացդ քոց յայդցանէ և աղաչեա զտէր. թերևս թողութիւն լիցի քեզ ի մեղմնի (նենգաւոր) խորհրդոց սրտի քո ։ Քանզի ի դառնութիւն մաղձի և ի կնճիռն անիրաւութեան տեսանեմ զքեզ ։ Պատասխանի ետ Սի-



մովն և ասէ. աղաչեցէք դուք վասն իմ զտէր, զի մի՛ ինչ եկեսցէ ի վերայ իմ՝ յորոց դուքդ ասացէք ։ Եւ նոցա եդեալ զվկայութիւն խօսեցան զբանն Աստուծոյ, և դարձան յԵրուսաղէմ. և ի բազում գեօղս Սամարացւոցն աւետարանեցին ։

Հրեշտակ տեառն խօսեցաւ առ Փիլիպպոս՝ և ասէ. արի և գնա դու ի կողմն հարաւոյ ընդ ճանապարհ (ան ճամբէն) որ իջանէ յԵրուսաղեմէ ի Գազա. զի այս է անապատ ։ Եւ յարեաւ գնաց ։ Եւ ահաւասիկ այր մի Եթովպացի, ներքինի հզօր՝ Կանդակայ տիկնոջ Եթէովպացւոց, որ էր ի վերայ ամենայն գանձուց նորա, որ եկեալ էր երկիր պագանել յԵրուսաղէմ, և էր անդրէն դարձեալ, և նստեալ ի կառս* իւրում ընթեռնոյր զմարգարէն զԵսայի ։ Ասէ Հոգին ցՓիլիպպոս, մատի՛ր՝ և յարեաց ի կառսդ յայդոսիկ ։ Եւ ընթացեալ Փիլիպպոս՝ լսէր զի ընթեռնոյր զԵսայի մարգարէ (Եսայի մարգարէէն

* Անեզական անուանները կրնան երբեմն եզակի ածական ունենալ ։

Գէրէը) եւ ասէ. գիտիցե՞ս (նը հաւկըմա՞ս) արդեօք՝ զոր* ընթեռնուցուս։ Եւ նա ասէ զիա՞րդ կարիցեմ, թէ ոք ոչ առաջնորդեսցէ ինձ. եւ աղաչեաց զՓիլիպպոս ելանել նստել ընդ նմա։

Եւ գլուխ գրոցն՝ զոր ընթեռնոյր՝ էր այս, «իբրեւ զոչխար ի սպանդ (Տօղրը-ճըղա) վարեցաւ, եւ իբրեւ զորոջ առաջի կտրչի (Տօխլու) խուզոյ անմռունչ. այնպէս ոչ բանայ զբերան իւր։ Ի խոնարհութեան նորա դատաստան նորա բարձաւ, եւ զազգատոհմն նորա ո պատմեսցէ. զի բառնին յերկրէ կեանք նորա։» Պատասխանի ետ ներքինին Փիլիպպոսի եւ ասէ. աղաչեմ զքեզ՝ վասն ո՞ր ասէ մարգարէն զայս, վասն ի՞ւր թէ վասն այլոյ ուրուք։ Եբաց Փիլիպպոս զբերան իւր, եւ սկսեալ ի գրոցս յայսցանէ՝ աւետարանեաց նմա զՅիսուս։ Իբրեւ երթային զճանապարհայն եկին (հասան) ի ջուր ինչ՝ եւ ասէ ներքինին. ահաւասիկ ջուր՝ զի՞նչ

* Յարաբերականին յարաբերեալը զօրութեամբ գրուինէ՝ յարաբերականին յետադայ բառին վրայ յօդ կը դրուի։



արգելու զիս ի մկրտելոյ։ Եւ ասէ ցնա եթէ հաւատաս բոլորով սրտիւ քով մարթ է։ Պատասխանի ետ եւ ասէ. հաւատամ՝ եթէ Յիսուս Քրիստոս է որդի Աստուծոյ։ Եւ հրամայեաց կացուցանել զկառսն. եւ իջին երկոքեան ի ջուրն՝ Փիլիպպոս եւ ներքինին, եւ մկրտեաց զնա։ Եւ իբրեւ ելին ի ջրոյ անտի՝ Հոգի սուրբ եկն ի վերայ ներքինւոյն. եւ հրեշտակ տեառն յափշտակեաց զՓիլիպպոս, եւ ոչ եւս ետես զնա ներքինին. եւ գնայր զճանապարհ իւր ուրախութեամբ։ Իսկ Փիլիպպոս գտաւ յԱզովտոս. եւ շրջեալ աւետարանէր ամենայն քաղաքացն մինչեւ ի գալ նորա ի Կեսարիա։ Գլ. Ը.

Իսկ Սօղոս տակաւին լցեալ սպառնալեօք եւ սպանմամբ աշակերտացն (ըշ-պաննէլը- ֆաֆարըզ), մատուցեալ առ քահանայապետն՝ խնդրեաց ի նմանէ թուղթս ի Դամասկոս առ ժողովուրդսն, որպէս թէ զոք գտցէ զայնր ճանապարհի՝ (ան-հառապնէրէն) արս կամ կանայս՝ կապեալ ածցէ յԵրուսաղէմ։

Եւ ընդ երթալ նորա՝ եղեւ մերձե-

նալ ի Դամասկոս. յանկարծակի շուրջ ըզ-նովաւ փայլատակեաց լոյս յերկնից: Եւ անկեալ յերկիր, լուաւ բարբառ որ ա-սէր ցնա. Սաւուղ Սաւուղ՝ զի՞ հալա-ծես զիս: Եւ ասէ. ո՞վ ես տէր: Եւ նա ասէ. ես եմ Յիսուս զոր դու հալա-ծես. խիստ է քեզ (քեզի դժուար է) ընդ-դէմ խթանի աքացել: Եւ զարհուրեալ՝ և անշշուկ լեալ ասաց. տէր՝ զիս զի՞նչ կամիս առնել. և ասէ ցնա տէր. Արի յոտն կաց՝ և մուտ ի քաղաքդ, և պատ-մեսցի քեզ՝ զինչ պարտ իցէ առնել. իսկ արքն՝ որ ընդ նմայն երթային, կային ան-շշուկ. զձայնն միայն լսէին՝ բայց տեսա-նէին և ոչինչ: Յարեաւ Սօղոս յերկրէ անտի, և աչօք բացօք ոչ զոք տեսանէր. զձեռանէ առեալ նորա՝ մուծին ի քաղաք անդր:

Գլ. Ի.

Այր մի էր ի Կեսարիա անուն Կոռ-նելիոս՝ հարիւրապետ, ի գնդէ որ կոչէր Իտալացի, բարեպաշտօն՝ և երկիւղած յԱս-տուծոյ ամենայն տամբ իւրով, առնէր ողորմութիւնս բազումս ի ժողովրդեանն. և յաղօթս կայր առ Աստուած յամենայն



ժամ: Ետես ի տեսլեան յայտնապէս զին-ներրորդ ժամու աւուրն զհրեշտակ Աս-տուծոյ, զի մտանէր առ նա և ասէր ցնա. Կոռնելիէ. և նա հայեցեալ ընդ նա՝ զարհուրեցաւ և ասէ. զի՞ է տէր. և ա-սէ ցնա. աղօթք քո՝ և ողորմութիւնք քո ելին յիշատակաւ առաջի Աստուծոյ: Եւ արդ յղեա արս ի Յոպպէ՝ և կոչեա զՍիմոն զայն որ կոչի Պետրոս. նա մըտ-եալ է (կը բնակի) առ Սիմոնի ումեմն խա-ղախորդի, որոյ է տունն մերձ ի ծով: Եւ իբրեւ գնաց հրեշտակն որ խօսէր ընդ նը-մա, կոչեաց երկուս ի ծառայից իւ-րոց՝ և զինուոր մի բարեպաշտօն ի սպա-սաւորացն իւրոց, և պատմեալ նոցա զա-մենայն՝ առաքեաց զնոսա ի Յոպպէ:

Եւ ի վաղիւ անդր ի ճանապարհ* ան-կանել նոցա՝ և մօտ ի քաղաքն լինել՝ ել Պետրոս ի տանիսն կալ յաղօթս զվեցեր-

* Երբ երկու բառ միենոյն նախդիրն առնեն՝ առջինին վրայ կը դրուի նախդիրը և երկրորդին վրայ ալ զօրութեամբ կիմացուի. փոխանակ ըսելու ի ճա-նապարհ յանկանել նոցա. քանզի անջատելը նախդրի-ւրական պիտի ըլլայ որ ասէն նշանակէ.

բորդ ժամուն: Քաղցեաւ՝ եւ կամէր ճաշակել. եւ ի պատրաստելն նոցա՝ եղեւ ի վերայ նորա զարմացումն (վրան ապշութիւն եկաւ): Եւ տեսանէր զերկինս բացեալ, եւ զչորեցունց տանեց (ծայր) կապեալ անօթ ինչ իբրեւ զկտաւոյ մեծի, իջեալ նստեալ ի վերայ երկրի, յորում էին ամենայն չորքոտանիք եւ սողունք երկրի՝ եւ թռչունք երկնից: Եւ եղեւ ձայն առ նա. արի Պետրոս, զե՛ն եւ կե՛ր: Եւ Պետրոս ասէ. քաւ լիցի տէր, զի ոչ երբեք կերայ խառնակ ինչ եւ անսուրբ (պիղծ): Ձայն եղեւ կրկին անգամ (երկրորդ անգամ) առ նա՝ զոր Աստուած սրբեաց՝ դու մի՛ պղծեր: Այս եղեւ երիցս (երեք անգամ) եւ վերացաւ անօթն յերկինս: Եւ մինչդեռ զարմացեալ էր ընդ միտս Պետրոս՝ թէ զի՞նչ իցէ տեսիլն զոր ետես. ահա արքն առաքեալք ի Կոռնելեայ՝ հարցին զապարանիցն (տուն, պալատ) Սիմովնի, կացին առ դրանն՝ կոչեցին (մարդ կանչեցին) եւ հարցանէին, թէ Սիմովն որ կոչի Պետրոս՝ աստ մտեալ իցէ: Եւ մինչդեռ Պետրոս զմտաւ ածէր



վասն տեսլեանն, ասէ Հոգին ցնա, ահաւասիկ արք ոմանք խնդրեն զքեզ: Այլ արի՛ էջ եւ երթ ընդ նոսա առանց իրիք խղճելոյ (խիղճ ընելու. շփոթելու), զի ես առաքեցի զնոսա: Եւ իբրեւ էջ Պետրոս առ նոսա, ասէ. ահաւասիկ ես եմ՝ զոր խնդրէքն. զի՞նչ իրք են (ինչ բան) վասն որոյ եկիքդ: Եւ նոքա ասեն. Կոռնելիոս հարիւրապետ՝ այր արդար եւ երկիւղած յԱստուծոյ, վկայեալ յամենայն ազգէն Հրէից, հրաման առ ի հրեշտակէ սրբոյ՝ կոչել զքեզ ի տուն իւր եւ լսել բանս ի քէն: Կոչեաց զնոսա ի ներքս՝ եւ առ իւր ագոյց (գիշերը կեցուց, պահեց քովը). եւ ի վաղիւ անդր յարուցեալ Պետրոս գնաց ընդ նոսա. եւ ոմանք յեղբարց անտի՝ որ ի Յոպպէ էին՝ եկին ընդ նմա: Եւ ի վաղիւ անդր մտին ի Կեսարիա. եւ Կոռնելիոս մնայր նոցա (կ՚սպասէր), կոչեցեալ զազգատոհմն իւր՝ եւ զկարեւոր (մտերիմ) բարեկամս:

Եւ եղեւ ի մտանելն Պետրոսի՝ ընդառաջ եղեւ (դիմացը գնաց, առջին ելաւ) նմա Կոռնելիոս. անկեալ առ ոտսն եր-

կէր պատգամէր ։ Եւ Պետրոս կանգնեաց զնա և ասէ ․ յոտն կաց՝ և ես ինքն մարդ եմ։ Եւ խօսելով ընդ նմա՝ եմուտ ի ներքս, և գտանէր անդ ժողովեալ բազումս ։ Եւ ասէ ցնոսա ․ դուք ինքնին գիտէք՝ որպէս անմարթ է առն հրէի հպել կամ մերձենալ առ այլազգի ․ և ինձ Աստուած եցոյց մի զոք խառնակ կամ անսուրբ ասել ի մարդկանէ ։ Վասն այսորիկ և առանց ընդ բանս ինչ ածելոյ, (առանց պարախօսելու, հարցունել փնտռելու) եկի կոչեցեալ ․ բայց արդ հարցանեմ ․ յինչ պէտս կոչեցէք զիս ։ Եւ Կոռնելիոս ասէ ․ յառաջ քան զչորս աւուրս մինչ ցայս ժամ կայի յաղօթս յինն ժամն ի տան իմում, և ահա այր մի եկն եկաց առաջի իմ ի հանդերձս պայծառս ․ և ասէ ․ Կոռնելիէ՝ լուեալ եղեն աղօթք քո ․ և ողորմութիւնք քո յիշեցան առաջի Աստուծոյ ։ Եւ արդ յղեա (ղրկէ խրկէ) ի Յոպպէ և կոչեա զՍիմոն որ կոչեցեալն է Պետրոս ․ սա մտեալ է ի տուն Սիմոնի ուրումն խաղախորդի մերձ ի ծով, որ եկեսցէ և խօսեսցի բանս ընդ քեզ ։ Եւ ես իսկ և



իսկ (անմիջապէս) յղեցի առ քեզ ․ դու բարւոք արարեր զի եկիր ․ արդ ամենեքին մեք առաջի Աստուծոյ կամք լսել զամենայն՝ զոր հրամայեալ է քեզ ի Տեառնէ ։ Եբաց Պետրոս զբերան իւր՝ և ասէ ․ Ճշմարտութեամբ հասեալ եմ, զի ոչ գոյ ակնառութիւն (երեսպաշտութիւն) առ ի յԱստուծոյ ․ այլ յամենայն ազգս որ երկնչին ի նմանէ՝ և գործեն զարդարութիւն, ընդունելի է նմա ։ Զբանն առաքեաց որդւոցն Իսրայէլի, աւետարանել զխաղաղութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ․ սա է ամենայնի Տէր ։ Դուք ինքնին գիտէք զբանն՝ որ եղև ընդ ամենայն Հրէաստան սկսեալ ի Գալիլեէ յետ մկրտութեանն՝ զոր քարոզեաց Յովհաննէս ․ զՅիսուս որ ի Նազարեթէ՝ զոր օծ Աստուած Հոգւով սրբով և զօրութեամբ, որ շրջեցաւ բարի առնել՝ և բժշկել զամենայն բռնեալս ի սատանայէ ․ զի Աստուած էր ընդ նմա ։ Եւ մեք վկայեմք ամենայնի՝ զոր արար յերկրին Հրէաստանի և յԵրուսաղէմ, զոր և սպանին կախեալ զփայտէ ։ (ի Նազարէթէ.

էն մինչև զիտայէ՝ միջանկեալ խօսք է. Ըն- Ցիսուս խնդիր է յորդյին. յետագայ ղեան աւելադրութիւն է։) Զնա Աստուած յարոյց յերրորդ աւուր, և ետ նմա յայտնի լինել. ոչ ամենայն ժողովրդեանն, այլ մեզ վկայից յառաջագոյն ընտրելոցս յԱստուծոյ, որ և կերաք և արբաք ընդ նմա յետ յարութեան նորա ի մեռելոց։ Եւ պատուիրեաց մեզ քարոզել ժողովրդեանն և վկայութիւն դնել. թէ նա է սահմանեալն յԱստուծոյ՝ դատաւոր կենդանեաց և մեռելոց։ Նմա ամենայն մարգարէք վկայեն, թողութիւն մեղաց առնուլ անուամբ նորա՝ ամենայն հաւատացելոց ի նա։ Եւ մինչդեռ խօսէր Պետրոս զբանս զայս, հանգեաւ Հոգին սուրբ ի վերայ ամենեցուն՝ որ լսէին զբանն։ Զարմացան՝ որք ի թլփատութենէ անտի հաւատացեալք եկեալ էին ընդ Պետրոսի, զի և ի հեթանոսս պարգևք Հոգւոյն սրբոյ զեղուին։ Քանզի լսէին ի նոցանէ խօսել լեզուս՝ և մեծացուցանել զԱստուած։ Յայնժամ պատասխանի ետ Պետրոս. միթէ զջո՞ւր ոք արգելուլ կա-



րէ առ ի չմկրտելոյ զնոսա. որք և զՀոգին սուրբ ընկալան որպէս և մեք։ Եւ հրամայեաց նոցա մկրտել յանուն Յիսուսի Քրիստոսի յայնժամ աղաչեցին զնա լինել անդ աւուրս ինչ (ճէկ ջանի օր)։

Գլ. Ժ.

Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ արկ Հերովդէս արքայ ձեռն՝ չարչարել զոմանս յեկեղեցւոյն։ Եւ սպան զՅակովբոս զեղբայրն Յովհաննու սրով։ Եւ տես եթէ հաճոյ է հրէիցն, յաւել ևս (համարձակութեան ——) ունել զՊետրոս. և էին աւուրք բաղարջակերաց։ Զոր իբրև կալաւ եդ ի բանտի. և մատնեաց (յանձնեց) չորից չորրորդաց զինուորաց պահել զնա. և կամէր յետ զատկին ածել զնա ժողովրդեանն. և Պետրոս ի պահեստի էր ի բանտի. և աղօթք սաստիկ լինէին յեկեղեցւոյն վասն նորա առ Աստուած։ Իբրև կամեցաւ զնա ածել Հերովդէս, ի գիշերին յայնմիկ էր Պետրոս ի քուն (կը քնանար) ի մէջ երկուց զինուորաց՝ կապեալ կրկին շղթայիւք, և պահապանքն առաջի դրանն պահէին զբանտն։ Եւ ահա հրեշ-

տակ տեառն եկն եկաց ի վերայ՝ և լոյս ծագեաց ի տանն, և խթեաց ( Հրեց ) զկողն Պետրոսի յարոյց զնա և ասէ. արի վաղվաղակի. և անկան շղթայքն ի ձեռաց նորա: Եւ ասէ հրեշտակն ցնա. ած զգօտի քո ( Գօտիդ կապէ ), և արկ զհողաթափս յոտս քո ( կօշիկներդ հագիր ). և արար այնպէս, և ասէ ցնա. արկ զձորձս քո՝ ( Վերարկուդ առ ) և եկ զկնի իմ: Եւ ելեալ երթայր զհետ, և ոչ գիտէր թէ ճշմարիտ իցէ որ ինչ եղեւն ի հրեշտակէն. զի համարէր երազ տեսանել: Եւ իբրև անցին նոքա ըստ պահ մի և ըստ երկուս, եկին մինչև ի դուռն երկաթի՝ որ հանէր ի քաղաքն, որ ինքնին բացաւ նոցա. և մտեալ անցին ընդ փողոց մի և վաղվաղակի ի բաց եկաց ի նմանէ հրեշտակն: Եւ Պետրոս իբրև ի միտս եկն ( Խելքը գլուխը բերաւ, ինքիրեն եկաւ ) ասէ. արդ գիտեմ ճշմարիտ եթէ առաքեաց տէր զհրեշտակ իւր, և փրկեաց զիս ի ձեռաց Հերովդի, և յամենայն ակնկալութենէ ժողովրդեանն Հրէից: Եւ լեալ ի միտս՝ եկն ի տուն Մարիամու մօր



Յովհաննու, որ կոչեցաւ Մարկոս. ուր էին բազումք ժողովեալ՝ և աղօթս առնէին: Եւ ի բախել զդուրս տանն՝ մատեաւ աղախին մի ունկն դնել, որում անուն էր Հռոդէ: Եւ ծանուցեալ զձայնն Պետրոսի՝ ի խնդութենէ ոչ եբաց զդուռն. ի ներքս ընթացեալ պատմեաց, թէ Պետրոս առ դրանն կայ: Նոքա ասեն ցնա մոլիս ( կը ցնորիս, կը սխալիս, խենդ ես ). և նա ևս պնդէր թէ այսպէս է. և նոքա ասէին՝ հրեշտակ նորա իցէ: Եւ Պետրոս առէր բախէր, իբրև բացին, տեսին զնա և զարմացան: Եւ նա ձեռամբ ցուցանէր ( Նշան կ'ընէր ) նոցա լռել. և պատմեաց՝ որպէս տէր եհան զնա ի բանտէն. և ասէ՝ պատմեցէք ( իմացուցէք ) Յակոբայ և եղբարց դոցա. և ել գնաց յայլ տեղի: Եւ իբրև այգ ( առտու ) եղև՝ էր խռովութիւն մեծ ի մէջ զինուորացն, զի՞ արդեօք Պետրոսն եղև: Իսկ Հերովդէս իբրև խնդրեաց զնա՝ և ոչ եգիտ, հարցեալ զպահապանսն հրամայեաց սպանանել. և իջեալ ի Հրէաստանէ ի Կեսարիա՝ և անդ լինէր: Եւ էր Հերովդէս ցասմամբ ( Բար-

նեղացեր էր ) ընդ Տիւրացիս և ընդ Սիդոնացիս, և նոքա առ հասարակ եկին առ նա. և ի բանի արարեալ ( միջնորդ ընելով ) զԲղաստոս սենեկապետն արքայի, խնդրէին զխաղաղութիւն վասն կերակրելոյ երկրին նոցա յարքունուստ ( Թագաւորին գանձէն ) ։ Յաւուր միում յերևելւոջ ( նշանաւոր օր մը ) Հերովդէս զգեցեալ էր զհանդերձ թագաւորութեան՝ և նստէր յատենի, և խօսէր ընդ նոսա հրապարակաւ ։ Եւ ամբոխն աղաղակէր՝ թէ Աստուծոյ բարբառ է, և ոչ մարդոյ ։ Եւ անդէն եհար զնա հրեշտակ տեառն, փոխանակ զի ոչ ետ փառս Աստուծոյ. և եղեալ որդնալից՝ սատակեցաւ ։ Եւ բանն Աստուծոյ աճէր ( կը տարածուէր ) և բազմանայր ։

Գր. ԺԲ.

# ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

Զի ընդունայն էին ամենայն մարդիկ բնութեամբ յոր էր աստուածանգիտութիւն ( Աստուած չճանչելը ) . և յերևելի ( տեսնուած ) բարութեանց ոչ կարացին գիտել զայն որ էրն, և ոչ ի գործս հայեցեալ ծանեան զճարտարապետն ։ Այլ կամ զհուր, կամ զհողմ, կամ զօդ երագ կամ զաստեղաց շրջանս, կամ զջրոց բռնութիւնս ( ծովերէն · ջուրի զօրութիւնը ) կամ ըզլուսաւորս երկնաւորս՝ զարբանեակս աշխարհի աստուածս համարեցան ։ Ընդ որոց թէ ընդ գեղն զուարճացեալք զնոսա աստուածս կարծիցեն . գիտասցեն թէ որչափ ևս նոցա տէրն առաւել լաւ է, զի որ գեղեցկութեան արարչապետն է, նա հաստատեաց զնոսա ։ Ապա թէ ընդ զօրութիւնս և ընդ ազդեցութիւնս զարմանայցեն, իմասցին ի նոցանէ որչափ ևս որ կազմեացն զնոսա առաւել զօրաւոր է ։ Զի ի մեծութենէ և ի գեղեցկութենէ արարածոցն և արարիչն նոցա երևի ։ Բայց սակայն տակաւին և նոցա գոյ սակաւ ինչ մեղադրութիւն ( անոնք մեղադրելի են ) . զի և ( ալ ) նոքա թերևս մոլորեալ խնդրեն ( կը փնտռեն ) զաստուած . և կամին գտանել . ընդ գործս նորա յածեալ ( ալ կը դառնան, կը պտըտին ) քննեն և հաւանին

( նէր համտըլըն ) տեսլեամբն թէ բարւոք
են երևելիքս դարձեալ և նոքա ոչ են նե-
րելիք ( նէրէլու արժանի չէն ) ։ Զի թէ այն-
չափ կարացին գիտել զի որ բաւական ( կա-
րող ) լինիցին նկատել ( քննել ) զաշխարհս ,
զորոյ տէրն զիա՞րդ ոչ գտին վաղվաղակի ։
Թշուառականք են ( ողորմելի ) և ի մեռեալս
( մեռելներուն վրայ ) յոյս նոցա ( զօր . ժ ) ։
Որք համարեցան աստուածս զձեռագործս
մարդկան , զոսկի և զարծաթ , զճարտա-
րութեան արուեստ . և զնմանութիւն ա-
նասնոց ( անասնոց պատկէր ) կամ զքար ան-
պիտան , զձեռագործ նախնեաց ( զօր .
աստուած համարեցան ) ։ Նա թէ ոք հիւսն
զփայտ ինչ գեղեցիկ սղոցեալ . քերեաց
ճարտարութեամբ զամենայն կեղև նորա՝
և հնարեալ ( շինելով ) վայելուչ անօթ պի-
տանի ի սպասաւորութիւն կենաց . և ըզ-
տաշիղ ( յոնղա ) գործոյն ի պատրաստու-
թիւն կերակրոյ ծախեալ ( վառելով ) յա-
գեցաւ ։ Զփայտն խեղաթիւր ( ծուռտուռ-
մուռ ) և ոստովք վարակեալ ( ոստերով պա-
տած , պատապատիլը ) առեալ դրօշեաց ( պատկե-
րացուց . շինեց ) մտադրութեամբ գործոյն



իւրոյ , և խելամտութեամբ ( գիտութե-
նով ) իմաստութեան ապաւորեաց զնա . և
նմանեցոյց զնա պատկերի մարդոյ՝ կամ ա-
նասնոյ վատթարի ( անարգ , անպիտան ) ճըշ-
գրտեցոյց ( նմանցուց ) զնա ։ Եւ արար նը-
մա տուն ըստ նմին արժանի . եդ զնա
առ որմ ( պատին վէր ) և զգուշացաւ նմա
զի մի կործանեսցի ( չիյնայ ) ։ Գիտէ՝ թէ և
իւրում անձինն օգնել ոչ կարէ . քանզի է
պատկեր՝ և կարօտ է օգնականութեան ։
Եւ վասն ամուսնութեան և որդւոց և
ստացուածոց իւրոց՝ մատուցեալ ջշնչէ
( ականջն ի վար զըռ-ցէլ , խօսիլ ըստ յայնով բան
ողէլ ) առ անշնչին , աղաչէ և ոչ ամաչէ ։
Եւ վասն առողջութեան զտկարն
( տկար ) կարդայ ( կը կանչէ ) . և վասն կենաց՝
զմեռեալն աղաչէ , և վասն ի թիկունս հա-
սանելոյ ( օգնելու համար ) տարակուսելոյն
( շուարածին ) մաղթէ ( կ'աղաչէ ) ։ Եւ վասն
ճանապարհորդութեան զայն ( զօր . աղա-
չէ ) որ և ոտն յատանէ չկարէ փոխել ։

Իմաստ . ԳԼ . ԺԳ .

Դարձեալ եթէ բնաւ ելեալ ոք ընդ-
ամենհի ( կատաղէ ) ալիս կամիցի ճանապար-

հորդել՝ առ փայտն որ քան զնաւափայտն տկարագոյն է՝ աղաղակէ․ (առ բայը առաջի խօսքին հետ թարգմանելու է այսինքն աղաղակէ առ փայտն են․)։ Զի զայն թէպէտև ցանկութիւն շահից հնարեցաւ (ստեղծեց) և ճարտարապետ իմաստութեամբ կազմեցաւ, սակայն քո հայր՝ վարէ (կը կառավարէ) տեսչութիւնդ․ զի եդուր և (ալ) իծովս ճանապարհ, և ի մէջ ալեաց շաւիղ զգուշաւոր։ Յայտ արարեալ թէ յամենայնի կարող ես փրկել՝ թէպէտև առանց ճարտարութեան ոք ելանիցէ ի վերայ (մակբայ է հոս)։ Բայց կամիս զի մի պատարկասցի գործ իմաստութեան․ վասն այնորիկ չնչին (պզտր) փայտի հաւատան մարդիկ զանձինս իւրեանց․ և շրջեալ ընդ ալիսն՝ դոյզն լաստիւն (նաւ, ալ) ապրեցան (ազատուեցան)։ Քանզի և ի սկզբանէ ի կորնչել սկայիցն (հսկայ) ամբարտաւանից, յոյս աշխարհի ի լաստափայտն (լաստ, նաւ) ապաւինեալ, եթող աշխարհի զաւակ լինելոյ (մարդիկ նորէն աշխարհիս վրայ բազմանալու) քո ձեռամբդ նաւապետեալ։ Զի օրհնեալ է փայտն որով



լինի արդարութիւն։ Իսկ ձեռագործն անիծեալ․ ինքն՝ և որ արար զնա․ զի նա արար՝ և սա եղծանելի (ան որ կը կորսուի, անցաւոր) աստուած անուանեցաւ։ Զի հաւասարապէս ատելի են Աստուծոյ․ ամպարշտեալն և ամպարշտութիւն իւր։ Զի գործն և գործելին առ հաւասարակ (երկուքն ալ) տանջեսցին։ Իմաստ․ Գլ․ ԺԴ․

Սիրեցէք զարդարութիւն՝ ոյք (դուք որ) դատէք զերկիր։ Խորհեցարուք զտեառնէ բարութեամբ, և միամտութեամբ սրտիւ խնդրեցէք զնա։ Զի գտանի այնոցիկ, որ ոչ փորձեն զնա․ և երևի որոց (զոր․ այնոցիկ, անոնց) ոչ թերահաւատին ի նմանէ (անոր վրայ չեն կասկածիր)։ Զի խորհուրդք թիւրք (սխալ, ծուռ) անջատեն (կը բաժնեն) յԱստուծոյ․ և զօրութիւն փորձ (փորձառու) յանդիմանէ զանզգամս։ Զի յանձն չարարուեստ (չար, ֆէսատ) իմաստութիւն ոչ մտցէ, և ոչ բնակի ի մարմնի վարեցելոյ մեղօք։ Զի սուրբ հոգին իմաստութեան փախիցէ ի նենգութենէ․ և մերժեսցի ի խորհրդոց անմտից․ և յանդիմանեսցէ ի հասանել ի վերայ ա-

նիրաւութեանց ։ Զի մարդասէր Հոգին իմաստութեան՝ ոչ արդարացուցանէ ըզ-հայհոյիչն ի շրթանց իւրոց . զի երիկա-մանց նորա է վկայ Աստուած , և սրտի նո-րա ոստիկան (գիտող) ճշմարիտ . և լեզուի նորա ունկնդիր (լսօղ . է) ։ Զի Հոգի տեառն ելից զտիեզերս . և որ (ով որ , ան որ) ունի զամենայն՝ ունի գիտութիւն բարբառոյ (լեզուի) ։ Վասն այնորիկ և որ շշնջեն զանիրաւս (կամաց մը անիրաւ բան խօսո-ղներն ալ) ոչ ծածկեսցին . և ոչ իրա-ւունք առ նովաւ (անոր քովէն) առանց կըշ-տամբութեան անցցեն ։ Զի խորհրդոց ամ-բարշտաց հարցն և փորձ եղիցի և բանից նո-րա լուր (ձայն) առ տէր հասցէ ի կշտամ-բութիւն անօրէնութեանց նորա (յանդի-մանութեան համար) ։ Զի ունկն նախանձա-ւորութեան լսէ զամենայն , և շշնջիւն քրթմնջանաց՝ (ցած ձայնով տրտնջալը) ոչ ծածկեսցի ։ Այսուհետև զգոյշ լերուք յանօգուտ քրթմնջանէ , և ի բամբասա-նաց խնայեցէք լեզուի . զի շշունջ գաղտ-նի դատարկ (պարապ) ոչ անցցէ և բերան ստախօս՝ սպանանէ զանձն ։ Իմաստ. Գլ. Ա.



Խորհեցան յանձինս իւրեանց զանուղ-ղայս (ախալ մտածութիւն) և ասեն . սակաւ և ցաւագին են կեանք մեր , և ոչ գոյ բը-ժշկութիւն ի վախճանի մարդոյ . և չերև-եցաւ որ դարձաւ (դարձող) ի դժոխոց ։ Զի յանկարծակի եղաք . և յետ այ-սորիկ լինիցիմք իբրև չեղեալք ։ Զի իբ-րև զծուխ շունչ յռնգունս մեր , և իբ-րև զկայծակն (է) բան ի շարժման սրտի մերում . յոր շիջանել՝ մոխիր լինի մարմինն . և ոգին սփռի (կըցնդի , կըկորսուի) իբրև զօդ թոյլ (նուրբ , բարակ) ։ Եւ անուն մեր մոռասցի ժամանակաւ . և ոչ ոք յիշատա-կեսցէ զգործս մեր ։ Անցցեն կեանք մեր իբրև զհետս (ճամբու նշան . փոշի . հետ) ամ-պոյ , և իբրև զշամանդաղ (մարմնոյ մը ան-տեսանելի մասը) ցրուեսցին հալածեալք ի ճառագայթից արեգական , և ի տապոյ (տաքէն) ծանրացեալք ։ Զի անցք (անց-նիլ) ստուերի (շուքի) են կեանք մեր , և չիք խափան (արգիլում , կեցում) վախ-ճանի մարդկան , զի կնքեցաւ (որոշուեցաւ) և ոչ ոք դարձուցանէ ։ Արդ եկայք և վայելեսցուք ի բարութիւնս որ կանս (ալ-

խարհիս), և վարեսցուք արարածովքս ըղ-
ձաղեալք իբրև ի մանկութեան (արարած-
ներուն հետ խաղանք): Պէս պէս գինեօք և
անոյշ իւղովք լցցուք (կշտանանք, գինովնանք).
մի անցցէ առ մեօք (պարապը չանցունենք)
ծաղիկ գարնայնոյ: Բոլորիւք վարդից պը-
սակեսցուք՝ մինչև թառամեալ իցեն (քա-
նի որ չեն թառմած): Մի ոք ամենևին լիցի
անմասն ի մեծամեծար (պատուական) ու-
րախութենէս մերմէ. յամենայն տեղիս
թողցուք զնշանս ուրախութեան. զի
այն է բաժին մեր. և այն (է) վիճակ՝
Բռնադատեսցուք զանանկն անիրաւու-
թեամբ. մի խնայեսցուք յայրին (որբե-
ւարի, խեղճ). մի խորշեսցուք (չամչնանք)
ի բազմաժամանակեայ (շատ տարուան) ալ-
եաց ծերոյն: Այլ օրէնս արդարութեան
բռնութիւն մեր եղիցի. զի տկարութիւն
անպիտան յանդիմանի: Դարանակալ լիցուք
(որոգայթ լարենք, թրք. թուզագ գուրմագ) ար-
դարոյն զի դժպհի (հակառակորդ, բանին չե-
կող) եղև մեզ. և հակառակ կայ գործոց
մերոց, և նախատինս դնէ մեզ (նախատինք
ընել մեզի) զյանցանս օրինաց. և բամ-



բասէ զմեղօք մանկութեան մերոյ: Խոս-
տանայ (կը կարծէ) ունել զգիտութիւն
Աստուծոյ. և որդի տեառն զանձն իւր
անուանէ. և եղև յանդիմանութիւն մը-
տաց մերոց: Ծանր է մեզ և (ալ) տե-
սանելն զնա, զի աննման են այլոց կեանք
նորա՝ և այլազգի (ուրիշ) շաւիղք նորա:
Ի գարշութիւն համարեցաք (սեպուեցանք)
նմա. և խորշի ի ճանապարհաց մերոց՝ իբ-
րև ի պղծութեանց. երանէ (երանի կու-
տայ) զվախճան արդարոց՝ և հպարտա-
նայ՝ կոչէ հայր զԱստուած: Տեսցուք
(տեսնենք) թէ ճշմարիտ իցեն բանք նորա.
և փորձեսցուք զվախճան նորա: Եթէ ի-
ցէ արդարև (իրաւցնէ) որդի Աստուծոյ՝
պաշտպանեսցէ (թող պաշտպանէ անիկա). և
փրկեսցէ զնա Աստուած ի ձեռաց հակա-
ռակորդաց: Թշնամանօք և գանիւք խոշ-
տանգեսցուք (չարչրկենք) զնա: Եթէ լի-
նիցի՞ (տեսնուք) այցելութիւն նմա. զի
զչափ առցուք (հասկընանք, փորձենք) ըղ-
հեզութեան նորա, և խելամուտ լիցուք
անոխակալութեան նորա: Մահու խայ-
տառակութեան դատեսցուք զնա (անիկա

տեսնենք, փորձենք) եթէ լինիցի՞ (փրկութիւն) այցելութիւն նմա ի բանից իւրոց:

Զայս խորհեցան եւ խաբեցան. զի կուրացոյց զնոսա չարութիւնն իւրեանց, եւ ոչ ծանեան զխորհուրդս Աստուծոյ, եւ ոչ վարձուց ակնկալան (սպասեցին) սրբութեան (սուրբ), եւ ոչ ընտրեցին զպատիւ ոգւոց անարատից. զի Աստուած հաստատեաց զմարդն յանեղծութեան, եւ ի պատկեր իւրոյ բարերարութեանն արար զնա: Նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ. եւ փորձեն զնա որ նորա վիճակին սակի են (անոնք որ անոր կ'ըլլան, անոնք որ անոր վիճակին սահմանուած են):

Իմաստ. Գլ. Գ.

Բայց ոգիք արդարոց ի ձեռին Աստուծոյ են, եւ ոչ մերձեսցի ի նոսա մահ: Թուեցան (երեւցան) յաչս անզգամաց թէ մեռան, եւ համարեցան չարչարանք ելք (վախճան) նոցա՝ եւ գնալն ի մէնջ (զօր. համարեցան) բեկումն. բայց նոքա են ի խաղաղութեան: Զի թէպէտ եւ յաչս մարդկան տանջեցան, այլ յոյս նոցա լի է անմահութեամբ: Եւ սակաւիկ ինչ խրատ-



եալք եւ տրտմեալք գտցեն զմեծ բարութիւն. զի Աստուած փորձեաց զնոսա, եւ եգիտ զնոսա իւր արժանիս: Իբրեւ զոսկի ի բովս քննեաց զնոսա, եւ իբրեւ զողջակէզ զոհի (ողջին էրուած, ծուխը) ընկալաւ զնոսա: Ի ժամանակի այցելութեան իւրեանց պայծառասցին, եւ իբրեւ զկայծակն ընդ եղեգն (եղէգին մէջէն) ընթասցին: Դատեսցին զազգս՝ եւ ընկալցին զժողովուրդս. եւ թագաւորեսցէ նոցա Տէր յաւիտեան: Յուսացեալք ի նա՝ իմասցին զճշմարտութիւն. եւ հաւատարիմք զօրով (ըլլալով) սիրով ակնկալցին նմա: Զի շնորհք եւ ողորմութիւն ի վերայ սրբոց նորա (զօր. եղէցի) եւ այցելութիւն ի վերայ ընտրելոց նորա:

Իսկ ամպարիշտք ըստ խորհրդոց իւրեանց ընկալցին զպատիժս. որ անփոյթ արարին (անհոգ եղան) զիրաւանց. եւ եղեն ապստամբք ի Տեառնէ. զի որ զիմաստութիւն եւ զխրատ անարգէ՝ թշուառական է, եւ ընդունայն է յոյս նոցա. եւ վաստակք նոցա անօգուտք, եւ անպիտան գործք նոցա: Կանայք նոցա անմիտք եւ

չարաբար (չար) մանկունք նոցա. և անիծեալ ծնունդք նոցա:

Զի երանեալ է ամուլն անարատ՝ որ ոչ գիտաց զանկողինս յանցանաց. ընկալցի պտուղ յայցելութեան ոգւոյ: Եւ ներքինի՝ որ ոչ գործեաց ձեռօք զանօրէնութիւն, և ոչ խորհեցաւ զանառնէ չարութիւն (զօր. երանելի է). տացի նմա շնորհ ընտիր ըստ հաւատոյն. և վիճակ ցանկալի ի տաճարի տեառն: Զի ընդ վաստակոց բարեաց (վաստակոց տեղ, փոխարէն) պտուղ փառաւոր է, և արմատ անսխալ իմաստութենէ: Որդիք շնացելոց թերակատարք եղիցին. և զաւակ անօրէն անկողնոյ սատակեսցի: Եթէ երկայնակեացք եղիցին՝ (երկար ապրին) յոչինչ համարեսցին, և անարգ (անպատիւ) ի վախճանի ծերութեան նոցա: Եւ եթէ արագ սատակեսցին՝ (եթէ որ շուտ մեռնին) ոչ կալցին յոյս (յոյս պիտի չունենան). և ոչ յաւուրն յանդիմանութեան (դատաստանի) մխիթարութիւն: Զի ազգի (սերունդ) անիրաւի չարաչար կատարած (վերջ):

Իմաստ. Գլ. Գ.

# ԽՆԴԻՐ

Խնդիրը այն բառն է որ ուրիշ բառի մը միտքը կը լրացնէ կամ կ'ամբողջացնէ:

— Խնդիր առնող բառերն են. անունը, ածականը, բայը, նախդիրը:

— Բայական անունները սեռական հոլով խնդիր կ'առնեն՝ որ մեր քերականութեանց մէջ յատկացուցիչ կ'ըսուի, և բանի մը որուն ըլլալը կը ցուցնէ: Ինչպէս տուն իմ, հոս իմը յատկացուցիչ է տունին: Որո՞ւ տուն. պատասխ. իմ:

— Գրաբառի մէջ յատկացուցիչը առաջ ալ կը դրուի ետքն ալ. բայց աշխարհաբառի մէջ միշտ առաջ կը դրուի: Ուստի կ'ըսուի. իմ տուն և չէ թէ տուն իմ:

Աշխարհաբառի մէջ ուշադրութիւն ընելու է, յատկացուցիչը իրեն վերաբերեալ մասերովը յատկացեալէն յառաջ դնելու:

— Ածականներն ալ այլեայլ հոլով խնդիր կ'առնեն. ինչպէս լի պտղովք, արժանի վարձուց. հոս լի ածականը գործ խնդիր առած է. արժանին տրական:

— Ածականներն ալ միշտ առաջ կը դրուին աշխարհաբառի մէջ և գոյականին չեն համաձայնիր: Ուստի ուշադրութիւն ընելու է գրաբառին յետադաս համաձայնած կամ չհամաձայնած ածականները գոյականէն առաջ դնելու:

Երբ մէկ քանի յատկացուցիչ միևնոյն յատկացեալն ունենան՝ յատկացեալը առջինին քովը միայն կը դրուի և միւսներուն քով զօրութեամբ կ'իմացուի, թէ որ զօրութեամբ դրուած յատկացեալը նախադիր ունենայ, յատկացուցիչին վրայ կը դրուի:

(Հետևեալ գլխոյն մէջ ուշադրութիւն ընելու է աշակերտը սոյն կանոնիս վերաբերեալ օրինակներուն:)

Յայնժամ կացցէ արդարն բազում համարձակութեամբ հանդէպ (դիմաց) նեղչաց իւրոց, և որոց անգոսնէին (վար կը զարնէին) զվաստակս նորա, տեսեալ զնա խռովեսցին անհնարին (սաստիկ) երկիւղիւ, և զարհուրեսցին (սարսափին) ի վերայ սքանչելի փրկութեան նորա: Եւ զղջասցին ի միտս իւրեանց (ինքնիրենց), և առ նեղութեան անձանց յոգւոց հանիցեն և ասասցեն: Սա այն այր է զոր երբեմն մեք ծաղր առնէաք, և յառակս նախատանաց (զօր. առնէաք): Մեք անմիտք ըզվարս նորա մոլորութիւն համարէաք՝ և զվախճան նորա անարգութիւն: Զիարդ համարեցաւ ընդ որդիս Աստուծոյ (Աստուծոյ որդւոց կարգը դասուեցաւ) և ընդ սուրբս վիճակ նորա: Ուրեմն մոլորեցաք ի ճանապարհէ ճշմարտութեանն, և լոյսն արդարութեան ոչ լուսաւորեաց զմեզ, և արեգակն արդարութեան ոչ ծագեաց ի միտս մեր: Անօրէնութեան և կորստեան շաւղօք լցաք և գնացաք ընդ անկոխ անապատ. և զճանապարհս տեառն ոչ ծանեաք: Զի՞նչ շահ եղև մեզ հպարտութիւնն, և զի՞նչ մեծութիւն ամբարտաւանութեանն իցէ մեզ նպաստաւոր: Անց այն ամենայն իբրև զստուեր և իբրև զհամբաւ առն ընթացեալ (վազող), և իբրև զնաւ սահեալ (սահիլ, խայտալով) ի ջուրց կուտակելոց (զօր. ալեաց). զորոյ իբրև անցանիցէ՝ ոչ գոյ զհետան գտանել

(չգտնուէր), և ոչ զշաւիղս գնացից նորա ի մէջ ալեաց (զօր. գտնել): Կամ իբրև զհաւու թռուցելոյ յօդս, որոյ ոչ գտանին նշմարանք (հէչ, իզ) ընթացից (ճամբու). բաղխելով (զարնելով) մագլայն (Բօշ-լըղըն օտքը, ըլը-նգները) պատառեալ զհողմն թեթև և հերձեալ բռնութեամբ ընդ ոլորտս մտանէ (կը դառնայ). յածեալ թևոցն (թևերը զարնելով) յառաջադէմ սլանայ (կը թռչի) և յետ այնորիկ ոչ գտանի նշանակ ամբառնալոյն նորա: Կամ իբրև ի նետէ ձգելոյ ի նպատակ՝ (նշան առնելու համար դրուած տեղ մը՝ կամ ո՛ և իցէ բան մը*) կարեալ օդն վաղվաղակի յինքն կարկատեցաւ (միացաւ) առ ի չգիտելոյ զանցս նորա (անոր ճամբան չգիտցուելու հէրպօլ): Նոյնպէս և մեք եղեալք՝ պակասեցաք, և առաքինութեան նշանակ ոչ կարացաք ցուցանել. բայց ի չարիս մեր մաշեցաք: Զի յոյս ամպարշտի իբրև փոշի յարուցեալ ի հողմոյ. և զարդի սաստայն (տօզ, մա-

* Աշակերտը տանկ երկար բացատրութեամբ բառերը, որոնց աշխարհաբարը ուրիշ կերպով չըլլար՝ պէտք է միտքը հասկընայ և գրաբարին պէս գրէ:



մօզ) և զեղեամն (ցօղ, խրաղը) ի մրրկէ հալեալ մանրի. և իբրև զծուխ մաշեալ ի հողմոյ կամ իբրև զյիշատակ իջաւորի միոյ աւուր գնացելոյ (մէկ օրուան ըսֆ տեղ մը կեցող ճամբորդ):

Բայց արդարք յաւիտեան կեցցեն. և ի տեառնէ վարձք նոցա. խնամք նոցա ի բարձրելոյն (զօր. էն): Վասն այնորիկ ընկալցին զթագաւորութեան վայելչութիւն, և զթագն գեղեցկութեան (գեղեցիկ) ի ձեռանէ տեառն, զի աջով իւրով հովանի լիցի նոցա, և բազկաւ իւրով վերակացու լիցի նոցա: Առցէ սպառազինութիւն զնախանձ իւր, և վառեսցէ (զինէ) զարարածս առ ի խնդրելոյ զվրէժ ի թշնամեաց: Զգեցցի զրահս զարդարութիւն և դիցէ սաղաւարտ զդատաստանն անաչառ: Առցէ վահան զսրբութիւնն անկըկանդ (անյաղթելի), և սրեսցէ զհասու (սուր) բարկութիւնն ի սուսեր. և պատերազմեսցի խառն ընդ նմա և աշխարհս առ անզգամս: Գնասցեն նետք կորովիք փայլատակմանց (կայծակ) և իբրև ի լայնալիճ (լայն) աղեղանէ (աղեղն, օխ, եայ) յամ-

պոյն ոստիցեն (ըսել ցատքեն) ի նպատակս (Նպատակ, նշան առնելու). և ի քարընկեց բարկութենէ թօթափեսցի լիով (առատի) կարկուտ: Զայրագնեսցի (ըսել բարկանայ) ի վերայ նորա ջուր ծովու, և գետք ողողեսցեն (ըսել հոսին) անխնայ, ի դիմի հարցի (զարնուի) հողմն բռնութեան, և իբրև զմրրիկ հոսեսցէ (փչէ, տանէ) զնոսա: Աւերեսցէ զամենայն երկիր անօրէնութիւն. և խարդախութիւն կործանեսցէ զաթոռս բռնաւորաց: Իմաստ. Գլ. Ե.

— Նախդիրը առաջ դրուող բառը կ'առնէ: Աստի թէ որ յատկացուցիչը յատկացեալէն առաջ դրուի՝ անոր նախդիրը կ'առնէ. նոյնպէս ածականը գոյականէն առաջ դրուի նէ՝ անոր նախդիրը կ'առնէ:

— Երբեմն ալ երկուքին վրայ կրնայ կրկնուիլ:

— Աստի ուշադրութիւն ընելու է հոլովները չշփոթելու. ինչպէս. Փրկեցաւ յանիծուցն բերանոյ. հոս նախդի-



րը Բերանոյինն է. վասն զի ծուրիէ ազատեցաւ, — ի բերանոյ, բացառական է, վասն որոյ շատ օգտակար կ'ըլլայ թարգմանութիւնը, քանի մը երբ սանկ կանոններ աշակերտին բացատրել տրուի:

— Նախադրութեան նախդիրն ալ իրենց խնդրոյն վրայ կրնան կրկնուիլ:

— Նոյնպէս նախադրութիւն մը զօրութեամբ դրուած ատենը նախդիրը եթէ ունի՝ խնդրոյն վրայ կը դրուի:

Լուարուք թագաւորք, և ի միտ առէք. ուսարուք դատաւորք ծագաց երկրի: Ունկն դիք որ ունիք զբազմութիւն և պերճացեալ էք (կը փքէք, կը հպարտանաք) ի վերայ ամբոխից ազգաց: Զի ի Տեառնէ տուաւ ձեզ հարստութիւնդ, և իշխանութիւնդ ի բարձրելոյն, որ պահանջեսցէ զգործս ձեր, և քննեսցէ զխորհուրդս: Զի սպասաւորք էք նորա թագաւորութեանն, և ոչ դատիք ուղղութեամբ, և ոչ պահեցէք զօրէնս նորա, և ոչ գնացէք ըստ կամացն Աստուծոյ. ա-

հիւ և տագնապաւ հասցէ ի վերայ ձեր։ Զի դատաստան անաչառ իշխանաց լինի այլ ռամիկն ներելի ողորմութեան է։ Հզօրք հզօրագոյնս պահանջեսցին (պէտէ տապուլէն), զի ոչ առնու ակն (էրէսպաղըս-ըէ-ն չըքէր), և ոչ խորշի ի մեծութենէ. զի զփոքր և զմեծ ինքն արար. և զմի օրինակ խնամ ունի ամենեցուն. բայց ի վերայ զօրաւորաց զօրաւոր քննութիւն հասանէ։ Իմաստ. Գլ. Զ.

---

# ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ

Եւ արար Սամուէլ զամենայն զոր խօսեցաւ ընդ նմա Տէր. և եկն ի Բեթլեհէմ, և զարհուրեցան ծերք քաղաքին ի պատահել նմա, և ասեն՝ խաղաղութիւն իցէ մուտք քո տեսանողդ (խէր է գօլը)։ Եւ ասէ. խաղաղութիւն է, զոհել Տեառն եկի. սրբեցարուք և ուրախ լերուք ընդ իս այսօր։ Եւ սրբեաց զՅեսսէ և զորդիս նորա, և կոչեաց զնոսա ի զոհս։ Եւ եղև ի մտանելն նոցա. ետես



զԵղիաբ և ասէ, այլև առաջի Տեառն օծեալ իւր (գօր. է)։ Եւ ասէ Տէր ցՍամուէլ. մի հայիր ընդ տեսիլ դորա, և մի՛ ի մեծութիւն հասակի դորա. զի անարգեցի զդա (ափոր չէաւնեցայ) զի ո՛չ եթէ որպէս տեսանիցէ մարդ՝ տեսանէ Աստուած, զի մարդ հայի յերեսս, և Աստուած հայի ի սիրտ։ Եւ կոչեաց Յեսսէ զԱմինադաբ, և անց առաջի Սամուէլի. և ասէ՝ և (զդա) ոչ զդա ընտրեաց Տէր։ Եւ անցոյց Յեսսէ զեօթնեսին (եօթն տը) զորդիսն իւր առաջի Սամուէլի. և ասէ Սամուէլ ցՅեսսէ՝ ոչ ընտրեաց ի դոցանէ Տէր։ Եւ ասէ Սամուէլ ցՅեսսէ. այդչափ են մանկունք (տղաները). և ասէ՝ կայ միւս ևս փոքրիկ (ուրիշ էն պըզըկ մը) և արածէ խաշն (հօվուտլըգ էնտը)։ Եւ ասէ Սամուէլ ցՅեսսէ, առաքեա և ած զնա. զի ոչ բազմեսցուք (նէրմանօրէ չէնքնուպէր) մինչև ի գալ նորա այսր. և առաքեաց և ած զնա, և նա էր կարմիր և աչօք գեղեցիկ, և բարւոք տեսանելով (թէկէօմ) Տեառն։ Եւ ասէ Տէր ցՍամուէլ, արի օծ զԴաւիթ, զի դա է

բարի. եւ առ Սամուէլ զեղջիւրն իւղոյ, եւ օծ զնա ի մէջ եղբարց իւրոց: Եւ խա-ղաց ([illegible]) հոգի տեառն ի վերայ Դաւ-թի յօրէ յայնմանէ եւ առ յապա ([illegible]). եւ յարեաւ Սամուէլ եւ գնաց յԱրիմաթեմ. եւ հոգի Տեառն վերացաւ ի Սաւուղայ: Եւ խեղդէր զնա այս չար ([illegible]) ի տեառնէ. եւ ասեն ցնա ծա-ռայքն իւր. ահա այս չար ի տեառնէ խեղդէ զքեզ. խօսեսցին ծառայք քո ա-ռաջի քո, եւ խնդրեսցեն տեառն մերում այր մի որ գիտիցէ երգել քնարաւ ([illegible]). եւ եղիցի ի հասանել ([illegible]) ի վերայ քո այսոյն չարի որ յԱստուծոյ ([illegible]), երգեսցէ քնարաւն եւ դիւր լի-ցի քեզ ([illegible]) եւ հանգուսցէ զքեզ: Եւ ասէ Սաւուղ ցծառայսն իւր, տե-սէք ([illegible]) ինձ այր մի որ բարւոք երգիցէ ([illegible]), եւ ածէք զնա առ իս: Պատասխանի ետ մի ոմն ի մանկտւոյ նորա եւ ասէ. Ահա տեսի զորդի Յես-սեայ Բեթղահեմացի, եւ գիտէ սաղմոս ([illegible]), եւ այր իմաստուն եւ այր պատե-րազմող, եւ այր հանճարեղ, եւ ճարտա-



բանին, եւ այր գեղեցիկ տեսլեամբ, եւ Տէր ընդ նմա:

Եւ առաքեաց Սաւուղ հրեշտակս ([illegible]) առ Յեսսէ, եւ ասէ. առաքեա առ իս զԴաւիթ որդի քո որ ի հօտի քումդ է: Եւ առ Յեսսէ արդու մի հացի, եւ տիկ մի գինւոյ եւ ուլ մի յայ-ծեաց, եւ առաքեաց ի ձեռն Դաւթի որդւոյ իւրոյ Սաւուղայ: Եւ եմուտ Դաւիթ առ Սաւուղ, եւ կայր ի սպասու առաջի նորա. եւ սիրեաց զնա, եւ եղեւ նորա կապարճակիր ([illegible]): Եւ ա-ռաքեաց Սաւուղ առ Յեսսէ եւ ասէ. կացցէ Դաւիթ առաջի իմ, զի եգիտ շնորհս առաջի աչաց իմոց ([illegible]): Եւ լինէր յորժամ հասանէր այսն չար ի վերայ Սաւուղայ, առնոյր Դաւիթ զքնարն եւ նուագէր ձեռամբ իւրով, եւ հանգուցանէր զՍաւուղ, եւ դիւրանայր նմա, եւ մեկնէր ի նմանէ այսն չար:

Ա. Թագ. ԺԷ. Ժը.

Եւ ժողովեցին այլազգիքն զբանակս իւրեանց ի պատերազմ, եւ գումարեցան ([illegible]) ի Սոկքով Հրէաստանի. եւ

բանակեցան (բանակ, օրդու դնել) ընդ Սոկքով և ընդ Ազեկայ (մէջ տեղ) յԵփես-դոմմին։ Եւ Սաւուղ և արք Իսրայէլի. ժողովեցան և նոքա ի հովիտն, և ճակատեցան ի պատերազմ (շարուեցան) ընդդէմ այլազգեացն։ Եւ այլազգիքն կային ի վերայ լերինն յայնմ կողմանէ, և Իսրայէլ կայր ի վերայ լերինն յայսմ կողմանէ, և հովիտն ի մէջ նոցա։ Եւ ել այր զօրաւոր ի ճակատէ այլազգեացն Գողիադ անուն նորա ի Գեթայ. բարձրութիւն նորա վեց կանգուն և թզաւ (մէկ թիզ. խարըշ). և սաղաւարտ ի գլուխ նորա. և զրահս վերտս զգեցեալ. և կշիռ (չափ, ծանրութիւն) զրահից նորա հինգ հազար սիկղ պղնձւոյ և երկաթոյ։ Եկն եկաց. ձայն ետ ի ճակատն Իսրայէլի (կանչեց, պօռաց) և ասէ ցնոսա. ընդէ՞ր ելանէք ճակատել ի պատերազմ ընդդէմ մեր. ո՞չ ապաքէն ես այլազգի եմ և դուք Եբրայեցիք ծառայք Սաւուղայ. ընտրեցէք դուք ձեզ այր մի և իջցէ առ իս, եթէ կարասցէ կռուել ընդ իս և հարկանել (զարնել) զիս՝ եղիցուք մեք ձեզ ի ծա-



ռայս. ապա թէ ես յաղթեցից և հարից զնա, եղիջիք դուք մեզ ի ծառայս և ծառայեսջիք մեզ։ Իբրև լուաւ Սաւուղ և ամենայն Իսրայէլ զբանս այլազգւոյն, զահի հարաւ (սարսափ դողաց) և երկեաւ յոյժ։ Եւ մատուցեալ այլազգւոյն՝ կանխեալ և անագանեալ (ժամանակ ժամանակ, իրիկուն, առտու) արձանանայր, ձայնէր աւուրս քառասուն։ Ա. Թագ. Գլ. ԺԷ.

Եւ եղև օր մի և զոհեաց Եղկանա. և ետ Փեննանայ կնոջ իւրում և ուստերաց նորա, և դստերաց նորա մասունս. և Աննայի ետ մասն մի, զի ոչ գոյր նորա որդի։ Բայց զԱննա սիրէր Եղկանա՝ առաւել քան զՓեննանա. և Տէր փակեաց զարգանդ նորա, զի ոչ ետ նմա որդի, ըստ նեղութեան իւրում և ըստ արտմութեան անձին իւրոյ. և տրտմեալ էր վասն այնորիկ՝ զի փակեաց Տէր զարգանդ նորա առ ի չտալոյ նմա որդի։ Եւ այնպէս առնէր ամի ամի (ամէն տարի) յելանելն նորա ի տուն Տեառն. և տրտմէր և լայր և ոչ ուտէր։ Եւ ասէ ցնա Եղկանա այր իւր. Աննա՛։ Եւ ասէ ցնա. աւասիկ եմ

տէր (հրամմեցէք տէր). և ասէ ցնա. զի՞ է քեզ (ի՞նչ ունիս) զի լաս և ընդէ՞ր ոչ ուտես, և ընդէ՞ր հարկանէ զքեզ սիրտ քո (տրտում ես, ինչու չուտես). ո՞չ լաւ եմ ես քեզ քան զտասն որդի:

Եւ յարեաւ Աննա, յետ ուտելոյ նոցա ի Սելով, և եկաց առաջի Տեառն. և Հեղի քահանայ նստէր յաթոռ առ սեմս տաճարին Տեառն: Եւ նա ցաւագին անձամբ (սրտի ցաւով) եկաց յաղօթս առ Տէր. և ելաց լալով* (շատ լացաւ) և ասէ. Ադոնայի տէր (ամենակալ տէր, հզօրին տէրն է) եթէ հայելով հայեսցիս ի տառապանս աղախնոյ քոյ և յիշեսցես զիս. և տացես աղախնոյ քում զաւակ առն (արու, տղայ) տաց զնա նուէր առաջի քո մինչև ցօր մահուան իւրոյ. և զգինի և արբեցութիւն (խմիչք) մի արբցէ, և երկաթ մի ելցէ ի գլուխ նորա (գլուխը ածելի չդպչի): Եւ եղև իբրև յաճախեաց կալ յաղօթս (աղօթքը երկնցուց) առաջի Տեառն.

* Անորոշ դերբային գործիականը իւր բային վերայ կրկնուելու ըլլայ՝ նէ՝ խօսքին սաստկութիւն կու-տայ:



և Հեղի քահանայ միտ դնէր (մտիկ կ'ընէր) բերանոյ նորա. և նա խօսէր ի սրտի իւրում, և շրթունք իւր ոչ շարժէին, և բարբառ (ձայն) իւր ոչ լինէր լսելի (չէր լսուէր). և լուաւ նմա Տէր: Եւ համարեցաւ զնա Հեղի արբեալ (գինով կարծեց) և ասէ ցնա պատանեակն (ծառան) Հեղեայ. մինչև ցերբ կայցես յարբեցութեան (գինով պիտի կաս) թափեա ի քէն զգինիդ քո (խելքդ գլուխդ բեր), և գնա յերեսաց (մէջտեղէ գնա) Տեառն: Եւ պատասխանի ետ Աննա՝ և ասէ. ոչ այդպէս տէր (այդպէս չէ) այլ կին վշտագնեալ եմ ես օգւով, և գինի և արբեցութիւն ոչ է իմ արբեալ. և հեղում զանձն իմ (սիրտս կը թափեմ) առաջի Տեառն, մի համարիր զաղախին քո դուստր ժանտ (գէշ կին) զի ի բազում տրտմութենէ և ի տխրութենէ իմմէ վարանեալ կամ (շուարած եմ) մինչև ցայժմ: Ետ նմա պատասխանի Հեղի՝ և ասէ. երթ ի խաղաղութիւն (երթաս բարով) և Աստուած Իսրայէլի տացէ քեզ զամենայն խնդրուածս քո զոր խնդրեցեր ի նմանէ. և ասէ Աննա, եգիտ աղախին քո շնո-

նորհս առաջի քո (շնորհակալեմ)։ Եւ գնաց կինն զճանապարհ իւր, և եմուտ ի վանս (օթեւանը) իւր՝ և կերաւ ընդ առն իւրում, և խօսեցաւ, և երեսք իւր այլ ոչ ևս տխրեցան. և կանխեցին ընդ առաւօտն (առտուան կանուխ ելան) երկիր պագին տեառն, և գնացին զճանապարհս իւրեանց։ Եւ յիշեաց տէր զԱննա, և եղև ի ժամանակի աւուրցն (օրերը լրանալուն) և ծնաւ որդի, և կոչեաց զանուն նորա Սամուէլ։

Եւ ել այրն Եղկանա և ամենայն տուն նորա (բոլոր ընտանիքը) զոհել ի Սելով զզոհ աւուրցն (տարեկան, ամէն տարին)։ Եւ Աննա ոչ ել (չգնաց) ընդ նմա. զի ասաց ցայր իւր, թէ մի ելցէ անդր մանուկս, յորժամ հատուցից զսա ի ստենէ (մինչև որ ծիծէ, կաթէ կտրեմ). և յանդիման լիցի (կայնի) առաջի տեառն, և նստցի անդ մինչև յաւիտեան։ Եւ ասէ ցնա Եղկանա այր իւր. արա որ ինչ բարի թուի առաջի աչաց քոց (ինչպէս որ կ'ուզես)։ Եւ նստաւ կինն և սնոյց զորդին իւր՝ մինչև հատոյց զնա ի ստենէ։ Եւ



ել ընդ նմա ի Սելով երեմենեաւ (երեքտարեկան) զուարակաւ. և մտին ի տուն տեառն. և սպան հայրն նորա զզոհն՝ զոր առնէր աւուրց յաւուրս (ամէն տարին)։ Եւ մատոյց զմանուկն և սպան զզուարակն վասն փրկութեան մանկանն *։ Եւ մատոյց Աննա մայր մանկանն զմանուկն առ Հեղի և ասէ. յիս տէր իմ (ինծի նայէ, տէր) կենդանի է անձն քո (կ'երդնում անձիդ վրայ) ես այն կինն եմ, որ կայի առաջի քո ընդ քեզ՝ կալ յաղօթս առ տէր վասն մանկանս այսորիկ**, և ետ տէր զխնդրուածս իմ, զոր խնդրեցի ի նմանէ։ Եւ տամ զդա փոխ տեառն՝ զամենայն աւուրս որչափ և կեցցէ, և պագին երկիր անդ տեառն։

Ա. Թագ. Գլ. ա.

Եւ մանուկն Սամուէլ՝ կայր ի սպասու (ծառայութիւն կ'ընէր) երեսաց տեառն

* Առաջուընէ զուրցուած կամ որոշեալ անուններուն վրայ յօդ կը դրուի. այս. այդ. այն դերանուններուն տեղ. փոխանակ ըսելու այն մանկանն։

** Ցուցական դերանունները գոյականէն ետք դրուելին նէ՝ երկայն հոլովով կը համաձայնին անոր հետ և գոյականին վրայ ս, դ, ն գրերէն մէկը կը դրուի՝ դերանուններին համեմատ։

(փէրտէ) առաջի Հեղեայ քահանայի: Եւ որդիք Հեղեայ քահանայի որդիք ժանտ (էին) և ոչ ճանաչէին զտէր: Եւ իրաւունք քահանային էին (քահանան իրաւունք ունէր) առ ի ժողովրդենէն յամենայնէ որ զոհէր (բոլոր զոհաւորներէն): Գայր մանուկ քահանային մինչդեռ եփէր միսն, և երեքժանի (երեք ծայր ունեցող չաթալ) մսահան ի ձեռին իւրում, և արկանէր զայն ի սան մեծ պղնձին (մեծ պղինձին, խազան) և զամենայն որ ինչ գայր ի մսահանին՝ առնոյր իւր քահանայն: Եւ տայր մանուկն ցայրն որ զոհէրն. տուր միս խորովելոյ քահանային. և ոչ առնում ի քէն միս եփեալ ի սանէ: Եւ ասէր այրն որ զոհէր՝ ծխեսցի (թող եռայ, եփի) նախ ճարպն (իւղը) որպէս օրէն է, և ապա առցես քեզ յամենայնէ որոց և ցանկասցի անձն քո (որն որ ուզէս). և նա ասէր՝ ոչ. բայց եթէ արդ տացես (հիմա պէտք է որ տաս). և եթէ ոչ տաս՝ ուժգին առից (բռնութեամբ, զօրով կ՚առնեմ): Եւ էին այն մեղք մեծամեծք յոյժ մանկանցն առաջի տեառն: Եւ Սամուէլ մանուկն պաշտէր առաջի տեառն



(փէրտէ կը ծառայէր) արկեալ զիւրև (վրան առած, հագած) եփուտ, և կրկնոց փոքրիկ առնէր նմա (կը շինէր) մայրն իւր, և տանէր նմա աւուրց յաւուրս յելանել* ընդ առն իւրում զոհել զզոհ աւուրցն: Եւ այց արար (նայեցաւ) տէր Աննայի և ծնաւ նա երիս ուստերս և երիս դստերս:

Եւ մեծացաւ Սամուէլ առաջի տեառն: Եւ Հեղի ծերացեալ էր յոյժ, և լսէր (կ՚իմանար) զամենայն ինչ զոր առնէին որդիք նորա ընդ որդիսն (որդոց) Իսրայէլի: Եւ ասէ ցնոսա. ընդէ՞ր առնէք դուք ըստ բանին ըստ այսմիկ զոր ես լսեմ բանս (լսածներս) ի բերանոյ ամենայն ժողովրդեանն տեառն: Մի՛ որդեակք, (զօր. տղաք, ընէք) զի ոչ է բարւոք լուրն զոր ես լսեմ. առ ի չծառայելոյ ժողովրդեանն տեառն (որ ժողովրդեան չէք ծառայեր): Զի եթէ մեղանչելով մեղանչիցէ այր՝ առն (մէկը ուրիշին), կացցեն յաղօթս վասն նորա առ տէր, և եթէ տեառն մեղանչիցէ, ո՞վ կաց-

* Անորոշ դերբային նախդրիւ տրականը՝ ատեն, ժամանակ կը ցուցնէ. երբեմն ալ աննախդիր կը դրուի և դարձեալ ատեն կամ համար կը նշանակէ.

ցէ յաղօթս վասն նորա ։ Եւ ոչ լուէին ձայ-
նի (մտիկ չէին ընէր) հօրն իւրեանց . զի կա-
մելով կամէր Տէր եղծանել (ջնջել, վերցնել)
զնոսա ։ Եւ մանուկն Սամուէլ երթայր և
մեծանայր (երթալով կը մեծնար) և հաճոյ էր
Տեառն և մարդկան ։ Եւ եկն հրեշտակ
Տեառն առ Հեղի և ասէ . այսպէս ա-
սէ Տէր ։ Յայտնելով յայտնեցայ ամենայն
տան հօր քո մինչդեռ էին նոքա յերկրին
Եգիպտացւոց ծառայք տան Փարաւոնի ,
և ընտրեցի զտուն հօր քո յամենայն գա-
ւառաց Իսրայելի քահանայանալ ինձ և
ելանել առ սեղանն իմ , արկանել խունկս ։
Եւ ետու տան հօր քում զամենայն զառ
ի հրոյ (կրակի վրայ եփած) որդւոցն Իսրա-
յելի ի կերակուր ։ Եւ ընդէր հայեցար ի
խունկս իմ և ի զոհս իմ ժպիրհ (նենգաւոր ,
չար) ակամբ ։

Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր
Աստուած Իսրայելի , ասացի (որոշեր էի) թէ
տուն քո և տուն հօր քո շրջեսցին (պիտի
փոխուին , փոխն ու վերայ ըլլան) առաջի իմ մինչև
յյաւիտեան . և արդ ասէ Տէր . քաւ լի-
ցի ինձ (ամենևին , ոչ երբէք , ասկէ . հեռու ,



ուրիշ կերպով պիտի ընեմ) այլ զփառաւորիչս
իմ փառաւորեցից , և որ արհամարհէ
զիս՝ անարգեսցի ։ Ահա աւուրք եկեսցեն
և (որ) սատակեցից զզաւակ քո , և զզա-
ւակ տան հօր քո . և մի եղիցի ծեր ի տան
քում . և հայեսցիս սաստիկ (շատ անգամ)
կողկողագին (արցունքով) յամենայն բարու-
թիւնս՝ զոր արասցէ Տէր Աստուած Իս-
րայելի . և մի՛ եղիցի ծեր ի տան քում զա-
մենայն աւուրս (մինչև վերջը) ։ Եւ այր ոչ
սատակեցից (մեռցնեմ) ի սեղանոյ իմմէ , առ
ի սպառել աչաց իւրոց (մինչև որ աչքերը
աղէկ մը ակարանան) և մաշելոյ զանձն նորա ։
Եւ ամենայն միաւորդ տան քո անկցին սը-
րով արանց (թշնամեայ) . և այն նշանակ լի-
ցի քեզ՝ որ եկեսցէ ի վերայ երկոցուն
որդւոցն քոց Ոփնեայ և Փենեհեսի . ի մի-
ում աւուր մեռցին երկոքեան ։ Եւ յա-
րուցից (պիտի հանեմ) ինձ քահանայ հաւա-
տարիմ . որ զամենայն ինչ ի սրտի իւրում
և յանձին իւրում արասցէ , և շինեցից
նմա տուն հաւատարիմ . և շրջեսցի առա-
ջի օծելոյ իմոյ զամենայն աւուրս ։ Եւ ե-
ղիցի՝ ամենայն որ մնասցէ ի տան քում

(ու որ ձեր տանը մնայ*) եկեսցէ երկիր պա-
գանել նմա դանգի միոջ արծաթոյ (ստակի
մը համար) եւ նկանակի միոյ հացի, եւ ասի-
ցէ. ընկեա զիս ի տեղի մի քահանայու-
թեան քոյ, զի կերայց հաց: Գլ. Բ.

Ապա այլազգիքն պատերազմէին ընդ Իսրայէլի. եւ փախեան արք Իսրայէլի (Իս-
րայէլցիք) յերեսաց այլազգեաց (այլազգի-
ներէն). եւ անկանէին** վիրաւորք ի լերինն Գեղբուա: Ապա հասին այլազգիքն ի Սաւ-
ուղ (վրայ) եւ յորդիսն նորա.*** եւ հարին այլազգիքն զՅովնաթան եւ զԱմինադաբ եւ զՄելքիսուէ զորդիս Սաւուղայ. եւ ծան-
րացաւ պատերազմն ի վերայ Սաւուղայ (սաստկացաւ, ծանրացաւ, կամ Սաւուղին վրայ ծանր). եւ գտին զնա արք կորովիք (քաջ) աղեղնա-
ւորք՝ եւ վիրաւորեցաւ ընդ կաթափանդան (կողքէն) ի ներքս: Ապա ասէ Սաւուղ ցկա-

* Եղիցի բայով խօսք սկսելը գր. հայերէնի յատուկ ձեւ մ'է որ աշխարհաբառի մէջ շատ անգամ նշանակութիւն չունի եւ չթարգմանուիր:

** Կատարեալի տեղ շատ անգամ անկատար կը գործածուի. ասիկա գրաբար հայերէնի մէկ եական ձեւն է:

*** Նախդրիւ տրականը վրայ ալ կը նշանակէ:



պարճակիրն (նետ կրող, սիլահտար) իւր. մերկ-
եա (հանէ) զսուր քո եւ խոցեա զիս նո-
վաւ. գուցէ գայցեն անթլփատքն եւ խո-
ցոտիցեն զիս, եւ խաղասցեն զինեւ (զիս նա-
խատեն, ծաղր ընեն). եւ ոչ կամեցաւ կա-
պարճակիրն՝ քանզի երկեաւ յոյժ. եւ առ
Սաւուղ զսուսերն իւր եւ անկաւ ի վերայ
նորա: Իբրեւ ետես կապարճակիրն եթէ
մեռաւ Սաւուղ՝ անկաւ եւ նա ի վերայ
սուսերին իւրոյ եւ մեռաւ ընդ նմա: Եւ
իբրեւ տեսին արք Իսրայէլի՝ որ յայնկոյս
հովտին (ձոր) եւ որ յայնկոյս Յորդանա-
նու, եթէ փախեան արք Իսրայէլի, եւ թէ
մեռաւ Սաւուղ եւ որդիք նորա, թողին
զքաղաքս իւրեանց եւ փախեան: Եւ եղեւ
ի վաղիւն անդր (միւս օրը) եկին այլազգիքն
մերկացուցանել (կողոպտել, սոյմագ) զդիա-
կունսն (դի, լէշ). եւ գտին զՍաւուղ եւ
զերիս որդիս նորա անկեալս ի լերին Գեղ-
բուայ. դարձուցին զնա եւ մերկացուցին
(հանեցին) զհանդերձ եւ հարին զգլուխ նորա,
եւ առաքեցին յերկիրն այլազգեաց շուրջա-
նակի (ամէն կողմ) աւետաւորս ի կուռս
իւրեանց եւ ի ժողովուրդն: Գլ. ԼԱ.

Եւ եղեւ յետ մահուանն Սաւուղայ, և (սա փէսաքը ընդարձակութիւն, ամէն գիտէք տէրին է․ [illegible]) Դաւիթ դարձաւ ի հարկանելոյ զԱմաղէկ (Ամաղէկեցիք) և նստաւ Դաւիթ ի Սիկելակ աւուրս երկուս։ Եւ եղեւ յետ աւուրն երրորդի, և ահա այր (մարդ մը) եկն ի բանակէ զօրուն Սաւուղայ, և հանդերձք իւր պատառեալք, և հող զգլխով իւրով (զօր․ ցանեալ, արկեալ) և եղեւ ի մտանելն նորա առ Դաւիթ․ անկաւ յերկիր և երկիր եպագ նմա․ և ասէ ցնա Դաւիթ։ Ուստի՞ գաս դու․ և ասէ ցնա․ ի բանակէն Իսրայէլի զերծեալ (ազատած) եմ ես։ Եւ ասէ ցնա Դաւիթ․ զի՞նչ զրոյցք է (ի՞նչ լուր կայ) պատմեա ինձ․ և ասէ․ փախեաւ ժողովուրդն ի պատերազմէն, և անկան բազումք ի ժողովրդենէն և մեռան, և Սաւուղ և Յովնաթան մեռան։ Եւ ասէ Դաւիթ ցպատանին (տղայ, մարդ, պատգամաւոր) որ պատմէր նմա․ զիա՞րդ (ինչպէս) գիտես թէ մեռաւ Սաւուղ և Յովնաթան որդի նորա․ և ասէ պատանին որ պատմէր նմա (անոր



պատմող*)։ Դիպելով դիպեցայ (պատահեցայ) ի լերինն Գեղբուա․ և ահա Սաւուղ, յեցեալ (կռթնած) կայր ի նիզակին իւր․ և ահա կառք և սպայեանք հեծելոց (ատ-ջէ-ւն գացող զինուոր) գումարեցան ի նա (գլ-ուխը ժողվեցան)։ Եւ հայեցաւ ի թիկունս (ետին) իւր և ետես զիս, և կոչեաց զիս․ և ասեմ․ ահաւասիկ եմ ես․ և ասէ ցիս**․ ո՞վ ես դու․ և ասեմ․ Ամաղեկացի եմ ես։ Եւ ասէ ցիս արի ի վերայ իմ (վրաս գայ, եկուր) և սպան զիս․ զի կալաւ զիս մութ ահագին (սաստիկ)․ մինչդեռ ամենայն շունչ իմ յիս է։ Եւ յարեայ ի վերայ նորա և սպանի զնա․ զի գիտէի թէ ոչ է ապրանաց (ապրելու բան չէ) յետ անկանելոյն նորա․ և առի զթագն ի գլխոյ նորա և զապարանջանն (կլէպէկ) ի բազկէ նորա, և բերի զնոսա տեառն իմում այսր։ Եւ բուռն եհար Դաւիթ զհանդերձից իւրոց (ձեռք զարկաւ) և պատառեաց զնոսա․ և ամենայն

* Որ յարաբերականով գիտնալ բայը աշխարհաբարի մէջ ող բայածականի տեղ կը թարգմանուի։

** Ասեմ, հարցանեմ, պէս բայերը ց նախդրիւ տրական խնդիր կ՚առնեն։

արք որ ընդ նմա (զօր. էին) պատառեցին զհանդերձս իւրեանց. և կոծեցան (ողբացին. լացին) և պահեցին (ծոմ. պահեցին) և լացին մինչև ցընդ երեկս (իրիկուն) ի վերայ Սաւուղայ և Յովնաթանու որդւոյ նորա, և ի վերայ ժողովրդեանն Յուդայ. և ի վերայ տանն Իսրայէլի՝ զի հարան սրով։ Եւ ասէ Դաւիթ ցպատանին որ պատմեաց նմա։ Ուստի՞ ես դու. և ասէ, որդի առն պանդխտի (օտարական) Ամաղեկացւոյ եմ ես. ասէ ցնա Դաւիթ. և զիա՞րդ ոչ երկեար ձգել զձեռն քո ապականել (մեռցնել, ջնջել) զօծեալն տեառն. Եւ կոչեաց Դաւիթ զմի ի մանկանցն և ասէ. մատի՛ր պատահեա (զարկ). և եհար զնա և մեռաւ. և ասէ ցնա Դաւիթ. արիւն քո ի գլուխ քո. զի բերան քո խօսեցաւ զքէն (քու վրայովդ) և ասէ. թէ ես սպանի զօծեալն տեառն։

Ա. Թագ. Գլ. ա.

Եւ ազդ եղև (իմացուցին) Դաւթի և ասեն. ահա այլազգիք պատերազմին ընդ Կիելա, և յափշտակեցին զկալսն (կալերը)։ Եւ եհարց Դաւիթ ի տեառնէ և



ասէ. եթէ* երթա՞յց և հարկանիցե՞մ զայլազգիսն զայնոսիկ։ Եւ ասէ տէր ցԴաւիթ. երթ և հարկանիցես (զարկ, հրամայական է) զայլազգիսն և փրկեսցես զԿիելա։ Եւ ասեն արք Դաւթի ցնա. ահա մեք աստէն ի Հրէաստանի յերկիւղի եմք. զիարդ լինիցի եթէ երթիցեմք ի Կիելա յաւար այլազգեացն։

Եւ յաւել միւսանգամ Դաւիթ հարցանել (նորէն հարցուց) ի տեառնէ. և պատասխանի ետ նմա տէր՝ և ասէ ցնա, արի՛ էջ ի Կիելա՝ զի ես մատնեցից զայլազգիսն ի ձեռս քո։ Եւ գնաց Դաւիթ և արքն որ ընդ նմա՝ ի Կիելա, և մարտեաւ ընդ այլազգիսն. և փախեան յերեսաց նորա, և առ զանասուն նոցա. և եհար ի նոցանէ հարուածս մեծամեծս, և փրկեաց Դաւիթ զբնակիչսն Կիելա։ Եւ եղև ի փախչելն Աբիաթարայ որդւոյ Աբիմելեքայ առ Դաւիթ, և ինքն Դաւիթ էջ ի Կիելա. և ունէր զեփուտն ի ձեռին իւ-

* Հոս եթէ շաղկապը նշանակութիւն չունի. ասիկա կը գործածուի ուրիշի մը խօսքը մէջ բերուած ատենը։

բում։ Եւ ազդ եղեւ Սաւուղայ եթէ եկն Դաւիթ ի Կէիլա. եւ ասէ Սաւուղ. վաճառեաց զնա Աստուած ի ձեռս իմ. զի փակեցաւ մտեալ ի քաղաք դրանց եւ դըռնափակաց. եւ հրաման ետ Սաւուղ ամենայն ժողովրդեանն իջանել ի պատերազմ ի Կէիլա. ունել* զԴաւիթ եւ զարս նորա։ Եւ գիտաց Դաւիթ զՍաւուղայ եթէ ոչ դադարէ ի չարութենէ. եւ ասէ Դաւիթ ցԱբիաթար քահանայ, մատո՛ զեփուտտեան. եւ ասէ Դաւիթ. Տէր Աստուած Իսրայէլի, լսելով լուաւ ծառայ քո թէ խնդրէ Սաւուղ գալ ի վերայ Կէիլայ, ապականել զքաղաքս վասն իմ. եթէ պաշարիցի՞ (զօր. ժողովս) եւ եթէ** իջանիցէ՞ այժմ այսր Սաւուղ՝ որպէս լուաւ ծառայ՝ քո Տէր Աստուած Իսրայէլի, պատմեա ծառայի քում. եւ ասէ Տէր՝ պաշարեսցի։ Եւ ասէ Դաւիթ. եթէ մատնեսցե՞ն զիս Կէ-

* Ունել հոս աննախդիր տրական խնդիր է իջանելին եւ կը նշանակէ համար։

** Եթէ, չթարգմանուիր, կամ արդեօքի միտք ունի։



իլացիք. եւ զարս իմ ի ձեռս Սաւուղայ. եւ ասէ Տէր, մատնեսցեն։

Եւ յարեաւ Դաւիթ, եւ արքն որ ընդ նմա (զօր. յորեան) իբրեւ չորեքհարիւր. ելին ի Կէիլայ եւ գնային յո՛ եւ գնային (ուզած տեղերնին, ուրէ նէ). եւ ազդ եղեւ Սաւուղայ եթէ զերծաւ (փախաւ) ի Կէիլայ, եւ դադարեաց (Սաւուղ) յելանելոյ։ Ա. Թագ. ԻԳ. ԺԳ.

Եւ առաքեաց Տէր զՆաթան մարգարէ առ Դաւիթ. եւ եմուտ առ նա, եւ ասէ ցնա. արք երկու էին ի քաղաքի միում. մին մեծատուն, եւ միւսն աղքատ։ Եւ մեծատանն էին հօտք եւ անդեայք բազում յոյժ. եւ աղքատին եւ ոչ ինչ. բայց որոջ (պզտիկ գառնուկ) մի փոքր զոր ստացեալ եւ ապրեցուցեալ եւ սնուցեալ էր ընդ նա, եւ հաստատեալ էր ընդ նմա (ընտանեցած էր, սիրուած էր) եւ ընդ որդիս նորա ի միասին ի հացէ նորա ուտէր եւ ի բաժակէ նորա ըմպէր, եւ ի ծոց նորա ննջէր, եւ էր իբրեւ դուստր. Եւ եկն անցաւոր (ճամբորդ, հիւր) մեծատունն եւ խնայեաց առնուլ ի հօտից իւրոց եւ յանդեաց (ոչխա-

րէ և ուրիշ անասնոց խուշ) խնայեց առնել հիւրոյն անցաւորի եկելոյ առ նա․ և էառ զորոջ աղքատին և արար առն եկելոյ կերակուր առ նա։

Եւ բարկացաւ սրտմտութեամբ Դաւիթ յոյժ առնն․ և ասէ Դաւիթ ցՆաթան․ կենդանի է տէր (Դիրի Աստուած) զի որդի մահու (մահուան արժանի) է այն որ արար զայն․ և զորոջն տուժեսցի (դօրթ քէ, ճէրիմէն գոյ) եօթնպատիկ, փոխանակ առնելոյ զբանն զայն․ վասն զի ոչ խնայեաց։ Եւ ասէ Նաթան ցԴաւիթ․ դու ես այն որ արարեր զայն․ այսպէս ասէ տէր Աստուած Իսրայէլի․ ես եմ որ օծի զքեզ թագաւոր ի վերայ ամենայն Իսրայէլի․ և ես փրկեցի զքեզ ի ձեռաց Սաւուղայ․ և ետու քեզ զտուն տեառն քո․ և ետու քեզ զԻսրայէլ և զՅուդա․ և թէ սակաւ ինչ է, յաւելից քեզ դոյն չափ․ և ընդէ՞ր անարգեցեր զբանն տեառն առնել չար առաջի աչաց նորա․ զՈւրիա Քետացի հարեր դու սրով, և զկին նորա առեր դու քեզ կնութեան, և զնա սպաներ սրով որդւոցն Ամոնայ․ և արդ մի հեռասցի



սուր ի տանէ քումմէ մինչև յյաւիտեան․ փոխանակ զի անարգեցեր զիս (զէս անարգէլդ համար), և առեր զկինն Ուրիայ Քետացւոյ լինել քեզ կնութեան։ Այսպէս ասէ տէր, ահա ես յարուցից ի վերայ քո չարիս ի տանէ քումմէ։ Եւ ասէ Դաւիթ ցՆաթան․ մեղայ տեառն․ և ասէ Նաթան ցԴաւիթ․ և տէր անցոյց ըզքև զմեղս քո՝ (Թէշէր Ներէց) և մի՛ մեռցիս․ բայց քանզի զայրացուցանելով զայրացուցեր զթշնամիս տեառն (ոտք հանէջէր, ղըրտղըրտջէր) բանիւն այնուիկ (այն գործովը) որդին քո որ ծնանելոց է քեզ մահու մեռցի։ Բ․ Թագ․ Գլ․ ԺԲ․

Եւ հանդէս արար Դաւիթ զօրուն որ ընդ նմա․ և կացոյց ի վերայ նոցա հազարապետս և հարիւրապետս, և առաքեաց Դաւիթ զերիր մասն զօրուն ի ձեռն Յովաբայ, և զերիր մասն ի ձեռն Աբեսսեայ որդւոյ Շարուհեայ՝ եղբօր Յովաբայ և զերիր մասն ի ձեռն Եթթեայ Գեթացւոյ։ Եւ ասէ Դաւիթ ցզօրն․ ելանելով ելից և ես ընդ ձեզ։ Եւ ասեն՝ ոչ ելցես․ զի եթէ փախիցեմք, ոչ դիցեն ի

վերայ մեր զմիտս (հոգ ընող չ'ըլլար). և եթէ կիսոց կէս ի մէնջ մեռանիցիմք՝ ոչ դիցեն ի վերայ մեր զմիտ. և դու իբրև զտասն հազար ի մէնջ ես (մէկդ տասը հազար կ'արժես). և արդ լաւ է թէ դու ի քաղաքի իցես՝ զի լինիցիս մեզ յօգնականութիւն։ Եւ ասէ ցնոսա արքայ. որ ինչ հաճոյ իցէ առաջի ձեր արարից. և եկաց արքայ յեզր դրանն (կռնակը). և ամենայն զօրն ելանէր ըստ հարիւրաւորաց և ըստ հազարաւորաց (հարիւր. հազար հոգիէ բաղկացած խումբերով)։ Եւ պատուէր ետ արքայ Յովաբայ և Աբեսսայ և Եթթեայ՝ և ասէ՝ խնայեսջիք ի պատանեակ (տղայ) իմ Աբեսաղոմ. և ամենայն զօրն լուաւ ի պատուիրելն արքայի ամենայն իշխանացն վասն Աբեսաղոմայ։ Եւ ել ամենայն զօրն յանտառն ընդդէմ Իսրայէլի, և եղև կռիւ յանտառին Եփրեմայ, և պարտեցաւ անդ զօրն Իսրայէլի առաջի ծառայիցն Դաւթի. և եղև խորտակումն մեծ յաւուր յայնմիկ. և անկան քսան հազար արանց*.

* Փոխանակ ըսելու քսան հազար այր։ Այս ձևը շատ կը գործածուի թիւ ցուցընելու համար։



և եղև անդ պատերազմն՝ ցրուեալ էին ամենայն երեսս երկրին և յաճախեաց անտառն ուտել ի զօրուէն քան զոր եկեր սուսերն յաւուրն յայնմիկ (այն օրը անտառը սուրէն աւելի մարդ ջարդեց)։

Եւ դիպեցաւ (պատահեցաւ) Աբեսաղոմ առաջի ծառայիցն Դաւթի. և Աբեսաղոմ էր հեծեալ ի ջորւոջ իւրում, և եմուտ ջորին ընդ թաւ (շատ տերև, ճիւղ ունեցող) կաղնեաւ մեծաւ* և պատեցաւ գլուխ նորա ընդ կաղնեաւն, և կախեցաւ ընդ երկին և ընդ երկիր**, և ջորին անց ի ներքոյ նորա։ Եւ ետես այր մի, և պատմեաց Յովաբայ և ասէ. ահա տեսի զԱբեսաղոմ կախեալ զկաղնւոյն. և ասէ Յովաբ ցայրն որ պատմեաց (պատմող), և ահա տեսեր՝ և ընդէր ոչ հարեր զնա ընդ գետին (տեսար նէ՝ ինչո՞ւ գետինը չզարկիր). և ես տայի քեզ այսօր յիսուն սիկղ արծաթոյ (ոսկի տասնի չափ մ'է) և սուսեր մի։ Եւ ա-

* Ածականը գոյականէն ետքը դրուի նէ՝ կը համաձայնի։

** Երկու ընդ նախդիր իրարու ետև դրուելով, մէջ տեղը կը նշանակէն։

սէ այրն զՅովաբ, եթէ կշռելով իսկ առնուլ ի ձեռաց քոց հազար սիկղ արծաթոյ՝ ոչ ձգէի զձեռն իմ (ձեռք չէի դպցըներ, զարներ) յորդի արքայի. զի յականջս մեր (մենք լսեցինք որ, մեր դիմաց) պատուիրեաց արքայ՝ քեզ և Աբեսսա և Եթթեայ՝ և ասէ. զգոյշ լինիջիք պատանեկին Աբեսողոմայ, մի ինչ վնաս առնել անձին նորա* և ամենայն բան ոչ թագչիցի յարքայէ (Թագաւորէն բան չպահուիր, կիմանայ), և դու կայցես ի բացեայ (դուն ինքզինքդ հեռացընես, մէկդի կը քաշուիս). և ասէ Յովաբ՝ վասն այդորիկ ինձ (աս բանիս համար) ոչ կացից առաջի քո: Եւ առ Յովաբ երիս նետս ի ձեռին իւրում, և եհար զնոսա ի սիրտ Աբեսողոմայ մինչդեռ կենդանի կայր ի կաղնւոջն. և պատեցան տասն մանկունք ի զինակրացն (օգնական) Յովաբայ, և հարին զԱբեսողոմ և սպանին զնա:

Եւ եհար Յովաբ զփողն եղջերեայ, և դարձաւ զօրն որ ընդ նմա, զի մի երթիցեն զհետ Իսրայելի (ետեւէն չերթան). զի

* Անորոշ դերբայը մի շաղկապով արգելականի կամ սաստկացուականի տեղ կը գործածուի:



խնայեաց Յովաբ ի զօրն: Եւ առ Յովաբ զԱբեսողոմ, և ընկեց զնա ի վիհ մեծ յանտառին ի խորին յոյժ*, և ամենայն Իսրայել փախեաւ այր իւրաքանչիւր** (տուն տունը) ի բնակութիւն իւր: Բայց Աբեսողոմ մինչդեռ կենդանի էր՝ կանգնեաց իւր արձան. և կանգնեաց ի Յաբին զարձանն ի հովիտս թագաւորաց. քանզի ասաց թէ չիք իւր որդի՝ որ յիշեսցէ զանուն նորա. և կոչեաց զարձանն յիւր անուն՝ և կոչեաց զնա ձեռն Աբեսողոմայ մինչև ցայսօր: Եւ Աքիմաս որդի Սադովկայ ասէ, ընթացայց տարայց աւետիս արքայի զի արար նմա տէր իրաւունս ի ձեռաց թշնամեաց իւրոց: Եւ ասէ ցնա Յովաբ. ոչ ես դու այր աւետեաց յաւուր յայսմիկ (այսօր աւետիս տանելու մարդ չես), և տացես աւետիս յայլում աւուր. բայց յաւուր յայսմիկ մի տացես աւետիս, քանզի որդի

* Երբեմն գոյականին նախդիրը յետադաս ածականին վրայ ալ կը կրկնուի:

** Իւրաքանչիւր բառը եզակի հետ կը գործածուի և յոգնակի միտք կուտայ. փոխանակ ըսելու. փախեան ի բնակութիւնս իւրեանց:

արքայի մեռաւ: Եւ ասէ ցՔուսի՝ երթ պատմեա արքայի զոր ինչ տեսեր*, և երկիր եպագ Քուսի Յովաբայ և ել: Եւ յաւել ևս Աքիմաս (Աքիմաս ալ) որդի Սադովկայ և ասէ ցՅովաբ. և զի՞նչ լինիցի (ինչ կ'ըլլայ) եթէ ընթանայցեմ և ես զկնի Քուսեայ. և ասէ Յովաբ. և ընդէ՞ր իցէ քեզ այն՝ եթէ ընթանայցես որդեակ իմ** (ինչու վազել կ'ուզես), այսր եկ, ոչ ինչ են քեզ աւետիքն յօգուտ երթալոյ (օգուտ չ'ունի), և ասէ Աքիմաս. զի՞ է՝ թէ ընթանայցեմ. և ասէ ցնա Յովաբ՝ ընթա. և ընթացաւ Աքիմաս ընդ ճանապարհն Կիքերայ

* Ասիկա աշխարհաբառի մէջ ալ կը թարգմանուի: Որ, յոր. և որ ինչ անորոշ ածականը կապուած ժամանակի հետ՝ ընդհանրապէս ալ աշխարհաբառ անցեալ դերբայով կը թարգմանուին. եթէ գրաբառի մէջ սեռի խնդիր են՝ թէ որ տէր բայի ըլլան՝ ով կը թարգմանուին:

** Ընտիր հեղինակները գրաբառի մէջ անորոշ դերբայի տեղ ԵԹԷ շաղկապը և դիմաւոր բայ մը կը գործածեն. փոխանակ ըսելու. Ընդէր իցէ քեզ ընթանալ. կ'ըսեն. Ընդէր իցէ քեզ այն եթէ ընթանայցես. այնը չթարգմանուիր տաճկ ասացուածներու մէջ. վասն զի ԵԹԷի տէր բայն՝ եթէ ընթանայցես ամբողջ խօսքն է, այնը աւելորդութիւն:



և անց զՔուսեաւ: Եւ Դաւիթ նստէր ի մէջ երկոցունց դրանցն. և գնաց դէտն ի տանիս դրանն ի պարիսպն. ամբարձ զաչս իւր և ետես, և ահա այր ընթանայր միայն հանդէպ իւր (առջին նայելով կը վազէր). և աղաղակեաց դէտն (նայող) և ազդ արար արքայի (իմացուց): Եւ ասէ արքայ. եթէ միայն է՝ աւետիք են ի բերան նորա. և գալով գայր և մերձենայր (երթալով կը մօտենար):

Եւ ետես դէտն միւս ևս այր ընթացեալ* (որ կը վազէր). և աղաղակեաց դէտն ի դուռն՝ և ասէ, ահա միւս ևս այր ընթանայ միայն. և ասէ արքայ. և նա աւետաւոր է: Եւ ասէ դէտն, տեսանեմ զընթացս (վազելը, քալելը) առաջնոյն իբրև զընթացս Աքիմաասայ որդւոյ Սադովկայ. և ասէ արքայ՝ այր բարի է նա, և բարի աւետեօք գայ: Եւ աղաղակեաց Աքիմաս և ասէ ցարքայ. ողջոյն է (բարև, ողջ լէր). և երկիր եպագ ի վերայ երեսաց իւրոց

* Անցեալ դերբայն ալ դիմաւոր բայի տեղ կը գործածուի:

յերկիր, և ասէ. օրհնեալ է Տէր Աստուած քո, որ փակեաց զարս ատելիս քո որ ամբարձին զձեռս իւրեանց ի վերայ տեառն իմոյ արքայի: Եւ ասէ արքայ. եթէ ողջո՞յն իցէ մանկանն իմոյ Աբիսողոմայ (Աբիսողոմ ո՞ղջ է, կամ ի՞նչպէս է). Եւ ասէ Աքիմաս, տեսի խումբ մի մեծ (զօր. ամբ) ուստի առաքեաց Յովաբ ծառայ քո՝ արքայ զիս զծառայ քո, և ոչ գիտացի թէ զինչ իցէ անդ: Եւ ասէ արքայ. դարձիր և արձանացիր (մէկդի կայնէ). և դարձաւ և եկաց: Եւ ահա Քուսի, և ասէ ցարքայ, աւետիք տեառն իմոյ արքայի (աւետ լուր, տէր արքայ). զի արար քեզ Տէր իրաւունս այսօր ի ձեռաց ամենայն յարուցելոց ի վերայ քո: Եւ ասէ արքայ ցՔուսի. եթէ ողջո՞յն իցէ մանկանն իմոյ Աբիսողոմայ. և ասէ Քուսի, եղիցին իբրև զմանուկն թշնամիք տեառն իմոյ արքայի, և ամենայն յարուցեալք ի վերայ քո ի չարութիւն:

Եւ խռովեցաւ (տակնուվրայ եղաւ սիրտը) արքայ, և ել ի վերնատունն (սենեակ) դրանն և ելաց. և այսպէս ասէր ի լալ իւ-



րում. Որդեակ իմ Աբիսողոմ, Աբիսողոմ որդեակ իմ, ո՛ տայր զմահ իմ փոխանակ քո. ես փոխանակ քո (զօր. մեռնէի) Աբիսողոմ որդեակ իմ, որդեակ իմ Աբիսողոմ: Բ. Թագ. Գլ. ԺԸ.

Եւ մերձեցան աւուրք Դաւթի մեռանելոյ, և պատասխանի ետ Սողոմոնի որդւոյ իւրում և ասէ: Ես երթամ զճանապարհ* ամենայն երկրի, և դու զօրացիր, և եղիցիս այր. և պահեսցես զպահպանութիւնս Տեառն Աստուծոյ քո, գնալ ի ճանապարհս նորա, և պահել զպատուիրանս նորա, և զիրաւունս և զդատաստանս և զվկայութիւնս նորա, զգրեալս յօրէնս Մովսիսի. զի ի միտ առնուցուս զոր առնիցես (ըրածդ հասկնաս), ըստ ամենայն զոր պատուիրեմ քեզ: Զի հաստատեսցէ Տէր զբան իւր զոր խօսե-

---

* Ճամբայ ցուցընող անունները հայցական բնութեան խնդիր կ'ըլլան: Նոյնպէս ալ չափի, ձևի, ժամանակի անունները, ինչպէս. Բարձրանալ հնգետասան կանգուն. այսինքն կանգնով. Զձև և զօրինակ շինել. ձևով և օրինակով. Զամենայն գիշերս աշխատեցաք, այսինքն ի գիշերս. (Ներգ. կամ Նախդ. տր. տեղ.)

ցաւ վասն իմ, եթէ պահեսցեն որդիք քո զճանապարհս իւրեանց՝ գնալ առաջի իմ ճշմարտութեամբ յամենայն սրտէ իւրեանց՝ և յամենայն անձնէ իւրեանց, ասէ՝ մի՛ սատակեսցի (չպակսի) այր յաթոռոյ Իսրայէլի։ Եւ դու ինքնին գիտես, զոր ինչ արար ինձ Յովաբ որդի Շարուհեայ, և զոր ինչ արար ընդ երկուս իշխանս զօրաց Իսրայէլի՝ ընդ Աբեններ որդի Ներեայ և ընդ Ամեսսայի որդի Յեթերայ, և սպան զնոսա. և խնդրեաց զարիւն պատերազմի ի խաղաղութեան. և ետ զարիւն անպարտ ի կեանս իւրում, ի մէջ իւր, և ի կօշիկս ոտից իւրոց, և արասցես ըստ իմաստութեան քում. և ոչ իջուսցես զալիս նորա (անոր ծերութիւնը) խաղաղութեամբ ի դժոխս (գերեզման)։ Եւ ննջեաց Դաւիթ ընդ հարս իւր և թաղեցաւ ի քաղաքի Դաւթի։ Եւ նստաւ Սողոմոն յաթոռ թագաւորութեան հօր իւրոյ ամաց երկոտասանից։

Եւ եմուտ Ադոնիա որդի Ագիթայ առ Բերսաբէէ մայր* Սողոմոնի, և երկիր եպագ նմա. և ասէ, խաղաղութիւն է մուտդ քո (բարի է, եկեր ըլլայ). և ասէ. խաղաղութիւն է։ Եւ ասէ. բանք ինչ են իմ ընդ քեզ (քեզի հետ խօսք մ'ունիմ). և ասէ, խօսեաց։ Եւ ասէ ցնա՝ դու ինքնին գիտես զի իմ էր թագաւորութիւնդ և յիմ վերայ եդ ամենայն Իսրայէլ զերեսս իւր (աչք դրաւ) ի թագաւոր. և դարձաւ թագաւորութիւնն՝ և եղև եղբօր իմում. զի ի տեառնէ եղև նմա. և արդ՝ խնդիր մի խնդրեմ ի քէն (բան մը կ'ուզեմ քեզմէ), մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն (չը մերժես). և ասէ ցնա Բերսաբէէ՝ խօսեաց։ Եւ ասէ ցնա. ասասցես ցՍողոմոն արքայ, զի ոչ դարձուսցէ զերեսս իւր ի քէն. և տացէ ինձ զԱբիսակ Սոմնացի կնութեան։ Եւ ասէ Բերսաբէէ՝ բարւոք է (շատ աղէկ), ես խօսեցայց վասն քո ընդ արքայի։ Եւ եմուտ Բերսաբէէ առ արքայ Սողոմոն խօսել ընդ նմա վասն Ադոնիայ. և յառն եկաց արքայ ընդ առաջ նորա, և համբուրեաց զնա. և նստաւ յաթոռ իւրում, և եդաւ աթոռ մօրն արքայի, և նստաւ ընդ աջմէ նորա. և ասէ

* Մայր բացայայտիչ է Բերսաբէին։ Բացայայտիչը ուրիշ բառի մը որը ըլլալը, կամ անոր միտքը աւելի կը բացատրէ, և թուով ու հոլովով կը համաձայնի անոր հետ։

ցնա՝ խնդիր մի փոքր խնդրեմ ես ի քէն, մի դարձուցանիցես զերեսս քո յինէն: Եւ ասէ արքայ, խնդրեա մայր իմ, զի ոչ դարձուցից զերեսս իմ ի քէն. և ասէ տացի ([illegible]) զԱբիսակ Սոմնացի Ադոնիայ եղբօր քում կնութեան: Պատասխանի ետ արքայ Սողոմոն՝ և ասէ ցմայր իւր. և ընդէ՞ր խնդրիցես զԱբիսակ Սոմնացի Ադոնիայ, այլ խնդրեա նմա զթագաւորութիւնն. զի նա երէց եղբայր է քան զիս, և նորա Աբիաթար քահանայ (զօր. է) և Յովաբ որդի Շարուհեայ րապարապետ (զօր. է) և բարեկամ: Եւ երդուաւ արքայ Սողոմոն ի Տէր՝ և ասէ. ծ՛ն և ծ՛ն արասցէ ինձ Աստուած ([illegible]) և ծ՛ն և ծ՛ն յաւելցէ՝ եթէ ոչ հակառակ անձին իւրոյ խօսեցաւ Ադոնիա զբանդ զայդ: Եւ առաքեաց արքայ Սողոմոն ի ձեռս Բանեայ որդւոյ Յովիդեայ՝ և սպան զնա, և մեռաւ Ադոնիա յաւուր յայնմիկ:

Գ. Թագ. Գլ. Գ.

Յաւուրն յայնմիկ հիւանդացաւ



Եզեկիա ի մահ ([illegible]): Եւ եմուտ առ նա Եսայի որդի Ամովսայ մարգարէ, և ասէ ցնա. այսպէս ասէ Տէր՝ հրաման տուր վասն տան քոյ ([illegible]), զի մեռանիս դու և ոչ ապրեսցիս: Եւ դարձոյց Եզեկիա զերեսս իւր յորմն ([illegible]), և եկաց յաղօթս առ Տէր և ասէ. ո՛վ Տէր. յիշեա որպէս գնացի առաջի քո ճշմարտութեամբ և կատարեալ սրտիւ, և զհաճոյսն առաջի քո արարի: Եւ ելաց Եզեկիա լալիւն մեծ* ([illegible]): Եւ էր Եսայի ի սրահին միջնում. և բան Տեառն եղև առ նա ([illegible]) և ասէ. դարձիր անդրէն, և ասասցես ցԵզեկիա ցառաջնորդ ժողովրդեան իմոյ. այսպէս ասէ Տէր Աստուած Դաւթի հօր քոյ. լուայ աղօթից քոց և տեսի զարտասուս քո. ահա ես բժշկեցից զքեզ. և յաւուրն երրորդի ելցես ([illegible]) ի տուն Տեառն. և յաւելից յաւուրս քո ամս հնգետասան, և ի ձեռաց արքային Ասորեստանեայց փրկեցից զքեզ,

* Բային արմատները հայցական են. խնդիր կ՚ըլլան իրենց բայերուն՝ փոխ. գործիականի.

և զքաղաքդ զայդ․ և վերակացու եղէց (պէքճի օլըճէմ) քաղաքիդ այդմիկ, վասն իմ և վասն Դաւթի ծառայի իմոյ։ Եւ ասէ Եզեկիա ցԵսայի․ զի՞նչ նշան է թէ (նէ-ճէ՞ն պիլիյօրում) բժշկեսցէ զիս Տէր, և ելանիցեմ ի տուն Տեառն յաւուրն երրորդի (էրէճ օրէն)։ Եւ ասէ Եսայի․ այս նշան է ի Տեառնէ, զի արասցէ Տէր զբանն զոր խօսեցաւ․ երթիցէ ստուերն (արևուն շու-քը) զտասն աստիճանօք․ Եւ ասէ Եզեկիա․ դիւրին է ստուերին դառնալ զտասն աստիճանօք․ և ասէ․ ոչ այդպէս․ այլ դարձցի ստուերն զտասն աստիճանօք անդրէն յետս։ Եւ աղաղակեաց Եսայի մարգարէ առ Տէր․ և դարձաւ ստուերն ըղտասներումբք աստիճանօք անդրէն յետս զտասներումբք աստիճանօքն Աքազու։

Դ. Թագ. Գլ. Ի.

Որդի ամաց երկոտասանից (տասներկու-տարեկան․ ու ծեր հասակաւոր մարդու համար ալ կը գործածուի) Մանասէ՝ ի թագաւորել իւրում․ և յիսուն և հինգ ամ թագաւորեաց յԵրուսաղէմ․ և անուն մօր նորա Եփսիբա․ Եւ արար չար (չար գործեց) առաջի



Տեառն ըստ պղծութեան ազգացն, զորս եբարձ Տէր յերեսաց որդւոցն Իսրայէլի․ և դարձաւ և շինեաց զբարձաւնսն զորս կործանեաց Եզեկիա հայր նորա․ և կանգնեաց զսեղանն Բահաղու․ և արար (տըն-կեց, շինեց) անտառս, որպէս արար Աքաաբ արքայ Իսրայէլի․ և երկիր եպագ ամենայն զօրութեան երկնից, և ծառայեաց նոցա․ և շինեաց սեղան ի տան Տեառն․ որպէս ասաց Տէր՝ յԵրուսաղէմ եդից զանուն իմ․ և շինեաց սեղան ամենայն զօրութեան երկնից յամենայն սրահս տանն Տեառն։ Եւ անցոյց զորդիս իւր ընդ հուր, և հմայէր (կախարդութիւն ընէր) և հաւահարց լինէր (հաւերով կախարդութիւն)․ և արար վհուկս (կախարդ) և գէտս (աստղագէտ, կախարդ, գիտուն) և յաճախեաց առնել չար առաջի Տեառն առ ի բարկացուցանելոյ զնա։ Եւ եդ զդրօշեալս (պատկեր, կուռք) անտառաց ի տան Տեառն․ զորմէ ասաց Տէր ցԴաւիթ և ցՍողոմոն որդի նորա, թէ ի տանս յայսմիկ և յԵրուսաղէմ զոր ընտրեցի յամենայն ցեղից Իսրայէլի․ եդից զանուն իմ յաւիտեան․

և ոչ յաւելից շարժել (Եւ մ'ալ պիտի չշարժեմ) զոտն Իսրայէլի յերկրէդ զոր ետու հարց նոցա. այլ զգուշանայցեն առնել զամենայն որ ինչ պատուիրեցի նոցա, և ըստ ամենայն պատուիրանի քանիին զոր պատուիրեաց նոցա ծառայ իմ Մովսէս, և ոչ լուան։ Եւ մոլորեցոյց զնոսա Մանասէ առնել չար առաջի տեառն՝ առաւել քան զազգսն՝ զորս ապականեաց (ջնջեց) տէր յերեսաց որդւոյն Իսրայէլի։ Եւ խօսեցաւ տէր ի ձեռն ծառայից իւրոց մարգարէից՝ և ասէ. փոխանակ զի (որովհետեւ) արար Մանասէ արքայ Յուդայ զգարշելիսդ զայդոսիկ չարս առաւել քան զամենայն զոր արար Ամորհացին առաջի իմ և յանցեաւ (մեղք գործեց) Յուդայ (Յուդային ալ) կռովք իւրեանց. վասն այնորիկ այսպէս ասէ տէր Աստուած Իսրայէլի. ահա ես ածեմ չարիս ի վերայ Երուսաղէմի և ի վերայ Յուդայ. զի ամենայնի՝ որ լուիցէ հնչեսցին երկոքին ականջք իւր (լսողը զարմանայ. իւրը ականջը թնդալու է)։ Եւ ջնջեցից զԵրուսաղէմ որպէս ջնջի (շիշը) մի ջնջեալ որ կործանիցի (...)



ի վերայ երեսաց իւրոց։ Եւ ննջեաց Մանասէ ընդ հարս իւր (մեռաւ) և թաղեցաւ ի պարտիզի տան իւրոյ, ի պարտիզին Ոզայ, և թագաւորեաց Ամոն որդի նորա ընդ նորա։ Որդի քսան և երկուց ամաց Ամոն ի թագաւորել իւրում. և երկուս ամս ամ թագաւորեաց Երուսաղէմ. և անուն մօր նորա Մասողամիթ՝ դուստր Արուսայ Յետեբելեայ։ Եւ արար չար առաջի տեառն, որպէս արար Մանասէ հայր նորա. և գնաց յամենայն ճանապարհս յոր գնաց հայր նորա։

Դ. Թագ. ԻԲ. Խա.

Եւ եղև մինչդեռ խօսէր Սաւուղ ընդ քահանային, և աղաղակ ի բանակին այլազգեացն երթալով երթայր և յաճախէր։ Եւ Սաւուղ և ամենայն ժողովուրդն որ ընդ նմա, և իջին մինչև ցպատերազմ. և ահա եղև սուր առն ի վերայ ընկերի իւրոյ (ամէն իրար ջարդել, սպաննել) և աղմուկ մեծ յոյժ։ Եւ ծառայքն որ էին ընդ այլազգիսն յերէկն և յեռանդն՝ (առջի օրերը) որ ելեալ էին ընդ բանակին, դարձան անդրէն լինել ընդ Իսրայելի (մի-

տնալ) և ընդ Սաւուղայ և Յովնաթանու։ Եւ ամենայն Իսրայէլ որ թագուցեալ էին ի լերինն Եփրեմի, իբրև լուան թէ փախեան այլազգիքն, խմբեցան (ժողվեցան) և նոքա եւս զհետ նոցա ի պատերազմն։

Եւ փրկեաց տէր յաւուր յայնմիկ զԻսրայէլ, և պատերազմն պատեցաւ ըզԲեթաւնաւ. և ամենայն ժողովուրդն էր ընդ Սաւուղայ իբրև տասն հազար արանց (զօր. չափ). և էր պատերազմ ցրուեալ ընդ ամենայն քաղաքսն ի լերինն Եփրեմի։ Եւ Սաւուղ անգիտացաւ (սխալեցաւ) անգիտութիւն յաւուր յայնմիկ. և նզովեաց զժողովուրդն՝ և ասէ. անիծեալ լիցի մարդն՝ որ կերիցէ հաց մինչև ցերեկոյ, մինչև խնդրեցից վրէժ ի թշնամեաց իմոց (վրէժս առնեմ)։ Եւ ոչ ճաշակեաց ամենայն ժողովուրդն հաց. և ամենայն երկիրն ճաշէր։ Եւ անդ էր անտառ մեղուաց հանդէպ անդին (տըր), և եմուտ զօրն ի մեղուանոցն, և անցանէին քըթմնջելով (փըփնջալով) և չէր ոք որ դարձուցանէր զձեռն իւր ի բերան իւր. քանզի երկեաւ ժողովուրդն յերդմանէ տեառն։



Եւ Յովնաթանու չէր լուեալ՝ թէ երդմնեցոյց հայր նորա զժողովուրդն, և կարկառ (երկնցուց) զծագ գաւազանի իւրոյ որ ի ձեռին իւրում, և եհար ի խորիսխ մեղու. և դարձոյց զձեռն իւր ի բերան իւր, և բացան աչք նորա։ Եւ պատասխանի ետ ոմն ի զօրուէ անտի* և ասէ. երդմնեցուցանելով երդմնեցոյց հայր քո զժողովուրդս՝ և ասէ. անիծեալ լիցի այր որ կերիցէ հաց մինչև ցերեկոյ. և լքաւ (թուլցաւ, յոգնեցաւ) ժողովուրդն։

Եւ ասէ Սաւուղ, տէր Աստուած Իսրայէլի. զի՞ է զի ոչ ետուր (ինչո՞ւ չըտուիր) պատասխանի ծառայի քում յաւուր յայնմիկ. եթէ յիս իցեն այսօր և եթէ ի Յովնաթան յորդի իմ՝ անօրէնութիւնք՝ տուր յայտնութիւն (իմացուր)։ Եւ ասէ Սաւուղ. արկէք վիճակ ընդ իս և ընդ Յովնաթան որդի իմ. և որում հանցէ տէր զվիճակն մեռցի։ Եւ ասէ ժողովուրդն ցՍաւուղ. մի լիցի բանդ այդ։

* Անտի. այտի. անդի, մակբայները գոյականի վրայ դրուելին՝ նէ՝ ածական են. այս, այդ, այն ցուցական դերանուններուն տեղ։

Եւ ստիպեաց Սաւուղ զժողովուրդն. և արկին ընդ նա և ընդ Յովնաթան որդի նորա. և ել վիճակն Յովնաթանու: Եւ ասէ Սաւուղ ցՅովնաթան. պատմեա ինձ զի՞նչ արարեր. և պատմեաց նմա Յովնաթան և ասէ. ճաշակելով ճաշակեցի ([illegible]) ծայրիւ գաւազանին որ ի ձեռին իմում սակաւ մի մեղր, և ահա մեռանիցի՞մ ես ([illegible]): Եւ ասէ ցնա Սաւուղ, ա՛ն և ա՛ն արասցէ ինձ Աստուած՝ և ա՛ն յաւելցէ, եթէ ոչ մահու մեռանիցիս այսօր: Եւ ասէ ժողովուրդն ցՍաւուղ. քաւ լիցի եթէ մեռանիցի ([illegible]) այսօր, որ արար զփրկութիւնս զայս մեծ Իսրայէլի. կենդանի է Տէր եթէ անկցի ի հերոյ գլխոյ նորա յերկիր ([illegible]). զի ժողովուրդս Աստուծոյ արար զմեղս զայսօրիկ. և եկաց ժողովուրդն յաղօթս առ Տէր վասն Յովնաթանու յաւուր յայնմիկ և ոչ մեռաւ: Եւ դարձաւ Սաւուղ յայլազգեացն և այլազգիքն գնացին ի տեղիս իւրեանց.

Ա. Թագ. Գլ. ժդ.

# ՄԱԿԱԲԱՅԵՑԻՔ

Յայնմ ժամանակի կոչէր նա զՀերմոն փղապետ, մեծաւ սաստկութեամբ վառել ([illegible]) զփիղսն ի վաղիւ անդր. զի առանց յապաղելոյ ([illegible]) պատրաստեսցէ գինեզէնս ([illegible]) խնկալիցս զայրացեալս կնդրկաւ՝ գազանացեալս անապակաւ ([illegible], անխառն գինի) ի հրապարակ ածել՝ թուով իբրև եօթն հարիւր. ածել պատրաստել ահագին պատուհաս ազգին Եբրայեցւոց: Եւ թագաւորն զայս հրաման տայր փղապետին, և ինքն յուրախութիւն դառնայր՝ բազում զօրօք մեծամեծ աւագանւով ([illegible]), որ առաւել ևս թշնամութեամբ էին ընդ ազգին Եբրայեցւոց քան զթագաւորն: Իսկ փղապետն իբրև լուաւ ըզհրամանն սաստկութեան՝ ([illegible]) կատարէր, ի ժամ անդ ([illegible]) զփիղսն պատրաստէր. և այլ սպասաւորքն եղանէին կապէին զտառապեալսն ([illegible]) զոտս և զձեռս, և զայլ պահ գիշերապահ ([illegible], [illegible])

շուրջ զնոքօք զգուշութեամբ ճիւրադի (ղափ փէստակ) ածէին (կը դնէին)․ ընդ միսս խուրեանց համարեալ․ ընդ այգն ընդ առաւօտն (առաւօտ ըլլալուն պէս) վախճան սատակման ածեալ ի վերայ այգին տեսանելին։ Իսկ հրեայքն յամենայն կողմանց զանձինս խուրեանց անզօր և առանց օգնականութեան գէշ անկեալ (կէրակուր, որս եղած) հեթանոսացն համարէին․ զամենակալն Աստուած, և զամենայն զօրութեանց զօրացուցիչ զողորմածն Աստուած, անդադար բարբառով արտասուօք կարդային․ անկեալ առ հասարակ աղաչէին՝ դարձուցանել շրջել զխորհուրդն անօրէնութեան․ մեծապէս յայտնութեամբ (երաշխով) անցուցանել զօրհասն, որ անդէն մօտալուտ զախուք և զձեռօք պատեալ է։ Փղապետն զանողորմ գազանն՝ գինեզէնս խնկալիցս զայրացուցեալ ընդ առաւօտն ի դուռն թագաւորին հասուցանէր․ Իսկ այն որ յաւիտենից ժամանակաց գեղեցիկ արարածք, բարւօք բաժնին առումնջեան և գիշերոյ վիճակ եղեալ (Տաւն ընկած) յերկրաւոր ի պարգևատու յառատաձեռնն Ա-



տուեալ, ելանէր պարգև մասն մի քնոյ՝ զոր առաքէր ի վերայ թագաւորին, և անդէն թանձր և խորին, և քաղցր և անուշ քնով ի զօրութիւն տեառն կապէր զթագաւորն․ և զնա յանշարժ խորհրդոցն անտի խաբեալ վրիպեցուցանէր (ետ կընեցնէր, կը սխալցնէր)։ Նոյն (ան ատեն) որդիք Իսրայելացւոցն զժամանակեալ (որոշուած) զմահաբեր զօրհասն (մահուան, վախճանի) ժամանակն զանցուցեալ, զսուրբն երկնաւորն Աստուած օրհնէին՝ և դարձեալ անկեալ ի վերայ երեսաց խուրեանց՝ աղաչէին կատարել զպարգևն ի մեծազօր բազկէ անտի, ի մէջ հպարտացեալ հեթանոսացն երևեցուցանել։ Իբրև ընդ մէջ լինէր (կէսը կուգար) ժամ տասներրորդ և սպաս տաճարին ամենայն պատրաստեալ էր, և կոչնականքն յիւրաքանչիւր ի չափս յօրինեալ կային (ամէն մարդ իր տեղը էր) յանկարծակի խթեաց ազդ արար (իմացուց) մերձ յանցանել լինել ժամ ուրախութեան տաճարին։ Զայնժամ զուրախութիւն ընմտաւ ածէր թագաւորն, և անդէն (շուտով) բազմեալ վաղվաղակի հրամայէր ըն-

կոչնականսն ի ներքս կոչել, ապա առնել (պարթապալըըն փէսնալ, ուրախութեան ընել) տաճարին բարձիցն (թաճարը ընջէրլու) պատրաստութեան, զոր այր յիւրաքանչիւր գահ (թեղ) հրամայէր մատուցանել. ի ձեռն առեալ զուրախութիւն խրախուսն (խնճոյք, ճաշ) առնէր տաճարին, զանագան ժամուն (ժամանակին ուղանայը, երկարելը) ընդ ուրախութիւն զուարթութեան անցուցանել.

Իբրեւ յերկարագոյն նուագօք զբանիւք անկանէին (երբ երկար բարակ խօսքի հետ էին, թալթիշ էղած էին), կոչէրայ զփղձափեսն ահեղ սաստկութեամբ զառնայես (խարաբեամբ) պատուհասէր (պարտէր). ընդէ՞ր կամ զմէ՞ (նիչը՞ն) զժամադիր սաստիկ հրամանի զօրահասու անցեալ հրեայքն (հրեաները նիչին թունլըո համար որոշած ժամը անցուներով). և զայս որ կեցեալ գտանէին. Նա կայր ցուցանէր նմա զհրամանն արքունի՝ գիշերախառն կատարեալ (գիշերով), և նոքին կոչնականքն վկայէին բանիցն փըղալետին, ապա Թագաւորն զդառնու-



Թիւն գազանութեանն յածուցանէր* (բարկութիւնը իջա) և ասէ. երթ դու քեզ (բագդ գնա), զայս օր քնոյ շնորհ կալցին նոքա. բայց անվրէպ զվաղիւ օրն պատրաստեսջիր ի նմին գազանութեան զփիղսն ի վերայ անօրէն ազգին հրէից սատակման հասուցանելոյ։ Իբրեւ զայն ասէր Թագաւորն, և ամենեքին ի ուրախութեամբ ընդ մի բերան զհրամանն գովէին, յիւրաքանչիւր վանս (եէրլէրի) ի միմեանց բաժանեալք, վասն անագան ժամուն մեկնէին. և սակայն այնչափ ոչ տային քնոյ զանձինս, որչափ զգիշերն ամենայն զմըտաւ ածէին մեքենայել (զօր. բէ) զինչ նոր նոր չարչարանս ի վերայ տառապելոցն հասուցանել մարթասցին։ Այն ինչ հաւխօսեցաւ, (հաւը խօսելուն պէս) կանուխ ընդ առաւօտն գազանացուցեալ՝ վառեալ զգազանսն ի գինի և ի խունկ, ածեալ պատրաստէր, և ինքն իջեալ ի մեծի սրահի անդ ձեռն առեալ չքնէր (նը պէտէր ծուռ

* Կատարեալի կամ ներկայի տեղ անկատար ժամանակ գործածելը մեր գրաբար լեզուին յատուկ ձև մ'է։

նօքեար ). իսկ որ ի քաղաքի անդ էին , տա-
հապարակ ելեալ հեղեալ՝ իջեալ ժողով-
եալ էին (Իրարու վըրայ թըփլուած ժողըված էին)
դէտ ակն ունէին (կ'սպասէին) թշուառու-
թեան տեսչեանն՝ որ ընդ այգն ընդ առա-
ւօտն ի վերայ հրէից սպառնացեալ պա-
հէր ։ Եւ հրեայքն ժամ ի ժամ անցեալ
զօրհասաւն (Իրենց մահուան ժամերը մէկիկ մէ-
կիկ անցունելով, համրելով,) բազում արտօսր
պահոց պնդութեան (խիստ) ի ձայն ողորմ
ողբոց (խոշոր ողբերով), զձեռս յերկինս
բարձեալ՝ զմեծ զամենազօրն Աստուած ա-
ղաչէին. միւսանգամ (Նորէն) այցելու լի-
նել փրկել զնոսա յանհնարին (սոսկալի) յօր-
հասիցն ։ Չև լինէր արեգական ճառա-
գայթիցն յաշխարհ սփռեալ, և թագա-
ւորն յարուցեալ դէտ ակն ունէր մեծա-
մեծացն, հասեալ ի դուռն փղապետին,
աջօք ցուցանել զպատրաստութիւն փղացն
որպէս վառեալ պատրաստեալ ի դուռն
հասեալ էր ։ Թագաւորն շնորհակալ լի-
նէր. զարմացեալ էր ընդ պատրաստու-
թիւնն ։ Դարձեալ միւսանգամ անդրէն
զառածանէր (Միտքը գլխէն կ'ելլար), զինչ



իրք լցեն վասն անօրէն ձեռացն (Ինչ կար
տանը խօսվելը). դարձեալ զմիտս դար-
ձուցանէր, պատուհաս ի վերայ փղապե-
տին կապէր (կը պատժէր), թէ որ ինչ հը-
րաման տուեալ էր, զայն ոչ վաղվաղակի
ի գլուխ հանեալ ցուցանէր ։ Եւ այս ա-
մենայն լինէր ի հրամանէ տեառն ամե-
նակալի, զանհնարին զօրհասին պնդու-
թեան խորհուրդսն յապուշ դարձուցա-
նէր (պարապը կը հանէր). արդ մատուցեալ
փղապետն զմեծամեծս յաւագանւոյն ի վը-
կայութիւն տանէր [(զոր. Բէ) որպէս կան-
խաւ փիղքն վառեալ և զօրքն պատրաստ-
եալ, զհրամանն արքունի հաստատուն ի
գլուխ կատարեալ ցուցանէր ։ Դարձեալ
յայնմ ժամանակի թագաւորն ընդր մե-
ծաւ բարկութեամբ վասն մեծութեանց
գթոյն Աստուծոյ, զի կամէր ցրուել զխոր-
հուրդս նորա, որ անդէն իսկ մեծաւ բար-
կութեամբ սաստիկ պատուհասիւք հա-
յեցաւ ընդ փղապետն ։ Սկսաւ խօսել՝ և
ասէ. որ միանգամ հարք և մարք և որ-
դիք ի տեսանել (հանդիպած ըլլար, տե-
սնուած ըլլար) իսկ եկեալ լցեն, գրեցի

կուր արկանել (կերակուր ընել) գազանացն և զքեզ ընդ նոսա փոխանակ անմեղացդ այդոցիկ, որ ի սկզբանէ նախնեաց մինչև ի նախնիս (սերունդէ սերունդ) անարատ զարդարութիւն և զհաւատս՝ մեզ* պահեալ էր Եբրայեցւոցդ այդոցիկ. և թէ ոչ վասն դայեկատոհմ միամնունդ սիրոյն էր (մէկտեղ մեծնալուն), զքաղցր արև յաչացդ հատանէի (զքեզ կ'սպաննէի), և զքեզ նենգաւոր չարագործ ի միջոյ պակաս առնէի: Փղապետն այսպէս յանկարծ ժամանակի յեղեռնաւոր պատուհասէն մազապուր ելանէր (հազիւ ազատեցաւ). և յառաջին զուարթութենէ անտի զիջեալ արտմագոյն երեսօք այր զարամբ զինքն ի միջոյ անտի ի բաց մերժէր ([illegible]). և քարեկամքն, իւրաքանչիւր գլուխ ի վայր արկեալ. զամբոխն՝ ժողովեալ յիւրաքանչիւր պէտս (գործե- հրաման տուեալ ցրուէին: Եւ որդիքն) Եբրայեցւոց իբրև լուան զԹագաւորին.

* Մէկ հոս տեղադրութիւն է, այսպէս կ'ըսուի մեզ ինձ փոխանակ ըսելու՝ մեզ:



զերևելին զՏէր Աստուած, զԹագաւորն թագաւորաց օրհնել սկսան. և առաւել իբրև զայս օգնութիւն ի վերայ անձանց իւրեանց գտին:

Եւ անդէն վաղվաղակի Թագաւորն հրաման տայր կոչնականացն յուրախութիւն դառնալ. կոչեաց զփղապետն դարձեալ մեծաւ պատուհասիւ սկսաւ խօսիլ ընդ նմա և ասէ, քանիցս անգամ քեզ վասն նոցա, ով թշուառ՝ պատուէր տուեալ է, վառել կազմել պատրաստել զփիղսն. զանէ արդ առ վաղիւ պատրաստեսցես յեղեռնաւոր թշուառական ազգին հրէիցն Իբրև զայն լուէին բազմականքն ամենայն առաւել զարմանային ընդ յեղյեղուկ (փոփոխական) միտս Թագաւորին, և ասեն. ցե՞րբ է այդ, արքայ, ցե՞րբ (մինչև երբ) ի միտս քո փորձես զմեզ. արդ՝ երիցս անգամ հրամայեալ է սատակել զազգդ ժպիրհ (յանդուգն), և դարձեալ միւսանգամ զքոյին հրաման անդրէն եղծանես՝ զհա՞րդ վասն այսորիկ և քաղաքս ամենայն ի ժողովս իւրեանց առաւել վրդովեալ են քան զայն չարագործս: Օ այսմանէ ամե-

նոյնիւ վրիպակ արքայն (ատէշ չէքանտիրըլով)
լի եղեալ յիմարութեամբ (թարխոտանտով,
շաշմանտով) ի վարան մտանէր (կիւմէր թարա-
կուտիլ, տըտմալ). և յայն ինչ ոչ հայեր՝ որ
յերկնից այցելութիւն էր ի վերայ հեբ-
րայեցւոց։ Փորձեալ սաստկութեամբ
երդնոյր զերդումն անկատար, ասէ. ա-
ռանց իրիք յերկուանալոյ (անթարաֆսըզ, ան-
խնայ) զնոսա ի դժոխ յուղարկեցից առա-
թուրն կոխեալ անհնարին գազանացն (գա-
զաններուն չարաչար կոխկռտել տալով). զօրա-
ժողով լինել (զօրք հանել) առ հասարակ ի
վերայ հրէաստանի, զփայտակերտն հրով
(յակել. կրակ տալ, էրել) և զկաւակերտն
(հողէ շինուած) ջուրբ լուանալ, ի գերու-
թեան վարել, առ հասարակ զկինս և զըս-
տացուածս և զոր ինչ կայ ի նմա, և զայն
պահեստ ի մէնջ (պահուած) զտաճարն նո-
ցա հրձիգ առնել (կրակի տալ), և զնա
տուն զոհից զամենայն աւուրս ժամանա-
կաց կացուցանել։ Յայնմ ժամանակի հաս-
տատութեամբ բանս լուեալ կոչնականքն՝
և բարեկամք տոհմային սիրելիք (ազգական,
դօսթ բարեկամ) հաստատութեամբ զբանն



լուեալ զուարճացեալ գնային. հրաման
տային զօրացն՝ յամուր վայրի արգելեալս,
(գոցուած, պահուած), շուրջ գիշերապահս
և խրամապահս կացուցանել։ Իսկ փղա-
պանն յանհնարին մոլութիւն (կատաղու-
թիւն) զգազանսն վարեալ պատրաստէր,
խմելեալ գինւով (խունկով խառնուած) կըն-
դրկախառն՝ յահեղ պատրաստութիւնն
վարէր զգիւագին գազանսն առ վաղիւ-
անդր (միւս օրը) անթիւ դէշ անկեալ
հասեալ յասպարիսի անդ։ Արդ եկն ե-
մուտ ի սրահ անդր, տխրէր տագնապաւ
(կէտէրլէնիր) զթագաւորն ի կատարումն
կարգեալ ժողովրդեանն։ Յայնմ ժամանա-
կի ամենայն զօրքն՝ անհնարին գազանօքն
գիմեալ գայր ի դուրս թագաւորն, ի մը-
տի եդեալ անգութ աչօք, անողորմ սըր-
տիւ, ինքնին տեսանել զկշտագին սաստա-
կումն (ծաւ) թշուառական գնդին։ Իբրև
եկին հասին փղօքն պատրաստելովք և զօ-
րօք վառելովք ի դուռն քաղաքին, ազդ
լինէր (իմացան, տեսան) հրէից թնդիւն
զօրացն, փայլիւն զինուցն, փոշին որ ե-
լանէր գիզանէր յամպս հասանէր, ամբոխին

աղաղակէին զնոքօք պատեալ, զմիտսն յա-
պուշ դարձուցանէր (կապչըչներ), և զայս
յետին կատարած համարեցան ի վերայ
Թշուառութեան կարծեացն ։ Յողորմ
գութ խանդաղատեալ (տէրտէրնին կօր կօր
Ըլլըրլ) * հարք և մարք ուստերք և դըս-
տերք, քորք և եղբարք, առհմային բարե-
կամք և սիրելիք զմիմեանց պարանոցօք ան-
կեալ (իրարու վիզը փաթթըլով) փարեալ
պատեալ (պլըրըլով) համբուրէին. և կեաք
(ոմանք) զմատաղածին (նորածին) մանկունս
ի գիրկս առեալ յետին զայն ծուծ (վեր-
ջին կաթը ծծելը) ստին ի բերան եդեալ տը-
ղայոցն՝ համարէին ։ Իսկ մինչդեռ յայնմ ա-
ղէտս տարակուսի և ի շտապ տագնապի
երկիթամածեալ կային (երբ ան սոսկալի վա-
խուղը պաշարուեր կեցեր էին), յիշեցին զառա-
ջին օգնականութիւնն որ եղև յերկնից,
առ հասարակ միաբան ի միմեանց մեկնե-
ին (կը բաժնուէին), և ի տղայ մանկանցն
բերանոյ զստինն ի բաց կորզէին (քէչէ-

* Աշակերտը այս տեսակ ասացուածներ հասկը-
նալէն ետքը՝ կրնայ վայելչաբար ըսել. խանդաղատել
որոշ են.



կ՚առնէին, կը քաշէին) և առ հասարակ ան-
կեալ առաջի մեծութեանցն աստուածու-
թեանն Թաւալէին ։ Զայն բարձեալ մե-
ծաւ բարբառով ի գոչիւն լալոյ, զամենա-
զօրն զամենակալն աղաչէին. ի գութ
դառնալ մեծաւ ողորմութեամբ. փրկել
զհաւատալս ի յուսոյ (յուսահատ), զհասեալ
մերձեցեալսն ի դրունս դժոխոց (մահուան) ։

Բ. Մակ. Գլ. Ժ.

Մակաբէոս և որ ընդ նմա էին յօգ-
նականութենէ տեառն զօրացեալ, գերե-
դարձ առնելով (գերի դարձընել) քաղաքին
և տաճարին ։ Իսկ զբագինսն որ իմէջ քա-
ղաքին էին, որ յայլազգեացն արարեալ
էր, և զտեղիս պաշտամանց քակէին և ըզ-
տաճարն սրբէին, և այլ սեղան շինէին
սրբեալ զվէմսն հրով, և դարձեալ ի նո-
ցունց հուր առնուին, և մատուցանէին
զողջակէզսն պատարագաց՝ յետ երկեամ
ժամանակի (երկու տարիէն ետքը). Ճրագունս
և խունկս, և դնել զնուէրս հանապա-
զորդս յաճախաց հացին (սուքրային) ։ Իսկ
զայս իբրև արարին, անկեալ տարածեալ
ի վերայ երեսաց իւրեանց զտէր աղաչէ-

ին՝ զի այլ մի կրկնեսցին ի վերայ նոցա նոյն չարիք. այլ Թէպէտև երբէք (Երբէք, տը-գամ մ'ալ) յանցանիցեն (մեղանչէն) ինչ, ի ձեռն իւր հեզուԹեամբ խրատել, և մի՛ ի ձեռն հայհոյիչ խուժադուժ (բարբարոս, անօրէն) հեԹանոսաց մատնել զմեզ (զօր. ամէին): Արդ յորում աւուր տաճարն ի ձեռս հեԹանոսաց պղծեցաւ՝ դէպ եղև (անանկ պատահեցաւ) ի նմին աւուր ի նոյն ժամանակի զօրուԹիւնն անդրէն նորոգել, ի քսաներորդի հինգերորդի ամսոյն՝ որ անուանեալ կոչի Քասլև՝ ցնծուԹեամբ և ուրախուԹեամբ առնել զտօն աւուրցն զութ օր. ըստ բանի (չափ) աւուրցն տաղաւարահարաց: Զի յուշ լիցի նոցա (մըտ-քերնին բերեն) որպէս յառաջ զտօնս տաղաւարահարացն ի լերինս պաշտէին (կը կատարէին) յայրս և ի քարածերպս, զօրէն երէոց խոտաճարակ շրջել. վասն այսորիկ ոստս առեալ գեղեցիկս ի Թաւ (շատ ճիւղ, տերև ունեցող) ծառոց, և ոստս արմաւոյ՝ այնմիկ որ աջողեաց նոցա սրբել զիւր տեղին, հրաման տուաք ածել զաւուրս զայս ի տօն տարեկանաց բարեկենդանուԹեան



ցնծուԹեամբ և ուրախուԹեամբ՝ ի հասարակաց համարուէ (բոլորէն, բոլոր ազգէն) ազգին Հրէայեցւոց՝ ածել զայս տօն տարեկանաց ի կարգի աւուրց իւրոց: Այլ վասն Անտիոքայ երևեալն անուանելոյ մահուանն՝ այսչափ բանք (զօր. Էշիթէն կամէն). բայց վասն հօրամյն (հօրը արժանաւոր որդի, նման) Անտիոքայ անօրէն զաւակի, ցուցցուք համառօտ որ ինչ անցք ընդ քաղաքն անցանէին:

Իբրև առ Թագ Անտիոքոս, կացոյց ի վերայ իրացն արքունի կողմանցն սարին Սորւոյ և Տաճկաստանի զԼիսիաս և զՊտղոմէոս՝ որում բարձրանձն ասէին, զիրաւունս հաստատուն պահէր առ եբրայեցիս վասն ուխտին եղելոց և իրաւանցն զրկելոց ջանայր խաղաղուԹեամբ անցանել (վարուիլ): Վասն այսորիկ ամբաստան լինէին զնմանէ ընկերքն իւր առ Անտիոքոս, և մատնիչ կոչէին զնա յայն սակս, զի կողմանքն Կիպրացւոց ի ձեռն էին նորա ի Փիղոմետորայ հրամանէ. Թող ըզնա և եկն առ Անտիոքոս. նա իբրև ոչ համբերէր նախատանացն, դեղս առ ան-

ձամբ իւրով (իր ձեռքով) և մեռաւ ։ Գորգեա զօրավար վայրացն զօրաժողով լինէր Իդումայեցւովքն հանդերձ, հասանել՝ հարկանել, խուզել (թալան-վրայ ընել, խառնել) զամուր ամուր կողմանսն ։ Ընդ ելանէին ընդ ելուզանէին փախուցանել զնոսա յԵրուսաղեմէ, գունդ գործէին, մարտի պատրաստէին ։ Իսկ որ զՄակաբայեցւոյն էին (ջուհուդները) խնդրուածս առ Աստուած առնէին, օգնական ի ձեռն կոչէին . զի ինքեանք կանխեսցեն (առաջ ըլնէն) հարկանել զամուրսն Իդումայեցւոց ։ Իբրև եկին հասին պատեցին, խումբ արարին, առ հասարակ ի վերայ յարձակեցան, զամուրսն փլուցին, հարին կոտորեցին, զոր ի ձեռն առին (ձեռքերնին բռնածը) առ հասարակ սատակեցին ։ Այն ոմանք որ փախստեայ գնացին, և եկին ամրացան ի բերդս երկուս ամուրս, և նոքա ընդ իւրեանս ունէին զամենայն կահ մեքենայից, շուրջ պահ եդին, և զմեքենայսն առ պարիսպն կանգնեցին ։ Եւ Մակաբէոս եթող ի վերայ բերդին զՇիմոն, և զՅովսէփ, և զԶաքէ, և որ ընդ նոսա



զօրք էին*, վասն բերդիցն պաշարման, և ինքն գնաց ։ Իսկ Շիմոնեանքն որ զբերդաւն նստէին (բերդը պաշարած էին) ի պատգամս անկանէին (բանագնացութիւն ըրին, խօսք տալ առնել), կաշառագնաց լինէին (կաշառք առնել, կաշառքէն առնել) առնուին յամբարականաց անտի եօթն բիւր սատեր արծաթոյ (ակչէ), և թողուին նոցա ելանել ափռել (փախչիլ) յամրոցաց անտի ։ Իբրև ազդ եղև (իմացաւ) Մակաբեայ վասն իրացն որ եղեն, ժողովէր զիշխանսն ամենայն . ամբաստան լինէր (ամբաստանութիւն կ՚ընէր, դատ բանալ) յայս առնէր՝ զի արծաթոյ վաճառեցին զեղբարսն, և արձակեցին զթշնամիսն ։ Զայնսիկ որ այնպէս մատն եղեն օրինացն (մատնեցին), ածին սատակեցին զնոսա . և ինքեանք ի բերդն արշաւեցին . հասին պատեցին պաշարեցին, զի յաջողումն ի ձեռն նորա լինէր . և յայնմ աւուր կոտորեցին աւելի քան

* Երբեմն յարաբերեալը յարաբերականին հոլովովը կը դրուի փոխանակ ըսելու Զօրքն որ ընդ նոսա էին, կ՚ըսուի, Որ ընդ նոսա զօրք էին ։

զքաւն Հազոր։ Եւ Տիմոթէոս որ յառաջ ի պարտութիւն մատնեցաւ (յաղթուեցաւ) ի ձեռաց Եբրայեցւոցն, դարձեալ զբ-ւարթանայր. դարձեալ զօրաժողով լինէր յօտարակողմն կուսաց (օտար սահմաններէ). բազում զայրուձի զասխացւոցն կուտեալ (ժողովելով) ի միոջ եդեալ՝ գայր ի մէջս նիզակաց վարել ի գերութիւն զերկիրն Հրէաստանի։ Իսկ որ զՄակաբայեցւովքն էին, ընդ մերձենալ նոցա ի խնդրուածս մնդէին առ Աստուած (Բոլոր սրտով աղաղակել). հող ի գլուխ քրձազգած (չուալ, չուլ հագ-նել) լինէին. առաջի սեղանւոյն անկեալ պաշտպանձանօքն թուայէին, խնդրէին յայսմ հետէ հաշտ լինել ընդ նոսա (Միաբանել) վանել զթշնամիս նոցա. հակառակ կալ ընդ հակառակորդս նոցա. և զամենայն ա-զօթս որպէս օրէնքն հրամայէին՝ աղաչէին։ Իբրև զաղօթսն կատարեցին՝ առ հասա-րակ ի զէն դարձան, վառեցան, կազմե-ցան, պատրաստեցան, հարուստ մի ըստ քաղաքն արտաքս ելին. իբրև մերձ եղեն ի գունդն թշնամեաց, կարգեցան կազ-մեցան օրինօք ճակատեցան։ Այն ինչ վար-



դադոյն ծայրակարմիր արեգակն ընդ եր-կիր ծաւալել կամէր, և նոքա կողմանքն եր-կոքին ընդ միմեանս խառնէին։

Բ. Մակ. Գլ. Ժ.

Այլ Թագաւորն իբրև դարձաւ ի կողմանցն Կիւլիկեայ առաջի անկանէին (Բոլոր կ՚իյնէին) ի քաղաքաց քաղաքաց Եբ-րէայքն և հեթանոսք սրտացաւութեամբ վասն առնն զուր մեռելոյ տարապար-տուց կորուսելոյ։ Յայնր վերայ սրտի մը-տօք (սրտանց) Անտիոքոս գժգմեցաւ (ցա-ւեցաւ), ի գութ դարձաւ և արտասուեաց յոյժ ի վերայ սրբութեան և բազում ի-մաստութեան առնն, և ջեռաւ բորբոքե-ցաւ (տաքէն կատղեցաւ) ի սրտմտութիւնն բարկութեան իւրոյ. և անդէն հրամայ-եաց զգլխով ածել (Մերկացընել) զծիրանիսն Անդրոնիկեայ. և զԱնդրոնիկոս մերկաց-եալ ի հանդերձէ իւրմէ, շուրջ ածեալ զքաղաքաւն, և ի նմին տեղւոջ ուր զՕնի-այն անօրինեցին՝ (անիրաւաբար մեռցնել) հրամայեաց զկառափն հարկանել (գլխա-տել) զանօրէն մահապարտն։ Իբրև բա-զում գաղտագողնք լինէին (գողութիւն

նըլըր) գտանձին ի ձեռն Խուսիմարեայ Մեներլեայ խորհրդով. և համբաւն ի դուրս յաճախէր (հայն դուրս ելնել. իմացուել), ժողովեցան զօրքն ի վերայ Խուսիմարեայ, քանզի բազում նուագս ակնս կորուսեալ (զոր. գտանելին) ի միջոյ համարուէն (հաշուէն):

Իբրև սկսան զօրքն տագնապել (նեղը գել), և ըստ բարկութեան ի վերայ յարձակել. վառեցոյց Խուսիմարոս արս իբրև երիս հազարս. սկսաւ ձեռն ի գործ արկանել. և սկիզբն առնել գործոյն չարութեան. արամբ միով որ խուժադուժ էր տեսանելով (դէմքէն աւելի կատաղի բարբարոս կերպար). քան զմնօքն թանձրութեան (ցիմարութիւն, ապշութիւն): Իբրև տեսին զԽուսիմարեայ զղջաւն և զնենգութիւն որ եղև՝ խառնեցան վաղվաղակի ձեռն ի գործ առնէին, ոմն վէմս, ոմն վիրգս (գաւազան, փայտ), կէտքն զաւաղն զխիձն հողախառն առ հասարակ յարկանելոյն ի վերոյ արկանէին:

Ի. Մոն. Գւ. Դ.

[illegible]

20131452

ՀՀ Ազգային գրադարան
NL0059095